









# Բ. ԱՏԱԼԻՆ


ԱՅՈՒԹԵԱՆ Է 1961 թ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՑԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՇՎ ԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՄ Կ (Բ) Կ XV  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • 1937 • ԵՎՐԵԱԿԱՆ

Ար -



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒՆՐԻ, ՄԻԱՅՆ



Ե. ԱՏՎԱԼԻՆ

3KN1-11  
u

ԱՏԽԻԳՎԱԾ Է 1961 թ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱ Կ (Բ) Կ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՅԵՎ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ  
1927 թ. ԴԵԿՏԵMBERԻ 3—7



ՀԱՅԿՈՒՍՏՐԱԾ • 1937 • ՑԵՐԵՎԱՆ

A II  
6952

И. СТАЛИН  
ПОЛИТИЧЕСКИЙ ОТЧЕТ ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА  
XV СЪЕЗДУ ВКП(б)

Армпартииздат, Ереван, 1937

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄ Կ (Բ) Կ  
XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՃՈՂ ՃԳՆԱԺԱՄԸ  
ՅԵՎ ԽՍՀՄ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերնե՛ր, մեր յերկերն ապրում ու զարգանում ե կապիտալիստական շրջապատման պայմաններում։ Նրա արտաքին դրությունը կախված է վո՛չ միայն իր ներքին ուժերից, այլև այլ կապիտալիստական շրջապատման վիճակից, մեր յերկերը շրջապատղով կապիտալիստական յերկերների դրությունից, դրանց ուժից ու թուլությունից, ամբողջ աշխարհի ճնշված դասակարգերի ուժից ու թուլությունից, այդ դասակարգերի հեղափոխական շարժման ուժից ու թուլությունից։ Ել չեմ խոսում այն մասին, վոր մեր հեղափոխությունը ճնշված դասակարգերի միջազդային հեղափոխության մի մասն և։ Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր Կե-ի հաշվետվությունը պետք է սկսվի մեր յերկերի միջազդային դրության ուրավագծումից, կապիտալիստական յերկերների դրության և բոլոր յերկերների հեղափոխական շարժման վիճակի ուրավագծումից։

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ  
ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՊՎՈՂ ԿՈՎԻ ՍՐՈՒՄԸ

ա) Առաջին հարցը՝ դա կապիտալիստական խոշորագույն յերկերների արտադրության ու առևտրի վիճակն է։

Ընկերնե՛ր, Հիմնական փաստն այդ բնադրավառում այն է, վոր կապիտալիստական յերկերների արտադրությունն այս յերկու տարում, հաշվետվության ժամանակաշրջանում, անցել ե նախա-

պատերազմյան նորմաներից, առաջ ե անցել նախազատերազմյան նորմաներից : Ահա միքանի տվյալներ այս մասին : Չուզունի համաշխարհային արտադրանքի ինդեքսը 1925 թվականին՝ կազմում եր նախազատերազմյանի 97,6 տոկոսը, 1926 թվականին՝ արդեն 100,5 տոկոսը : 1927 թվականի համար լրիվ տվյալներ չկան, կան տվյալներ առաջին կիսամյակի համար, վորոնք չուզունի արտադրության հետագա աճման մասին են խոսում : Պողպատի համաշխարհային արտադրանքի ինդեքսը 1925 թվականին՝ կազմում եր նախազատերազմյանի 118,5 տոկոսը, 1926 թվականին՝ 122,6 տոկոսը : Ածխի համաշխարհային արտադրության ինդեքսը 1925 թվականին կազմում եր նախազատերազմյանի 97,9 տոկոսը, 1926 թվականին տեղի յե ունենում վորոշ անկում—96,8 տոկոսը : Ակնհայտ ե, վոր այստեղ անդիքական դորժադրութիւն ազգեցությունն ե արտահայտվում : Բամբակի համաշխարհային սպառումը 1925—1926 թ. նախազատերազմյանի 108,3 տոկոսն ե, 1926—27 թ.՝ 112,5 տոկոսը : Հացի հինգ տեսակների համաշխարհային բերքը 1925 թվականին նախազատերազմյանի 107,2 տոկոսն ե, 1926 թվականին՝ 110,5 տոկոսը, 1927 թվականին՝ 112,3 տոկոսը :

Համաշխարհային արտադրության ընդհանուր ինդեքսն այսպես դանդաղ կերպով, մանր քայլերով ե առաջ ընթանում, անցնելով նախազատերազմյան մակարդակից :

Բայց դրա փոխարեն կան կամբաւալիտուական միքանի յերկիրներ, վորոնք վո՛չ թե զնում, այլ վոստնում են դեպի առաջ, իրենց հետևում թողնելով նախազատերազմյան մակարդակը, որինակ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու մասմբ ձապոնիան : Հյուս . Ամեր . Միաց . Նահանգներին վերաբերող տվյալները, մշակող արդյունաբերության աճումը 1925 թվականին՝ նախազատերազմյանի 148 տոկոսն ե, 1926 թվականին՝ 152 տոկոսը . արդյունահանող արդյունաբերության աճումը 1925 թվականին՝ նախազատերազմյանի 143 տոկոսն ե, 1926 թվականին՝ 154 տոկոսը :

Համաշխարհային առևտրի աճումը : Համաշխարհային առևտուրն այսպես արագ չի ընթանում, ինչպես արտադրությունը . սովորաբար նա արտադրությունից հետ ե մնում, բայց և այսպես մոտեցել ե նախազատերազմյան նորմային : Արտաքին ապրանքաշրջանառության ինդեքսն ամբողջ աշխարհում և կարեռագույն յերկիրներում 1925 թվականին՝ նախազատերազմյանի

98,1 տոկոսն ե, 1926 թվականին՝ 97,1 տոկոսը։ Հսու առանձին յերկերների հայութային Ամերիկայի Միացյալ Նահանգներ—1925 թվականին նախապատերազմյանի 134,3 տոկոսն ե, 1926 թվականին՝ 143 տոկոսը. Գրանսիա—98,2 տոկոսն ու 99,2 տոկոսը. Գերմանիա—74,8 տոկոսն ու 73,6 տոկոսը. Ճապոնիա—176,9 տոկոսն ու 170,1 տոկոսը։

Համաշխաղհային առևտուրն ընդհանուր առմամբ ու ամբողջությամբ արդեն մոտեցել ե նախապատերազմյան նորմային, իսկ միքանի յերկերներում, որինակ, Հյուսիսային Ամերիկայում ու Ճապոնիայում, արդեն՝ անցել ե նախապատերազմյան նորմաներից։

Վերջապես, յերրորդ շարքն այն փաստերի, վորոնք խոսում են կապիտալիստական արդյունաբերության տեխնիկական առաջադիմության, ուստի արդյունաբերության նոր ձյուղեր ստեղծվելու, միջազգային մասշտաբով արդյունաբերության տրեստացման ուժեղանալու, կարտելացման ուժեղանալու մասին։ Կարծում եմ, վոր այս փաստերն ամենքին հայտնի յեն։ Ուստի յես չեմ ընդարձակարանի այդ մասին։ Կնշեմ միայն, վոր կապիտալին առաջադիմել ե վո՛չ միայն արտադրանքի աճման դժով, ինչպես և առևտորի դժով, այլ նմանապես արտադրության տեխնիկայի բարելավման ընադալառում, տեխնիկական առաջադիմության ընադալառում, արտադրության ուսցիոնացման բնագավառում, ընդամենի այդ ամենը տարել ե դեպի խոչորագույն տրեստների հետաղա ուժեղացումն ու մոնոպոլիստական նոր հզոր կարտելների կազմակերպումը։

Ահա, ընկերներ, փաստեր, վորոնք հարկավոր ե նշել և վորոնցից պետք ե յենել։

Այս ամենն արդյոք նշանակում է, թե դրանով իսկ կապիտալիզմի ստարիլիզացիան դարձել է հաստատուն, կայուն։ Իհարկե, վո՛չ։ Դեռ ԽIV համագումարում տրված զեկուցման մեջ եր ասվում, վոր կապիտալիզմը կարող է հասնել նախապատերազմյան նորմային, կարող է անցնել այդ նախապատերազմյան նորմայից, կարող է սացիոնալացման յենթարկել իր արտադրությունը, բայց վոր դա գեռ չի նշանակում, ամենելին ել չի նշանակում, թե կապիտալիզմի ստարիլիզացիան դրանից կարող է հաստատուն դառնալ, թե կապիտալիզմը կարող է վերադարձնել իրեն նախապատերազմյան վաղեմի կայունությունը։ Ծնդհակառակը, հենց ստարիլիզացիայից, այն հանդամանքից, վոր արտա-

2. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ, ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

ա) Այս կապակցությամբ աշխարհի և արտաքին շուկաների Հիմքը ներկայացնող ազգեցության վոլորտների վերաբաժանման հարցը համաշխարհային կապիտալիզմի քաղաքականության մեջ այժմ հիմնարկան հարց և հանդիսանում: Յես արդեն ասացի, վոր իմպերիալիստական վերջին պատերազմի հետևանքով՝ սահմանված՝ դաղութների ու ազգեցության վոլորտների այժմյան բաշխումն արդեն իսկ հնացել է: Այն այժմ չի բավարարում վո՛չ Հյուսիսային Ամերիկային, վորը ջանում և արմատավորվել Ասիայում (նախ և առաջ Չինաստանում), չբավարկանանալով Հարավային Ամերիկայով, վո՞չ Անդիլիային, վորի ձեռքից գուրս են գալիս դամբնինիներն ու Արևելքի մի շարք կարևորագույն շուկաներ, վո՞չ ձավոնիային, վորին Չինաստանում շարունակ «խանգարում են» Անդիլան ու Ամերիկան, վո՞չ Խտալիային ու Ֆրանսիային, վորոնք անթիվ քանակությամբ «վեճի առարկաներ» ունեն ինչպես Մերձանուքյան յերկիրներում, այնպես ել Մեծերկրական ծովում, վո՞չ ել առավել ես Գերմանիային, վորը մինչեւ այժմ մնում և առանց գաղութների: Այստեղից՝ «ընդհանուր» ձգտումը գեղի շուկաների և հումքի աղբյուրների նոր վերաբաժանումը: Հարկ չկա ասպացուցելու, վոր սպայքարի վլսավոր ասպարեզն ասիսկան շուկաներն են ու դեպի գրանք տանող ուղիները: Այստեղից՝ մի շարք հանգուցային պրոբլեմներ, վորոնք ամրող ոչափնիներ են հանդիսանում նոր ընդհարումների համար: Այստեղից՝ այսպես կոչված թաղաղովկիանոսյան պրոբլեմը (Ամերիկա—ձավոնիա—Անդիլա հակամարտությունը), վորպես Ասիայում և դեպի այն տանող ուղիներում առաջնության համար մղվող պայքարի աղբյուրը: Այստեղից՝ Միջերկրական ծովի պրոբլեմը (Անդիլա—Ֆրանսիա—Խտալիա հակամարտությունը), վորպես Միջերկրական ծովի ափերին գերակշող դիրք ունենալու համար մղվող պայքարի աղբյուրը, վորպես դեպի Արևելք տանող ամենակարճ ուղիների համար մղվող պայքարի աղբյուրը: Այստեղից՝ նավթի պրոբլեմի սրումն (Անդիլա—Ամերիկա հակամարտությունը), վորովհետեւ առանց նավթի չի կարելի պատերազմել, իսկ ով առավելություն ունի նավթի գործում, նա գալիք պատերազմի մեջ ունի հաղթության շանսեր:

Նորերս անդլիական մամուլում հրապարակվեց Զեմբերլենի «վերջին» պլանը Միջերկրական ծովի պրոբլեմը «Հարթելու» մասին: Յետ չեմ կարող յերաշխավորել այդ պլանի հավաստիությունը: Բայց վոր մամուլում Զեմբերլենի պլանի յերեսումը նախանշան է հանդիսանում, այդ մասին տարակույս լինել չի կարող: Երա, այդ պլանի եյտությունն այն է, վոր Սիրիայի նկատմամբ «մանդատը» նա ֆրանսիայի ձեռքից հանձնում և իտալիայի ձեռքը, Տանժերը արվում ե ֆրանսիային ի գիմաց իսպանիայի ողտին կատարելիք Փինանսական փոխհատուցման, Կամերունը վերադարձնում և Գերմանիային, Իտալիան պարտավորվում և գաղարել Բալկաններում «խլրտալուց» և այլն: Այս ամենը Խորհուրդների գեմ պայքարելու դրոշակի տակ: Հայտնի յէ, վոր այժմ առհասարակ վոչ մի ստորություն չի ձեռնարկվում՝ առանց Խորհուրդները կեղտոտ զործին խառնելու: Սակայն ի՞նչն ե այդ պլանի իրական իմաստը: Պլանի իմաստն այն է, վոր Փրանսական բուրժուազիան վտարվի Սիրիայից: Սիրիան հնուց դուռ և հանդիսացել գետի Արևելք, Միջադեմք, Յեղիպատոս և այլն: Սիրիայից Անդլիային վնասել կարելի յէ և՛ Սուեդի ջրանցքի շրջանում, և՛ Միջադեմքի շրջանում: Յեւ ահա Զեմբերլենն, ըստ յերեսությին, կամենում ե վերջ տալ այդ անդուրեկան բանին: Ինչ տաել կուղի, վոր մամուլում այդ պլանի յերեման փաստը չի կարելի պատահականություն անվանել: Այդ փաստի արժեքն այն է, վոր նա տալիս ե այն զղղոցի, այն կոնֆլիկտների ու ռազմական ընդհարումների վառ բնութագիրը, վորոնցով հղի յեն այսպես կոչված «մեծ պետությունների» այժմյան հարգերությունները:

Ինչ վերաբերում ե նավթի պրոբլեմի և նավթի շուրջը մղվող պայքարի այժմյան վիճակին, ասպա ամերիկական հայտնի ժուռնալու «Ռուրլու Ռուրլը» իր հոկաեմբերյան համարում այդ մասին բավականին պերճախոս կերպով ասում է.

«Խաղաղության և անդլո-սաքսոնական ժողովուրդների փոխադարձ կերպով միմյանց հասկանալու դեմ գոյությունը ունի խիստ իրական սպառնալիք... Մինխստրության կողմից ամերիկական գործարար, մարդկանց աջակցելն անխուսակելուրեն ուժեղանալու յէ այն չափով, վորչափով վոր աճելու յէ զրա կարիքը: Յեթե բրիտանական կառավարությունն իրեն նույնացնի բրիտանական նավթային արդյունաբերության հետ, ասպա վաղ թե ուշ ամերիկական կառավարու-

թյունն իրեն կնույնացնի ամերիկական նավքային արդյունաբերության հետ։ Պայքարը չի կարող անցնել կառավարությունների բնադալառը, չափազանց չմեծացնելով պատերազմի վտանգը»։

Տարակույսներն անհնարին են. զործն ընթանում և դեպի պետությունների նոր կոռալիցիաների կազմակերպում, վորենապատակն և արտաքին շուկաների համար, հումքի ազբյուրների համար, դեպի այդ աղբյուրները տանող ուղիների համար նոր պատերազմներ նախապատճենություններ։

թ) Հաշվետու ժամանակաշրջանում յեղե՞լ են արդյոք հաշունացող ռազմական կոնֆլիկտները «խաղաղ կերպով հարթելու» փորձեր։ Այս՝, յեղել են։ Նրանք ավելի յեն յեղել, քան թե կարելի յեր սպասել։ Բայց նրանք վոչ մի, բացարձակորեն վոչ մի հետևանքի չեն բերել։ Դեռ ավելին. այդ փորձերը սոսկ քողարկումն հանդիսացան «պետությունների»՝ նոր պատերազմների համար կատարվող նախապատճառատական աշխատանքի, մի քողարկում, վորի նորատակը բանվորներին ու դյուզացիներին իարեն ե։

Վերցնենք Աղդերի Լիդան, վոր, բուրժուական ստախոս մամուլի և սոցիալ-դեմոկրատական վոչ պակաս ստախոս մամուլի կարծիքով, խաղաղության գործիք և հանդիսանում։ Ինչի՞ հասցեց Աղդերի Լիդայի շաղակրատանքը խաղաղության, դինաժաման, սպառագիւնումների կրծատման հարցի չուրջը։ Վոչ մի լավ հետևանքի, բացի մասսաներին խարեւուց, բայցի զինման նոր բռնկումներից, բացի հասունացող կոնֆլիկտների նոր սրումից։ Մի՞թե պատահականություն կարելի յէ համարել այն փաստը, վոր Աղդերի Լիդան յերեք տարի շաղակրատում և խաղաղության ու զինաթափման մասին, այդ ստահող չաղակրատանքին յերեք տարի աջակցում և այսպես կոչված II հնտերնացիոնալը, իսկ «աղդերը» շարունակ զինվում ու զինվում են, ընդլայնելով «պետությունների» միջև յեղած հին կոնֆլիկտները, նոր կոնֆլիկտներ կիսելով և այսպիսով խարխլելով խաղաղության պործի հիմքը։ Ինչի՞ մասին ե խոսում ծովային սպառագիւնումները կրծատելուն նվիրված յեռյակ կոնֆլիկտների (Անդիսա, Ամերիկա և Ճապոնիա) տապալումը, յեթե վոչ այն մասին, վոր Խաղաղովկիանույան պրոբլեմն իմպերիալիստական նոր պատերազմների աղբյուր և հանդիսանում, վոր «աղետությունները» վո՞չ զինաթափմել են ուզում, վո՞չ ել զինումները կրծատել։ Ի՞նչ

և արել Ազգերի Լիդան, վորակեսզի այդ վտանգի առաջն առնի : Կամ վերցնենք, որինակ, խորհրդային պատվիրակության նորերս ժընեռում ունեցած յելույթները իրական (և վոչ թե զեկորատիվ) պինաթափման հարցի շուրջը : Ինչո՞վ բացատրել այն փաստը, վոր ընկեր Լիտվինովի շխտակ ու աղնիվ դեկլարացիան լիալատար զինաթափման մասին կաթվածի յենթարկեց Սզգերի Լիդային և նրա համար «լիտատար անսպասելիություն» դուրս յեկալ : Այս փաստն արդյոք չի՝ խոսում այն մասին, վոր Ազգերի Լիդան վո՞չ թե խաղաղության ու զինաթափումների դրծիք և, այլ նոր սպառազինումներն ու նոր սպատերազմների նախապատրաստումը քողարկելու դրծիքը : Բոլոր յերկիրների բուրժուական ծախոված մամուլը՝ ձարպնիայից մինչև Անդլիա, Ֆրանսիայից մինչև Ամերիկա՝ ամբողջ կոկորդով ճշում է զինաթափման խորհրդադային առաջարկների «վոչ-անկեղծության» մասին : Իսկ ինչո՞ւ այդպիսի գեղքում չստուգել խորհրդային առաջարկների անկեղծությունը և ինչո՞ւ այժմ իսկ գործնականորեն ձեռնամուխ չլինել զինաթափմանը կամ գոյնե սպառազինումների լուրջ Ֆրանսիամբ : Ի՞նչն է խանգարում դրան : Կամ, որինակ, կապիտալիստական պետությունների «բարեկամության պայմանագրերի» այժմյան սիստեմը, ֆրանսիայի պայմանագիրը Հարավսլավիայի հետ, իտալիայի պայմանագիրն Ալբանիայի հետ, Պիւսուղուու կողմից նախապատրաստվող՝ «բարեկամության պայմանագիրը» ԵւՀաստանի ու Լիտվայի միջև, «Լոկարնոյի սիստեմը», «Լոկարնոյի վողին» և այլն, — ի՞նչ ե սա, յեթե վոչ նոր սպատերազմների նախապատրաստման ու սպատերազմական առաջա ընդհարումների համար ուժերի դասավորման սիստեմ : Կամ, որինակ, վերցնենք հետեւյալ փաստերը . 1913 թվականից մինչև 1927 թ. Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Հյուսիս-Ամերիկայն Միացյալ Նահանգների, Ճապոնիայի գորարանակների մարդկանց քանակը 1888 հազարից աճել է մինչև 2 262 հազար . նույն այդ ժամանակաշրջանում այդ իսկ յերկիրների ուղղմական քյուշեները 2 345 միլ. վոսկի ոռոքուց աճել են մինչև 3 948 միլիոն . շաբաթում գտնվող ինքնարիոների թիվը այդ հինգ յերկիրներում 1923 թվականից մինչև 1927 թ. աճել է 2 655-ից մինչև 4340 . այդ հինգ պետությունների հածանավերի տոննամը 1922 թիվ 724 հազար տոննից աճել է մինչև 864 հազար տոնն 1926 թ., ուղղմաբիշիական գործի գրությունը նկարազարդվում է Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգների ուղղմաբիմիական ծառայու-

թյան պետ դեն . Ֆրեյսի հետեւյալ հայտարարությամբ . «Լյուի-զիտովլ լցված , 450 կիլոգրամ քաշ ունեցող մեկ տերողիմիական ռումբը կարող է անմարդաբնակ դարձնել նյու-Յորկի տասը թաղամաս , իսկ 50 ինքնաթիրուից վար նետված 100 տոնն լցուիդիալ կարող է անմարդաբնակ դարձնել ամբողջ Նյու-Յորկն առնվազեմի շաբաթով» : Ինչի՞ մասին են խոսում այս փաստերը , յեթե վոչ այն մասին , վոր նոր պատերազմների նախասառատրաստումն ընթանում և ամբողջ թափով :

Սրամնը են ընդհանրապես բուրժուական պետությունների , առանձնապես Ազգերի Լիդայի «իսաղաղության քաղաքականության» ու «զինաթափման» քաղաքականության , մասնավորապես սոցիալ-դեմոկրատիայի՝ կապիտալին քսու կերպով սպասավորելու արդյունքները :

Սպառապինումների աճումն առաջ արդարացնում է յին վոտքից մինչև գլուխ սպառապեն Գերմանիայի առկայությամբ : Այժմ այդ «արդարացումը» վերանում է : Մի՞թե սպարզ չե , վոր սովորակինումների աճումը թելադրվում է լոմպերիալիստական նոր պատերազմների անխուսափելիությամբ «պետությունների» միջեւ , վոր «պատերազմի վոդին» «Լոկարնոյի վոդու» հիմնական բովանդակությունն և հանդիսանում :

Ես կարծում եմ , վոր այժմ յան «խաղաղ հարաբերությունները» կարելի կլիներ նմանեցնել հին մաշված չաղկի , վոր կաղմված և բարակիկ թելիկով իրար կապված կարկատաններից բավական և միայն ավելի կամ պակաս լրջորեն քաշես այդ թելիկը , այն կտրես այս կամ այն տեղում , վորպեսզի ամբողջ շապիկը քայքայիլի , վորպեսզի նրանից վոչինչ չմնա , բացի կարկատաններից : Բավական և վորևէ տեղում՝ Ալբանիայում կամ Լիտվայում , Զինաստանում կամ Հյուսիսային Ամերիկայում ցնցես այժմ յան «խաղաղ հարաբերությունները» , վորպեսզի փլեւ ամբողջ «խաղաղ հարաբերությունների շենքը» : Բանն այդպես եր իմպերիալիստական վերջին պատերազմից առաջ , յերբ Սարայելոյում կատարված սպանությունը 'տարալ դեպի պատերազմ : Ալդպես և բանը հիմա :

Ստաբիլիզիցիայից աճում և իմպերիալիստական նոր պատերազմների անխուսափելիությունը :

Հ. ՀԱՄԱԾՆԱԲՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԻՃԱԿՆ  
ՈՒ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՆԱԽԱԳՈԽԾԱԿՆԵՐԸ

ա) Պատերազմ մղելու համար բավական չե սպառազինում-ների աճումը, բավական չե նոր կուպեցիաների կազմակերպումը: Դրա համար անհրաժեշտ է նաև թիկունքի ամրապնդումը կապիտալիզմի յերկիրներում: Վոչ մի կապիտալիստական յերկիր չի կարող լուրջ պատճեազմ մղել, նախագես չամրապնդելով իր սեփական թիկունքը, չանձահարցելով «իր» բանվորներին, չանձահարելով «իր» գաղութները: Այստեղից՝ բուրժուական պետությունների քաղաքականության աստիճանական ֆաշիզացիան: Զի կարելի պատահականություն անվանել այն փաստը, վոր Ֆրանսիայում այժմ տիրապետում է աջ բլոկը, Անդլիայում՝ Հիքո-Դետերդինդ-Ռեքիվարումի բլոկը, Գերմանիայում՝ բուրժուական բլոկը, Ճապոնիայում՝ զինվորական կուսակցությունը, Իտալիայում և Լեհաստանում՝ ֆաշիստական կառավարությունները:

Այստեղից՝ բանվոր գասակարգին սեղմելը, արհմիությունների որևէնքն Անդլիայում, «աղջի զինման» որենքը Ֆրանսիայում, 8-ժամյա աշխատորմա վերացումը մի շարք յերկիրներում, բուրժուազիայի հարձակումը պղուետարիատի գեմ ամենուրեկը:

Այստեղից՝ գաղութների ու կախալ յերկիրների ճնշման ուժեղացումը, այդ յերկիրներում իմակերիսալիստական զորքերի կազմի ոսեղացումը, վորոնց թիվը միլիոնի յե հասում, ընդումին նրանցից ավելի քան 700 հազար զինվոր տեղափորված են բրիտանական «աղջիցության վոլորտներում» ու «տիրապետություններում»:

բ) Դժվար չե հասկանալ, վոր Փաշիզացված կառավարությունների այդ գաղանային ճնշումը չեր կարող մնալ առանց գաղութների կեղեքված ժողովուրդների և մետրոպոլիաների բանվոր դասակարգի պատասխան-շարժման: Այնպիսի փաստերը, ինչպես հեղափոխական շարժման աճումը Զինաստանում, ինդոնեզիայում, Հնդկաստանում և այլն, չեն կարող վճռողական նշանակություն չունենալ համաշխարհային իմակերիսալիզմի ճակասագրի համար: Ինքներդ դատեցեք: Ամբողջ յերկրագնդի 1905 միլիոն բնակչությունից 1134 միլիոնն ապրում ե գաղութներում ու կիսադաշտութներում, 143 միլիոնն ապրում ե ԽՍՀՄ-ում, 264 միլիոնը՝ մեջակա յերկիրներում և միայն 363 միլիոնը՝ իմակերիսալիստական խոշոր յերկիրներում, վորոնք ճնշում են գաղութներին:

ու կիսագաղութները : Պարզ է, վոր գաղութային յերկիրների հեղափոխական զարթոնքը նախադաշտակում և համաշխարհային խմբերի ալիքում վախճանը : Այն փառուը, վոր չինական հեղափոխությունը դեռևս ուղղակի հաղթանակ չի տարել իմ պերիալիդ-մի վրա, այդ փաստը չի կարող վճռողական նշանակություն ունենալ հեղափոխության հետանկարների խմատով : Ժողովրդական մեծ հեղափոխություններն առհասարակ յերեք մինչեւ վերջը չեն հաղթում իրենց յերւայթների առաջին տարում : Նրանք աճում ու ամրապնդվում են մակընթացությունների և աեղաստվությունների կարգով : Այդպես և յեղել ամենուրեք, այդ թվուա՞ն նաև Ռուսաստանում : Այդպես կլինի Զինաստանում : Զինական հեղափոխության ամենակարևոր արդյունքն այն փաստն է, վոր նա դարձուր նիբահից արթնացրեց և շարժման մեջ դրեց հարյուրավոր միլիոն շահագործվողներ ու ճնշվածներ, ամբողջապես մերկացրեց գեներալական կլինների հակահեղափոխության գոմինդանական քու սպասավորների գիմակը, ամրապնդեց կոմունիստական կուսակցության հեղմակությունը ժողովրդական ստորին խավերում, ամբողջությամբ վերցրած շարժումը բարձրագույն ստագիայի հասցրեց, խորհուրդների կազմակերպման ստագիայի, և նոր հույսեր արթնացրեց Հնդկաստանի, Բնակնեղիայի և այլնի ճնշված դաստիարակների միլիոնների մեջ : Միայն կույրերն ու փոքրութիւնները կարող են տարակուսել այն մասին, վոր չինական բանվորներն ու դյուզացիները զնում են դեպի հեղափոխական նոր վերելք :

Ինչ վերաբերում ե Յելբոպայի բանվոր դաստիարգի հեղափոխական շարժման, ապա այստեղ ել, այս բնագավառում և այնք ունենք բանվորական ստորին խավերի ձախացման ու հեղափոխական աշխատացման ակներեւ նշաններ : Այնպիսի փաստեր, ինչպես անդիմական ընդհանուր և ածխահատների գործադրություններն են, բանվորների հեղափոխական յելտյիլը վիճննայում, Սակկոյի և Վանցետոիի սպանության կապակցությամբ կազմակերպված հեղափոխական ցույցերը Ֆրանսիայում և Գերմանիայում, գերմանական ու լեհական կոմկուսակցությունների ընտրական հաջողությունները, Անդիմայում բանվորական շարժման ակնհայտ շերտավորումը, վորի հետևանքով բանվորները զնում են դեպի ձախ, իսկ առաջնորդները՝ դեպի աջ՝ բացահայտ կերպով սոցիալ-խմբերի լուսականը ծոցը, Այնտերենացիոնալի այլասերումն ու Ազգերի իմալերի իսլամիստական լիդայի ուղղակի կցորդը

գառնալը, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հեղինակության անկումը բանվարի դասակարգի լայն մասսաների մեջ, Կոմինտերնի և նրա սեղկաների ազգեցության ու հեղինակության առումը բոլոր յերկիրների պրոլետարների շրջանում ամենուրեք, ԽՍՀՄ-ի հեղինակության աճումն ամբողջ աշխարհի ձևաված դասակարգերի մեջ, «ԽՍՀՄ-ի բարեկամների կոնգրեսը» և այլն, — այս բոլոր փաստերն, անտարակուսելիորեն, խոսում են այն մասին, վոր Յելբուզան հեղափոխական վերելքի նոր ըրչան և ժանում: Յեթե այնպիսի փաստը, ինչպես Սակոյի և Վանցետի սպանությունն ե, կարող եր առիթ ծառայել բանվոր դասակարգի ցույցերի համար, ապա դա, անտարակույց, խոսում է այն մասին, վոր բանվոր դասակարգի ընդերքում կուտակվել և հեղափոխական յեռանդ, վորն առիթ, չեպք, յերբեմն արտաքուստ ամենաանհանգ գեղակը ե վորոնում և վորոնելու յե, վորպիսի պատուի-դուրս պրծնի ու թափվի կապիտալիստական ռեժիմի վրա:

Մենք ապրում ենք հեղափոխական նոր յերելքի նախորյակ ինչպես գաղութներում, այնպես և մետրոպոլաներում:

Ստարիլիզացիայից աճում և հեղափոխական նոր վերելք:

#### 4. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՅԵՎ ԽԵՂՄ

ա) Այսպիսով, մենք ունենք համաշխարհային կառիտալիզմի խոչորակույն ճգնաժամի և աճող անկայունության բոլոր նշանները: Յեթե 1920/21 թ. հետպատերազմյան ժամանակակից ճգնաժամն իր քառոսվ կապիտալիստական յերկիրների ներսում ու կարերի քայլքայմբ նրանց գրսում՝ կարելի յե համարել վերացած, վորպիսի հանդամանքի հետևանքով ել յեկալ մասնակի ստարիլիզացիայի ժամանակաշրջանը, ապա կապիտալիզմի հիմնական ճգնաժամը, վոր ուրվագծվեց Հոկտեմբերյան հեղափոխության համբաւակի ու համաշխարհային կապիտալիստական սիստեմից ԽՍՀՄ-ի անջատվելու հետևանքով, վո՛չ միայն չի վերացած, այլ, ընդհակառակը, այլելի ու այլելի յե խորանում, առասանեցնելով համաշխարհային կապիտալիզմի դոյության բռն հիմքերը: Ստարիլիզացիան վո՛չ միայն չխանգարեց այդ հիմնական ճգնաժամի զարգացմանը, այլ, ընդհակառակը, հող և աղբյուր ալեց նրա հետագա զարգացման համար: Աճող պայքարը շուկաների համար, աշխարհի և ազգեցության վոլորտների նոր վերաբաժանման անհրաժեշտությունը, բուրժուական պացիֆիկ-

մի և Աղջերի լիդայի կրտիւը, ուստ պատերազմների առիթով նոր կուտիցիաներ ստեղծելու և ուժերը գասավորելու տենդային աշխատանքը, սպասազինումների կատաղի աճումը, բանալոր գառակարդի և գաղութային յերկիրների գաղանաբար ճնշումը, հեղափոխական շարժման աճումը դաղութներում ու Յելրուղայում, Կոմինտերնի հեղինակության աճումն ամբողջ աշխարհում, վերջապես, Խորհրդային Միության հղորության ամրապնդումն ու նրա հեղինակության ուժեղացումը Յելրուղայի բանվորների և գաղութների աշխատավոր մասսաների ըրջանում, —այս բոլորն այնպիսի փաստեր են, վորոնք չեն կարող չսասանեցնել համաշխարհային կապիտալիզմի բուն հիմքը:

Կապիտալիզմի ստաքիլիզացիան ավելի ու ավելի փտած ու անկայուն է դատիւմ:

Յեթե մի-յերկու ուսրի առաջ կարելի յեր և պետք եր խռովել հեղութոխական ալիքների տեղատվության մասին Յելրուղայում, սուսա այժմ՝ մենք բ'որ հիմքերն ունենք պնդելու, վոր Յելրուղան ակներկորեն մտնեմ և հեղափոխական նոր վերելքի ըրջան: Յես արդեն չեմ խոսում / դաղութային յերկիրների մասին, վորոնեղիմպերիալիստների դրությունն ավելի ու ավելի կատասրովիկի և գառնում:

բ) Փող յեկան կապիտալիստների հույսերը ԽՍՀՄ-ն ընտեղացներւ վերաբերմամբ, նրան կապիտալիստական վերասերմանն վերաբերմամբ, նրա հեղինակությունը Յելրուղայի բանվորներին և գաղութների աշխատավոր մասսաների մեջ ընկնելու վերաբերմամբ: ԽՍՀՄ-ն աճում ու գարգանում և հասկապես վորովես կոռոցվող սոցիալիզմի յերկիր: Նրա ազգեցությունն ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների ըրջանում աճում և և ամրապնդվում, ԽՍՀՄ-ի, վորպես կառուցվող սոցիալիզմի յերկիր, բուն գոյությունն իսկ համաշխարհային իմպերիալիզմի քայլքայման և ինչպես Յելրուղայում, այնպես ել գաղութներում նրա կայունության խարիսխման մեծադույն գործոններից մեկն և հանդիսանում: ԽՍՀՄ-ն ակներեւաբար դառնում և Յելրուղայի բանվոր դասակարգի և գաղութների ճնշմած ժողովուրդների դրոշը: Ուստի, վորպեսզի իմպերիալիստական ապակա սպատերազմների համար հող մաքրեն-պատրաստեն, ամելի հիմնավոր կերպով սեղմեն «իրենց» բանվոր դասակարգին ու ասնձահարեն «իրենց» դաղութները կապիտալիստական թիկունքն ամրացնելու նպատակով, —կապիտալիստներն ամենից առաջ պետք և սանձա-

Հաղուն ԽՍՀՄ-ին, հեղափոխության այլ ոջախն ու անկարանը, վոր գրա հետ մեկտեղ ներկայացնում եւ կապիտալիստական յերկիրների համար վաճառահանման մեծաղույն շուկաներից մեկը : Այստեղից՝ ինտերվենցիոնիստական տենդենցիների աշխուժացումը իմակերխալիստների չքանում, ԽՍՀՄ-ին մեկուսացնելու քաղաքականությունը, ԽՍՀՄ-ին չքանալատելու քաղաքականությունը, ԽՍՀՄ-ի գեմ պատերազմի համար պայմաններ նախապատրաստելու քաղաքականությունը :

Ինտերվենցիոնիստական տենդենցիների ուժեղացումը իմակերխականություն և պատերազմի սպառնալիքը (ԽՍՀՄ-ի վերաբերմանը) այժմյան դրության կիմսական փաստերից մեկն ե :

Կապիտալիզմի զարգացող ճգնաժամի պայմաններում ամենից ավելի տպանալիքի յենթակա և տուժած կողմ և հանդիսանում անդիմական բուրժուազիան : Նա եւ հենց ինտերվենցիոնիստական տենդենցիների ուժեղացման դործի նախաձեռնությունը իր վրա յեւ վերցրել : Պարզ է, վոր խորհրդացին բանվորների ողնությունն անդիմական ածխահատներին և ԽՍՀՄ-ի բանվոր դաստիարակի համակրանքը Զինաստանի հեղափոխական քարժմանը չեյին կարող յուղ ցցնել կրակի վրա : Այս բոլոր հանդամանելիքը վորոշեցին ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների խզումն Անդիմայի կողմից և մեր հարաբերությունների վատթարացումը մի շարք այլ պետությունների հետ :

գ) Այլ պատճառով կապիտալիստական աշխարհի և ԽՍՀՄ-ի հարաբերությունների մեջ յերկու տենդենցի՝ պատերազմական աղբեսսիայի տենդենցի (նախ և առաջ Անդիման) և խաղաղ հարաբերությունները շարունակելու տենդենցի (կապիտալիստական մի շարք այլ յերկիրներ) պայքարը Հիմնական վաստին և հանդիսանում տվյալ մոմենտին մեր արտաքին հարաբերությունների սխտեմում :

Փաստեր, վորոնք նշում են խաղաղ հարաբերությունների տենդենցը հաշվետու ժամանակաշրջանում, չսորձակիլելու պայմանագիրը թյուրքիայի հետ, յերաշխափորական պայմանագիրը Դերմանիայի հետ, մաքսային համաձայնությունը Հունաստանի հետ, համաձայնությունը Գերմանիայի հետ վարկերի մասին, ճանաչումը Ռւբուգլայի կողմից, յերաշխափորական պայմանագիրը Ավլանստանի հետ, յերաշխափորական պայմանագիրը Լիտվայի հետ, Լատվիայի հետ կնքած յերաշխափորական պայմանագիրի նախնական ստորագրումը, առեւտրական պայմանա-

դերը Թյուբքիայի հետ, Շվեյցարիայի հետ ունեցած կոնֆլիկտի կարգավորումը, չեղոքության սպայմանադիքը Պարսկաստանի հետ, հարաբերությունների բարելավումը ձապոնիայի հետ, Ամերիկայի և Իտալիայի հետ ունեցած տնտեսական էլապերի աճումը:

Փաստեր, վորոնք նշում են սպատերազմական ադրեսսիայի տեսդենցը հաշվետու ժամանակաշրջանում. անդվիական հայտադիրը զործադուլայիոր ածխահատներին վորային ողնություն ցույց տալու առթիվ, հարձակումը Պեկինում, Տյանցյանում ու Շանհայում, հարձակումն Արկոսի վրա, Անդվիայի խզումը ԽՍՀՄ-ի հետ, Վոյկովի սպանությունը, անդվիական վարձկանների տեսորիստական ակտերը ԽՍՀՄ-ում, Թրամախայի հետ ունեցած հարաբերությունների սրումը Ռամկովսկուն հետ կահչելու հարցի առթիվ:

Յեթե մի-յերկու տարի առաջ կարելի յեր և պետք եր խոսել ԽՍՀՄ-ի և կալխատալիստական յերկիրների վորոշ հավասարակշռության ու «խաղաղ համակեցության» ժամանակաշրջանի մասին, ապա այժմ մենք բոլոր հիմքերն ունենք միութելու, թե «Խաղաղ համակեցության» ժամանակաշրջանն անցյալի գիրկն և ընկնում, աելի տալով ԽՍՀՄ-ի դեմ ուղղված իմպերիալիստական հարձակումների և խոտերվենցխայի նախազարասաման ժամանակաշրջանին: ԽՍՀՄ-ի դեմ միասնական ճակատ ստեղծելու Անդվիայի փորձերն առայժմ չհաջողվեցին: Այդ անհաջողության պատճառները. շահերի հակասությունն իմպերիալիստների բանակում, միքանի յերկիրների շահագրգովածությունը ԽՍՀՄ-ի հետ ունեցած տնտեսական կապերով, ԽՍՀՄ-ի խաղաղամիրական քաղաքականությունը, Յեկոսպայի բանկորդասակարգի հականերում, իմպերիալիստների յերկյուղը՝ իրենց տանը սահճալույթ անելու հեղափոխությունը ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմի դեմքում: Բայց դա դեռևս չի նշանակում, թե Անդվիան կթողնի ԽՍՀՄ-ի դեմ միասնական ճակատ կազմակերպելու իր աշխատանքը, թե նրան չի հաջողվի արդարիւ ճակատ կազմակերպել: Զնայած Անդվիայի ժամանակավոր անհաջողություններին՝ պատերազմի սպառնալիքը մնում է ուժի մեջ:

Այսուելից ինդիր և ծագում—հաշվի առնել հակասություններն իմպերիալիստների բանակում, հետաձգել պատերազմը՝ փրկադնվելով կապիտալիստներից, և բոլոր միջոցները ձեռք առ-

նել խաղաղ հարաբերությունները պահպանելու համար։ Մենք չենք կարող մռանալ ինձնի խոսքերն այն մասին, վոր մեր շնարարության դործում շատ բան կախված է նրանից, թե արդյոք մեզ կհաջողվի հետաձգել պատերազմը կապիտալիստական աշխարհի հետ, պատերազմ, վորն անխուսափելի յէ, բայց վորը կարելի յէ հետաձգել կամ մինչև այն մռմենտը, յերբ Յելրուսայում կհասունանա պրոլետարական հեղափոխությունը, կամ մինչև այն մռմենտը, յերբ միանդամայն կհասունան գաղութային հեղափոխությունը, կամ մինչև այն մռմենտը, յերբ կապիտալիստները կույտ էքսումին իրար հետ՝ գաղութիւնները բաժանելու համար։ Այդ պատճառով մեզ համար պարտադիր խոնդիր ե կապիտալիստական յերկիրների հետ խաղաղ հարաբերություններ պահպանելը։

Կապիտալիստական յերկիրների հետ ունեցած մեր հարաբերությունների հիմքը յերկու հակածիր սխատեմների համարությունը հանդուրժելու և։ Պրակտիկան միանդամայն արդարացրեց այդ հիմքը։ Պարտը կարկերի հարցու և յերեմն դայթակղության քար հանդիսանում։ Այսուղ պարզ ե մեր քաղաքականությունը։ Նա խարսխվում ե «տալիս ես—տալիս եմ» Փորմուլայի վրա։ Մեր արդյունաբերությունն արդասավորելու համար տալիս ես վարկեր,—ստանում ես նախազատերազմյան պարագերի մի վորոշ բաժին, վոր մենք դիտում ենք իբրև լրացուցիչ տոկոսներ վարկերի համար։ Զես տալիս—չես ստանում։ Փաստերն ասում են, վոր մենք արդյունաբերական վարկեր ստանալու բնագավառում ունենք վորոշ նվաճումներ։ Յես ալյալ դեպքում նկատի ունեմ վո՛չ միայն Գերմանիան, այլև Ամերիկան, այլև Անգլիան։ Խնդրում են դադանիքը։ Նրանում, վոր մեր յերկիրը մեծադույն շուկա յէ ներկայացնում սարքավորում ներմուծելու համար, խոկ կապիտալիստական յերկիրները հենց այդ տհասակի արդյունքների վաճառահանան կարիք ունեն։

## 5. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իբրև հանրագումար մենք ունենք.

Առաջին, հակասությունների աճում կապիտալիստական շրջապատման ներսում, կապիտալիզմի համար աշխարհը պատերազմի միջոցով նոր վերաբաժանման յենթարկելու անհրաժեշտություն, Անգլիայի կողմից գլխավորվող՝ կապիտալիստա-

կան աշխարհի մի մասի ինտերվենցիոնիստական տեղենցներ, ԽՍՀՄ-ի գեմ ուղղված պատերազմի գործի մեջ կապիտալիստական աշխարհի մյուս մասի խճճվել չցանկանալը, վորը դերադասում և տնտեսական կապեր կարգավորել ԽՍՀՄ-ի հետ, այդ յերկու տեղենցների պահպարի առկայություն ու խաղաղությունը պահպանելու համար այդ հակառակությունները հաշվառելու վորոշ համար :

Յերկրորդ, մենք ունենք ունենք փլուզվող սասարիբիզացիա, գաղութային հեղափոխական շարժման աճում, հեղափոխական նոր վերելքի նշաններ Յելրոպայում, կոմինտերնի և նրա սեկցիաների հեղինակության աճումն ամբողջ աշխարհում, Յելրոպայի բանվոր դասակարգի՝ ԽՍՀՄ-ի վերաբերմամբ տածած համայնքների աելնայտ աճում, ԽՍՀՄ-ի աճող հոգություն յերկրի ներսում և մեր յերկը բանվոր դասակարգի ամբապնդվող հեղինակություն ամբողջ աշխարհի ճնշված դասակարգերի ըլլորանում :

Այսուեղից՝ կուսակցության խնդիրները .

1) Միջազգային հեղափոխական շարժման գծով.

ա) պայքար ամբողջ աշխարհում կոմունիստական կուսակցությունների գարզացման համար .

բ) պայքար հեղափոխական խրիմիությունների և կապիտալի հարձակման դեմ ուղղված՝ բանվորների միասնական նախատի ամրապնդման համար .

գ) պայքար ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի և կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգի բարեկամության ամրապնդման համար .

դ) պայքար ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի և գաղութային յերկիրների ազատագրական շարժման գոգումն ուժեղացնելու համար :

2) ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության գծով.

ա) պայքար խնդիրների համար պատերազմների նախատրաստման դեմ .

բ) պայքար Անգլիայի խնտերվենցիոնիստական տեղենցների դեմ և ԽՍՀՄ-ի պաշտպանութակության ուժեղացումն .

գ) խաղաղության բաղաքականություն և խաղաղ հարաբերությունների պահպանումն կապիտալիստական յերկիրների հետ .

դ.) արտաքին առևտրի մոնոպոլիայի ամրապնդման հիմքի վրա արտաքին աշխարհի հետ ունեցած մեր ապրանքաշրջանառության ընդլայնումն։

Ե) մերձեցում այսպես կոչված «քույլ» ու «վոչ-լիիբավ» պետությունների հետ, վարոնք կրում են իմաստական տիրապետող պետությունների նեշումն ու շահագործումը։

## Ա. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽԱՀՄ-Ի ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Թույլ ավեգ, ընկերներ, անցնել մեր յերկրի ներքին դրությանը, մեր սոցիալիստական շինարարության հաջողություններին, պրոլետարիատի դիկտատուրայի ճակատազրի, այդ դիկտատուրայի զարգացման, նրա ամրապնդման հարցին :

Մեր կուսակցության XIV համագումարը կենտրոնական կոմիտեին հանձնարարեց հետեւյալ հիմնական խորհրդների տեսանկյունով վարել մեր ժողովրդական անտեսության զարգացման գործը. նախ, վորպեսզի մեր քաղաքականությունը նպաստի ամբողջությամբ վերցրած բովանդակ ժողովրդական տնտեսության արտօղության առաջընթաց աճմանը. յերկրորդ, վրապեսզի կուսակցության քաղաքականությունը նպաստի ինդուստրիայի զարգացման տեմպի արագացմանն ու ամբողջ ժողովրդական տընտեսության մեջ ինդուստրիայի ղեկավար գերի ապահովմանը. յերրորդ, վորպեսզի ժողովրդական տնտեսության զարգացման ընթացքի մեջ մասնավոր առլրանքային ու կավիտալիստական սեկտորների հաշվին ապահովվի ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորի, տնտեսության սոցիալիստական ձևերի ավելի ու ավելի աճող տեսակարար կշփոր. չորրորդ, վրապեսզի ամբողջությամբ վերցրած մեր բովանդակ տնտեսական զարգացումը, ինդուստրիայի նոր ճյուղերի կազմակերպումը, վորոշ ճյուղերի զարգացումն ըստ հումքի և այլն՝ տարրի այնպիսի զծով, վոր ընդհանուր զարգացումն ապահովվի մեր յերկրի տընտեսական անկախությունը, վոր մեր յերկրը համաշխարհային տնտեսության կավիտալիստական սիստեմի կցորդը չդառնա. Հինգերորդ, վորպեսզի պրոլետարիատի դիկտատուրան, բանվոր կամակարդի ու զյուղացիական մասսաների բլոկը և բանվոր դաստիարակի ղեկավարությունն այդ բլոկում ամրապնդվեն. և, վե-

ցերորդ, վորակեսղի բանլոր դատակարդի ու գյուղական չքամության նյութական ու կուտուրական դրությունն անշեղորեն ըարձրանա:

Ի՞նչ է արված հաշվետու ժամանակաշրջանում՝ մեր կուսակցության կողմից, մեր կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից այդ խնդիրների կատարման բնագավառում:

## 1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՅԱԾ

Առաջին հարցը ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության զարգացումն է: Յես այսուղ հաշվետու ժամանակաշրջանի համար միքանի հիմնական թվեր եմ բերում ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության ու մասնավորապես արդյունաբերության և գյուղատնտեսության աճման հարցի վերաբերյալ: Յես այդ թվերը վերցնում եմ Պետականի Հայտնի հաշվումներից: Յես նկատի ունեմ Պետականի 1927/28 թվականի վերահսկիչ թվերն ու հնդամյա պլանի սևադիր նշագծումները:

ա) Ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրության աճումը յերկու տարվա ընթացքում: Յեթե գյուղատնտեսության համարական արտադրանքը Պետականի նոր հաշվիներով՝ 1924/25 թվին կազմում էր նախապատճառակազմյանի 87,3 տոկ., իսկ ամբողջ արդյունաբերության արտադրանքը կազմում էր նախապատճառակազմյանի 63,7 տոկ., ապա այժմ՝ յերկու տարի անց, 1926/27 թ. գյուղատնտեսության արտադրանքն արդեն 108,3 տոկ. է կազմում, իսկ արդյունաբերության արտադրանքը՝ 100,9 տոկոս: Բայց Պետականի վերահսկիչ թվերի, 1927/28 թվականի համար յենթագրվում են գյուղատնտեսության արտադրանքի հետագա մեծացում՝ մինչև նախապատճառակազմյանի 111,8 տոկ., իսկ արդյունաբերության արտադրանքին՝ մինչև 114,4 տոկոս:

Յերկրում առևտրամիջնորդային շրջանառության աճումը յերկու տարվա ընթացքում: Յեթե 1924/25 թ. շրջանառության չափերն ընդունենք իրբե 100 (14613 մել. չերլ. ոռոբ.) ապա, 1926/27 թ. մենք ունենք 97 տոկ. մեծացում (28775 մել. ոռոբ.), իսկ 1927/28 թ. յենթագրվում է հետագա աճում՝ մինչև 116 տոկ. (33440 մել. ոռոբ.):

Մեր վարկային սիստեմի զարգացումը յերկու տարվա ըն-

**Բացքում:** Յեթե իբրև 100 ընդունենք մեր բոլոր վարկային հիմնարկների 1925 թ. հոկտեմբերի 1-ի համահավաք հաշվեկշռությունը (5343 միլ. չերտ. ոռուր.), ապա առ. 1927 թ. մեկն հուլիսի մենք ունենք 53 տոկ. աճում (8175 միլ. ո.): Հիմք չկա տարակուսեկու, վոր 1927/28 թ. կտա մեր աղղամացված վարկային սիստեմի հետագա աճում:

**Յերկաթուղային տրամապորտի դարձացումը յերկու տարվա ընթացքում:** Յեթե մենք մեր ամբողջ յերկաթուղային ցանցում 1924/25 թ. ունենինք նախապատերազմյան բնոնաըրջանառության 63,1 տոկ., ապա այժմ, 1926/27 թ. մենք ունենք 99,1 տոկոս, իսկ 1927/28 թ. կունենանք 111,6 տոկոս: Ել յես չեմ խոսում այն մասին, վոր այդ յերկու տարում մեր յերկաթուղային ցանցը մեծացել է 74,4 հազ. կիլոմետրից մինչև 76,2 հազ. կիլ., վոր նախապատերազմյան մակարդակի հանդեպ կազմում է մեծացումն 30,3 տոկ., իսկ 1917 թ. հանդեպ՝ 8,9 տոկոսով:

**Պետական բյուջեյի աճումը յերկու տարվա ընթացքում:** Յեթե հանրագումարային բյուջեն (պետական միամնական բյուջեալյուստեկան բյուջեները) մեղանում 1925/26 թ. համար կազմում եր նախապատերազմյանի 72,4 տոկ. (5024 միլիոն ոռուր.), ապա ներկա մոմենտի, այսինքն 1927/28 թ. համար հանդարձումարդային բյուջեն պետք է կազմի նախապատերազմյանի 110—112 տոկ. (7 միլիարդ ոռուբլուց ավելի): Յերկու տարվա մեջ աճը կազմում է 41,5 տոկոս:

**Արտաքին առևտրի աճումը յերկու տարվա ընթացքում:** Յեթե արտաքին առևտրի ընդհանուր ըրջանառությունը մեղանում 1924/25 թ. կազմում եր 1282 միլ. ոռուրի, այսինքն նախապատերազմյանի մոտ 27 տոկ., ապա այժմ, 1926/27 թ. մենք ունենք 1483 միլ. ոռուրու ըրջանառություն, այսինքն նախապատերազմյանի 35,6 տոկ., իսկ 1927/28 թ. յենթադրվում է, վոր կունենանք 1626 միլ. ոռուր., այսինքն նախապատերազմյանի 37,9 տոկոսը: Արտաքին առևտրի զարգացման դանդաղեցված տեղայի պատճառներն են նախ այն փաստը, վոր բուրժուական պետությունները հաճախ խոչընդուներ են հարուցանում մեր արտաքին առևտրի առաջ, վորոնք յերեմն վեր են աճվում թացված բլոկադայի, յերկրորդ՝ այն փաստը, վոր մենք չենք կարող առևտուր անել ըստ բուրժուական Փորմուլայի—«ինքներս կուշտ չենք ուստի, բայց կարտահանենք»: Այստեղ պլյուս ե հանդիսանում արտաքին առևտրի գծով 1926/27 թ. ակտիվ

ապագան 57 միլ. ռուբլու դուժարի չափով։ Սա 1923/24 թվից  
հետո առաջին տարին է, յերբ արտաքին առևտութիւնը բարձանսը  
պլյուսով է ամփոփվութ։

Երբեք յերկու տարվա աղբային ամբողջ յեկամտի ընդհանուր  
աճման համբաղումար մենք ունենք հետեւյալ պատկերը։ յեթէ  
ընդունենք, վոր ԽՍՀՄ-ի աղբային յեկամուտը 1924/25 թ. կազ-  
մում եր 15589 միլ. չերվ., սուր., ապա 1925/26 թ. մենք ունե-  
ցել ենք 20252 միլ. ռուբ., այսինքն մեկ տարում 29,9 տոկ-  
ած, իսկ 1926/27 թ.՝ 22560 միլ. ռուբ., այսինքն մեկ տարում  
11,4 տոկոս աճ։ Ըստ Գետալլանի վերահսկիչ թվերի՝ մենք  
1927/28 թվականին ունենալու յենք 24208 միլ. ռուբ., այսինքն  
7,3 տոկոս աճ։

Յեթէ նկատի առնենք, վոր Միացյալ Նահանգների աղբային  
յեկամտի տարեկան միջին աճը 3—4 տոկոսից բարձր չե (մեկ  
անգամ միայն, անցյալ դարի 80-ական թվականներին Միացյալ  
Նահանգներն ունեցել են աղբային յեկամտի մոտ 7% աճ), իսկ  
այլ յերկիրների, որինակ, Անդիխայի ու Գերմանիայի, աղբային  
յեկամտի տարեկան աճը 1—3 տոկոսից բարձր չե, ապա պետք է  
ընդունել, վոր ԽՍՀՄ-ի ազգային յեկամտի անման տեմպը վեր-  
ջին տարիներում ուներդային ե հանդիսանում Յեվրոպայի ու  
Ամերիկայի կապիտալիստական խոշոր յերկիրների համեմա-  
տությամբ։

Յեզրակացություն. մեր յերկրի ժողովրդական տնտեսու-  
թյունն անում է արագ տեմպով։

Կուսակցության խնդիրն է՝ առաջ շարժել մեր ժողովրդա-  
կան տնտեսության զարգացումը արտադրության բոլոր նյուղե-  
րի գծով։

բ) Ժողովրդական տնտեսության աճումը մեղանում ընթա-  
նում է վո՞չ թե կուրորեն, վո՞չ թե արտադրանքի քանակական  
հասարակ աճման կարգով, այլ հայտնի, խստորեն վորոշ ուղ-  
ղությամբ։ Վերջին յերկու տարվա ընթացքում յերկու հիմնական  
հանգամանք վճռողական Փակտորներ են հանդիսանում ժողո-  
վրդական տնտեսության զարգացման դորձում։ Նախ, մեր ժո-  
ղովրդական տնտեսության զարգացումն ընթանում է յերկրի  
ինդուստրացման նշանի տակ, գյուղատնտեսության վերաբեր-  
մամբ արդյունաբերության աճող դերի նշանի տակ։ Յերկրորդ,  
ժողովրդական տնտեսության, յերկրի ինդուստրացման զար-  
գացումն, ինչպես արտադրության բնագավառում, այնպես ել  
ապրանքաշրջանառության բնագավառում, ընթանում է տնտե-

սուրբյան սոցիալիստական ձևերի տեսակարար կշռի ու երամանատարական դերի մեծացման ուղղությամբ՝ մասնավոր-առանքային ու կապիտալիստական սեկտորների հաշվին:

Թվեր ժողովրդական տնտեսության սիստեմի մեջ արդյունաբերության տեսակարար կշռի աճման մասին (առանց տրամադրության և ելեկտրիֆիկացիայի): Յեթև արդյունաբերության համախառն արտադրանքի բաժինը ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի համեմատությամբ 1924/25 թ. նախապատերազմյան գներով կազմում եր 32,4 տոկ., իսկ դյուռատնտեսության բաժինը՝ 67,6 տոկ., ապա 1926/27 թ. արդյունաբերության բաժինն աճեց մինչև 38 տոկ., գյուղատնտեսության բաժինն ընկալ մինչև 62 տոկոս: 1927/28 թ. արդյունաբերության բաժինը պետք է աճի մինչև 40,2 տոկ., իսկ գյուղատնտեսության բաժինը պետք է իջնի մինչև 59,8 տոկոս:

Ինդուստրիայի հիմնական առանցքը ներկայացնող՝ արտադրության զործիքների ու միջոցների արտադրության տեսակարար կշռի աճման վերաբերյալ թվերն ամբողջ արդյունաբերության նկատմամբ յերկու տարվա ընթացքում. 1924/25 թ. արտադրության միջոցների արտադրության բաժինը 34,1 տոկոս եր, 1926/27 թ.—37,6 տոկ., իսկ 1927/28 թ. յնթագրվում է հասցնել 38,6 տոկոսի: Պետական խոշոր արդյունաբերության մեջ արտադրության միջոցների տրատերության տեսակարար կշռի աճման վերաբերյալ թվերը յերկու տարվա համար. 1924/25 թվին 42,0 տոկոս եր, 1926/27 թ.—44,0 տոկ., իսկ 1927/28 թվին յնթագրվում է հասցնել 44,9 տոկոսի:

Ինչ վերաբերում է արդյունաբերության ապրանքային արտադրության նրա տեսակարար կշռն ապրանքների ամբողջ զանգվածում, ապա արդյունաբերության բաժինը 1924/25 թ. 53,1 տոկոսից յերկու տարվա մեջ աճել-հասնել է 1926/27 թ. 59,5 տոկ., իսկ 1927/28 թ. նա պետք է հասնի 60,7 տոկ., մինչեւ գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի բաժինը 1924/25 թ. կազմում եր 46,9 տոկ., 1926/27 թ. իջակ 40,5 տոկոսի, իսկ 1927/28 թ. պետք է իջնի մինչև 39,3 տոկոս:

Յերակացություն. մեր յերկիրը ինդուստրիալ յերկիր է դասնում:

Կուսակցության խնդիրն ե՝ բոլոր միջոցներով առաջ շարժել մեր յերկիրի ինդուստրացումը:

Թվեր տնտեսության սոցիալիստական ձևերի տեսակարար կշռի և համանատարական դերի՝ յերկու տարվա մեջ մասնա-

վոր-ապրանքային և կապիտալիստական սեկտորների հաշվին տեղի ունեցած աճման մասին: Մինչդեռ ժողովրդական տնտեսության հանրայնացված սեկտորի (պետական և կոռպերատիվ արդյունաբերություն, տրանսպորտ, ելեկտրիֆիկացիա և այլն) կապիտալ ներդրանքները՝ 1924/25 թ. 1231 միլ. ռուբլուց աճել են 1926/27 թ. մինչև 2683 միլ., իսկ 1927/28 թ. ներդրանքները պլանի աճեն մինչև 3456 միլ., վոր կազմում ե 1924/25 թ. 43,8 տոկ. կազմող ներդրանքների աճ մինչև 65,3 տոկ. 1927/28 թվին, —ժողովրդական տնտեսության չանրայնացված սեկտորի ներդրանքները շարունակ ընկել են հարաբերաբար և միայն անշահ չափով են աճել բացարձակ թվանշաններով՝ 1924/25 թ. 1577 միլիոնից մինչև 1926/27 թ. 1717 միլ., իսկ 1927/28 թ. պետք և հասնեն 1836 միլիոնի, վոր չանրայնացված սեկտորի ներդրանքների տեսակարար կոչի անկումն և տալիս 1924/25 թ. 56,2 տոկոսից մինչև 1927/28 թ. 34,7 տոկոսը:

Մինչդեռ արդյունաբերության հանրայնացված սեկտորի համախառն արտադրանքը 1924/25 թ. 81 տոկոսից աճել ե մինչև 1926/27 թ. 86 տոկոսն ամբողջ արդյունաբերության, իսկ 1927/28 թ. պետք և մեծանա մինչև 86,9 տոկ.՝ արդյունաբերության չանրայնացված սեկտորի գերը տարեցտարի ընկել ե. 1924/25 թ. 19 տոկոսից մինչև 1926/27 թ. 14 տոկոսն ամբողջ արդյունաբերության արտադրանքի, իսկ 1927/28 թ. պետք և նվազի մինչև 13,1 տոկոսը: Ինչ վերաբերում ե մասնավոր կապիտալի գերին խոշոր (ցենզային) արդյունաբերության մեջ, ապա նա ընկնում ե վո'չ միայն հարաբերաբար (1924/25 թվին 3,9 տոկ., և 1926/27 թ. 2,4 տոկ.), այլև բացարձակութեն (1924/25 թ. 169 միլիոն նախապատերազմյան ռուբլի և 1926/27 թ. 165 միլ. նախապատերազմյան ռուբլի):

Մասնավոր կապիտալիստական տարրերի նույնակիսի հետմազում ունենք յերկրի ապրանքաշահանառության բնադավառում: Մինչդեռ առևտրա-միջնորդային ամբողջ շրջանառության մեջ հանրայնացված սեկտորի բաժինը 1924/25 թվին կազմում եր 72,6 տոկ., մեծածախի մեջ՝ 90,6 տոկ., իսկ մանրածախի մեջ՝ 57,3 տոկ., 1926/27 թ. հանրայնացված սեկտորի տեսակարար կշխոն ամբողջ շրջանառության մեջ աճել ե մինչև 81,9 տոկ., մեծածախի մեջ՝ մինչև 94,9 տոկ., մանրածախի մեջ՝ մինչև 67,4 տոկ., —մասնավոր սեկտորի բաժինն այդ ժամանակա ընթացքում առևտրա-միջնորդային ամբողջ շրջանառության մեջ 27,4 տոկոսից իջել ե մինչև 18,1 տոկ., մեծածախի

մեջ՝ 9,4 տոկոսից մինչև 5,1 տոկ., մտնրածախի մեջ՝ 42,7 տոկոսից մինչև 32,6 տոկ., ընդամեն 1927/28 թ. յենթագլորդում ե, ըստ առևտրի բոլոր տեսակների, մտանալոր սեկտորի տեսակաբար կշռի հետագա իջեցումն:

Յեղակացություն. մեր յերկիրը դեպի սոցիալիզմ և զնում վասահ ու արագ կերպով, հետին պլանը մերկով ու ժողովրդական տնտեսությունից քայլ առ քայլ վտարելով կապիտալիստական տարերը:

Այս փաստը մեր առջեւ բացահայտում է «ո՞վ ում» հարցի հիմքը: Այս հարցը լենինի կողմից գրվեց 1921 թ. նոր տնտեսական քաղաքականություն մտցնելուց հետո: Կարողանա՞նք արդյոք սոցիալիդացիայի յենթարկված մեր խորուստիան շաղկապել գյուղացիական տնտեսության հետ, հետ մղելով մասնավոր առևտրականին; մասնավոր կապիտալիստին և առևտուր անել սովորելով, թե՞ մասնավոր կապիտալը կհաղթի մեզ, պատակում առաջացնելով պրոլետարիատի ու գյուղացիության միջև, —ահօթե թե այն ժամանակ ինչպես եր ծառացած հարցը: Այժմ մենք կարող ենք ասել, վոր մենք հիմնականում արդեն վճռողական հաջողություններ ունենք այդ բնագավառում: Այս բանը ժխտել կարող են թերեւ միայն կույրերը կամ խելազուրկները: Բայց «ով ում» հարցն այժմ արդեն այլ բնույթի և ստանում: Այս հարցն այժմ առևտրի բնագավառից փոխադրվում է արտադրության բնագավառը, տնայնագործական արտադրության բնագավառը, գյուղատնտեսական արտադրության բնագավառը, վորտեղ մասնավոր կապիտալն ունի իր վորոշ տեսակաբար կշռը և վորոնեցից նրան պետք ե սիստեմատիկորեն գուրս մղել:

Կուսակցության խնդիրն է. ընդլայնել ու ամրապնել մեր սոցիալիստական իրամայող բարձունեները ժողովրդական տնտեսության բոլոր նյութերի մեջ ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում, կուրս բնելով դեպի կապիտալիստական տարերի լինվիդացիան ժողովրդական տնտեսության մեջ:

## 2. ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄՊԸ

ա) Յերկրի ամբողջ արդյունաբերության ավելի քան 77 տոկ. կազմող աղքայնացված խոչոր արդյունաբերության արտադրանքի աճումը: Յեթե 1925/26 թ. աղքայնացված խոչոր արդյունաբերության արտադրանքի աճը (նախապատերազմյան ոռւր-

լիներով) կազմում եր նախընթաց տարվա համեմատությամբ 42,2 տոկ., 1926/27 թ.—18,2 տոկ., իսկ 1927/28 թ. կկազմի 15,8 տոկ., ապա ըստ Պետականի սևագիր և նկատելի չափով նվազեցված հնդամյա նախաղծանքի՝ հինգ տարվա մեջ արտադրանքի աճը կկազմի 76,7 տոկ., արտադրանքի տարեկան միջինթվաբանական աճը 15 տոկ. և արդյունաբերական արտադրանքը 1931/32 թվին կածի կրկնակի՝ նախապատերազմյան արտադրանքի համեմատությամբ:

Յեթե վերցնենք յերկրի ամբողջ—թե՛ խոշոր (ակետական ու մասնավոր), թե՛ մանր—արդյունաբերության համախառն արտադրանքը, ապա արտադրանքի տարեկան միջին-թվաբանական աճն ըստ Պետականի հնդամյա նախաղծանքի կկազմի մոտ 12 տոկ., վոր 1931/32 թ. կտա, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ, արդյունաբերական ամբողջ արտադրանքի գրեթե 70 տոկ. հավելում:

Ամերիկայում արդյունաբերական ամբողջ արտադրանքի տարեկան աճը հինգ տարում՝ 1890—1895 թ. թ. կազմում եր 8,2 տոկ., 1895—1900 թ. թ. հինգ տարում՝ 5,2 տոկ., 1900—1905 թվերի հինգ տարում՝ 2,6 տոկ., 1905—1910 թ. թ. հինգ տարում՝ 3,6 տոկ.: Խուսաստանում՝ 1895—1905 թ. թ. տասնամյակում տարեկան միջին աճը յեղել է 10,7 տոկ., 1905—1913 թվերի ուժնամյակում՝ 8,1 տոկու:

Մեր սոցիալիստական արդյունաբերության արտադրանքի, ինչպես նաև ամբողջ արդյունաբերության արտադրանքի տարեկան աճի տոկութ մի ուելորդային տոկոս է, վորպիսին չունի աշխարհում կապիտալիստական վոչ մի խոշոր յերկիր:

Յել զա՝ չնայած այն բանին, վոր ինչպես ամերիկական արդյունաբերությունը, այնպես ել առանձնապես ուռւսական նախապատերազմյան արդյունաբերությունը, առատորեն բեղմնավորվում էին ուսարերկրյա կապիտալի հոր ներհոսումով, մինչդեռ մեր ազգայնացված արդյունաբերությունը հարկադրված է խարսխվելու իր սեփական կուտակումների վրա:

Յել զա՝ չնայած այն բանին, վոր մեր ազգայնացված արդյունաբերությունն արդեն վոտք եղել վերակառուցման ժամանակաշրջանը, յերբ հին գործարանների վերասարքավորումն ու նորերի կառուցումը վճռողական նշանակություն է ստանում՝ արդյունաբերական արտադրանքի աճի համար:

Հստ իր զարգացման տեմպի մեր արդյունաբերությունն առ-

հասարակ, մեր տցիալիստական արդյունաբերությունն առանձ-նապես՝ հասնում է կապիտալիստական յերկիրների արդյունաբե-րության զարգացման ու նրանից առաջ է անցնում:

բ) Ի՞նչո՞վ բացատրել մեր խոշոր արդյունաբերության զար-դացման այս չենանված տեմպը:

Նախ, այն բանով, վոր նա ազգայնացված արդյունաբերու-թյուն և, այդ պատճառով ազատ է կապիտալիստական խմբերի չահախնդիր ու հակահասարակական շահերից և հնարավորու-թյուն ունի զարգանալու ամբողջությամբ վերցրած հասարակու-թյան շահերի տեսակետից:

Յերկրորդ՝ այն բանով, վոր նա աշխարհում գոյություն ու-նեցող բոլոր արդյունաբերություններից ամենախոչոր ու ամենա-համակենարոնացված արդյունաբերությունն և, այդ պատճառով և նա բոլոր հնարավորություններն ունի հաղթելու մասնակոր կապիտալիստական արդյունաբերությանը:

Յերրորդ, այն բանով, վոր իր ձեռքում պահելով ազգայնաց-ված տրամասպրտը, աղբայնացված վարկը, աղբայնացված ար-տաքին առևտուրը, պետական ընդհանուր բյուջեն՝ պետությունը բոլոր հնարավորություններն ունի պլանային կարգով դեկա-վարելու ազգայնացված արդյունաբերությունը, վորպես արդյու-նաբերական միասնական տնտեսություն, մի բան, վոր ահադին առավելություններ և տալիս ամեն մի այլ արդյունաբերության հանդեպ և վոր նրա զարգացման տեմպն արագացնում է շատ ան-դամ:

Չորրորդ, այն բանով, վոր աղբայնացված արդյունաբերու-թյունն իբրև ամենախոչոր ու ամենահզոր արդյունաբերություն բոլոր հնարավորություններն ունի կիրառելու իր արտադրանքի լինքնարժեքի անշեղ իջեցման, արտարկման գների իջեցման և արտադրանքի եֆանացման քաղաքականությունը, դրանով իսկ իր արտադրանքի համար ընդլայնելով շուկան, բարձրացնելով ներքին շուկայի տարողությունը և իր համար հարածուն աղբյուր ստեղծելով արտադրության հետազ ծալվածման համար:

Հինգերորդ, այն բանով, վոր աղբայնացված արդյունաբե-րությունը, շատ պատճառներով, իսկ ի միջի այլոց և այն պատ-ճառով, վոր գների իջեցման քաղաքականության և հետեւում, կարող է դարպանալ քաղաքի ու դյուլի, պրոլետարիատի ու դյուլացիության աստիճանական մերձեցման սղայմաններում ի հակակշիռ կապիտալիստական արդյունաբերության, վորը զար-

գանում և դյուզացիության հյութերը քամող բուժուական քաղաքի ու ավելիքող դյուզի հարածուն թշնամության պայմաններում :

Վերջապես, նրանով, վոր աղքայնացված արդյունաբերությունը հենվում և բանվոր դասակարդի վրա, վորպես մեր տմբողջ զարդացման հեղեմոնի վրա, այլ պատճառով նա հնարավորություն ունի ավելի մեծ հետությամբ զարդացնելու տեխնիկան առհասարակ, աշխատանքի արտադրողականությունը մասնավորապես ու կիրառելու արտադրության ու կառավարման ռացիոնալիզացիան, բանվոր դասակարդի լայն մասսաների աջակցությունն ունենալով, մի բան, վոր չկա և լինել չի կարող արդյունաբերության կապիտալիստական սիստեմի ժամանակ :

Այս ամենի մասին անտարակուսելիորեն խոսում են մեր տեխնիկայի արագ աճումը վերջին յերկու տարվա ընթացքում և արդյունաբերության նոր ճյուղերի (մեքենաշինություն, հաստոցաշինություն, տուբքինաշինություն, ավտո- և ավիաշինություն, քիմիա և այլն) արագ զարդացումը:

Այդ մասին և նմանապես խոսում արտադրության մեզ զանում կիրառվող ռացիոնալիզացիան աշխատորվա (7-ամյա աշխատոր) կրծատման առկայությամբ և բանվոր դասակարդի նութական ու կուլտուրական զրության անշեղ վերելքի առկայությամբ, մի բան, վոր չկա և լինել չի կարող անտեսության կապիտալիստական սիստեմի ժամանակ :

Մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացման չտեսնված տեմպը արտադրության խորհրդային սիստեմի գերազանցության ուղղակի ու անտարակուսելի անդացույցն է կապիտալիստական սիստեմի հանդեպ:

Լենինն իրավացի յեր, յերբ գեռես 1917 թվի սեպտեմբերին, մինչև բոլշևիկների կողմից իշխանությունը վերցնելը, տառմ եր, վոր, պլուտոսարիատի գիկատառուրա հաստատելով, մենք կարող ենք և պետք և հասնենք առաջավոր յերկիրներին ու նրանցից առաջ անցնենք նաև տնտեսապես» (XXI հ., էջ 191):

Կուսակցության խնդիրն ե՝ ամրապնդել սոցիալիստական արդյունաբերության զարգացման ձեռք բերված տեմպը և մերձավորագույն ապագայում ուժեղացնել այն, նպատակ ունենալով այն քարենապատ պայմանների ստեղծումը, վորոնիք անհրաժեշտ են, փրփեսքի հասնենք կապիտալիստական առաջավոր յերկիրքին ու անցնենք:

ա) Գյուղում, ընդհակառակը, արտադրանքի համեմատաբար զանդաղ աճում ունենք մենք։ Յեթև 1925/26 թվի համախառն արտադրանքի աճը (նախապատերազմյան ոռոքլիներով) նախորդ տարվա համեմատությամբ կազմում էր 19,2 տոկ., 1926/27 թ. —4,1 տոկ., 1927/28 թ. կազմի 3,2 տոկ., ապա ըստ Պետպլանի սևագիր ու նկատելի չափով նվազեցված հնդամյա նախադժանքի՝ արտադրանքի աճը հինգ տարում կազմելու յէ 24 տոկ., արտադրանքի տարեկան միջն-թվարանական աճը կանի 4,8 տոկ. և գյուղատնտեսական արտադրանքը 1931/32 թ. նախապատերազմյան արտադրանքի համեմատությամբ կաճի 28—30 տոկուով։

Աս գյուղատնտեսական արտադրանքի վարդիշատե տանելի տարեկան աճ է։ Բայց չի կարելի այն անվանել վո՞չ սեկորդային՝ կապիտալիստական յերկիրների համեմատությամբ, վո՞չ ել բավականաչափ՝ նրա համար, վոր ապադայում պահպանենք անհրաժեշտ հավասարակշռությունը գյուղատնտեսության ու մեր ազգայնացված արդյունաբերության միջև։

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան աճը ՀԱՄՆ-ում հավասար է յեղել 1890—1900 թ. թ. տասնամյակին — 9,3 տոկոս, 1900—1910 թվականների տասնամյակին — 3,1 տոկ., 1910—1920 թ. թ. տասնամյակին — 1,4 տոկ.։ Նախապատերազմյան Ծուսասառում գյուղատնտեսական արտադրանքի տարեկան պահանջմանը 1900—1911 թ. թ. տասնամյակին հավասար է յեղել 3,2 տոկ.—3,5 տոկ.։ Ճիշտ է, մեր գյուղատնտեսական արտադրանքի տարեկան աճը 1926/27—1931/32 թ. թ. հինգ տարվա ընթացքում կազմի 4,8 տոկ., ընդունին, ինչպես յերեվում է, գյուղատնտեսական արտադրանքի աճի տոկոսը խորհրդային պայմաններում մեծացել է կապիտալիստական Ծուսասառանի ժամանակաշրջանի աճի համեմատությամբ։ Բայց չպետք է մոռանալ, վոր մինչդեռ ազգայնացված արդյունաբերության համախառն արտադրանքը 1931/32 թ. կրկնակի կավելանս նախապատերազմյան արդյունաբերական արտադրանքի համեմատությամբ, իսկ ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1931/32 թ. մոտ 70 տոկ. մերազմումն կտա նախապատերազմյան մակարդակից, գյուղատնտեսության արտադրանքն այդ ժամանակ միայն 28—30 տոկ., այսինքն մեկ յերբորդից պակասով

կդերազանցի նախապատերազմյան գյուղատնտեսական արտա-  
դրամներից :

Այս պատճառով մեր գյուղատնտեսության զարգացման տեմ-  
պը չի կարելի ընդունել բավականաչափ բավարար :

բ) ինչո՞վ բացատրել գյուղատնտեսության զարգացման  
արդպիսի համեմատարար դանդաղ տեմպը մեր ազգայնացված  
արդյունաբերության զարգացման տեմպի համեմատությամբ :  
Դա բացատրվում է ինչպես մեր գյուղատնտեսական տեխնիկայի  
չափազանց հետամնացությամբ ու գյուղի կուլտուրական վիճա-  
կի խիստ ցածր մակարդակով, այնպես ել, առանձնապես, նրա-  
նով, վոր մեր փոշիացած գյուղատնտեսական արտադրությունը  
չունի այն առավելությունները, վոր ունի մեր խոշոր, միավոր-  
ված ազգայնացված արդյունաբերությունը : Գյուղատնտեսական  
արտադրությունն ամենից առաջ ազգայնացված ու միավորված  
չե, այլ փոշիացած ու փոքր կտորներով ցրիլ տված : Նա պլա-  
նային կարգով չի վարդում և առայժմ իր ահազին մասով յեն-  
թարկված և մանր արտադրության տարերքին : Նա չի միավոր-  
ված և չի խոշորացված կոլեկտիվիզացիայի գծով, այդ պատ-  
ճառով գեռես շահագործելու հարմար դաշտ և ներկայացնում  
կուլակային տարրերի համար : Այս հանգամանքները փոշիացած  
գյուղատնտեսությունը զրկում են խոշոր, միավորված ու պլա-  
նային կարգով վարդող արտադրության այն վիթխարի առավե-  
լություններից, վոր ունի մեր ազգայնացված արդյունաբերու-  
թյունը :

Վո՞րտեղ և մերը գյուղատնտեսության համար : Գուցե ընդ-  
հանրապես մեր արդյունաբերության, մասնավորապես մեր ազ-  
գայնացված արդյունաբերության զարգացման տեմպի դանդա-  
ղեցման մէջ : Վո՞չ մի դեպքում : Դա կլիներ ամենառեակցիոն,  
հակապրոլետարական ուսուպիս : (Զայներ—«Ճիշտ ե») : Ազգայ-  
նացված արդյունաբերությունը պետք է զարգանա և կլարդանա  
արագացված տեմպով : Դրանումն և դեպի սոցիալիզմը կատար-  
վող մեր առաջարժման յերաշխիքը : Դրանումն և այն բանի յե-  
րաշխիքը, վոր վերջապես կինդուստրացվի ինքը գյուղատնտե-  
սությունը :

Հապաւ վո՞րն և յելքը : Յելքը անցումն և գյուղացիական  
մանր ու փոշիացած տնտեսություններից խոշոր ու միավորված  
տնտեսությունների՝ հողի հասարակական մշակման հիմքի վրա,  
հողի կոլեկտիվ մշակման անցնելը նոր, ավելի բարձր տեխնի-

կայի բաղայի վրա : Յելքն այն է , վոր դյուզացիական մանը ու մանրագույն տնտեսություններն աստիճանաբար , բայց անշեղութեն , վո՞չ թե սեղմէլու կարդով , այլ ցույց տալու և համոզիլու կարգով , միավորնք վարպես խոչըր տնտեսությունները հողի հասարակական , ընկերային , կոլեկտիվ մշակման հիմքի վրա , դործոննելով դյուզատնտեսական մեքենաներ ու տրակտորներ , կիրառելով հողագործության խաենսի վիճացիայի դիակական յեղանակներ : Այլ յելքեր չկան : Առանց գրան մեր դյուզատնտեսությունն իւլիձակի չե վո՞չ համենելու դյուզատնտեսապես ամենից զարդացած կապիտալիստական յերկիրներին (Կանադան և նրա նմանները) , վո՞չ նրանցից առաջ անցնելու : Մեր բոլոր միջոցառումները դյուզատնտեսական կապիտալիստական տարբերի սահմանափակման , դյուզում սոցիալիստական տարբերը զարդացնելու , դյուզացիական տնտեսությունները կոռպերատիվ զարդացման հունը ներդրավելու , դյուզացիական տնտեսությունն ինչպես մատակարարման ու վաճառահանման կողմից , այնպես ել արտադրության կողմից ընդդրկելու գծով դյուզի վրա պետության արած պլանային ներդրության վերաբերմամբ , — այս բոլոր միջոցառումները , ճիշտ ե , վճռողական միջոցառումներ են , բայց և այնպես նախապատրաստական միջոցառումներ են դյուզատնտեսությունը կոռեկտիվիզմի ուելսերի վրա փոխարքելու համար :

դ) Այս ուղղությամբ յերկու տարբում ի՞նչ ե արված կուսակցության կողմից : Քիչ բան չե արված : Բայց բնալ ել վոչ այն ամենը , ինչ վոր կարելի յեր անել : Ինչ վերաբերում ե դյուզատնտեսությունն , այսպես ասած , դրսից ընդդրկելուն՝ դյուզատնտեսությանը անհրաժեշտ շինվածքներ մատակարարելու գծով և դյուզատնտեսական արդյունքները վաճառահաննելու գծով , ապա այստեղ մենք հետեւյալ նվաճումներն ունենք . դյուզատնտեսական կոռպերացիան այժմ միավորում ե դյուզացիական բոլոր տնտեսությունների մոտ մեկ յերբորդականը . սպառողական կոռպերացիան դյուզի մատակարարման ընդդրկումը մեծացրել ե , 1924/25 թվի 25,6 տոկոսից հասցնելով 1926/27 թվին 50,8 տոկոսի . կոռպերատիվ և պետական մարմինները դյուզատնտեսական արտադրանքի վաճառահանման ընդդրկումը մեծացրել են , 1924/25 թ. 55,7 տոկոսից հասցնելով 1926/27 թ. 63 տոկոսի : Իսկ ինչ վերաբերում ե դյուզատնտեսությունն , այսպես ասած , ներսից , դյուզատնտեսական արտադրության գծով ընդդրկելուն , ապա այս բնագավառում մեզ մոտ

սարսափելի քիչ բան ե արված : Բարձական ե ասել, վոր կոլտնտեռություններն ու խորհանտեսությունները ներկայումս տալիս են գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի ընդամենը 2 տոկոսից մի քիչ ավելի և ապրանքային արտադրանքի 7 տոկոսից մի քիչ ավելի : Այստեղ, իհարկե, քիչ պատճառներ չկան՝ և՛ որյեկտիվ, և՛ սուբյեկտիվ : Անհմուտ մոտեցումը գործին, մեր աշխատովների վոչ-բավականաչափ ուշադրությունը դեպի այս զործը, գյուղացիների պահպանողականությունն ու հետամնացությունը, այն միջոցների պակասը, վորոնք անհրաժեշտ են ֆինանսավորելու համար գյուղացիներին հողի հասարակական մշակման անցկացնելու գործը և այլն : Իսկ այստեղ փոքր միջոցներ չեն պահանջվում : Լենինը Հ համագումարում ասում եր, վոր մենք դեռևս չունենք այն Փոնդերը, վորոնք անհրաժեշտ են գյուղատնտեսությունը պետական կամ կոլեկտիվ սկզբունքին յենթարկելու համար : Յես կարծում եմ, վոր այժմ այդ Փոնդերը կունենանք մենք, և նրանք ժամանակի ընթացքում պետք ե աճեն : Այնինչ դործն այնպիսի ընթացք ե ստանում, վոր առանց գյուղացիական փոշիացած տնտեսությունները միավորելու, առանց նրանց հողի հասարակական մշակմանը անցկացնելու՝ հնարավորություն չկալիքորեն առաջ շարժելու գյուղատնտեսության վո՛չ ինտենսիվիացիան, վո՛չ ել մեքենացումը, հնարավորություն չկապահան գնելու գործը, վոր մեր գյուղատնտեսությունը կարողանա իր զարդացման տեմպով հասնել կապիտալիստական յիրկիրներին, որինակ, Կանադայի նման յերկրին : Ուստի խնդիրն այն է, վոր այս կարեւոր գործի վրա կենտրոնացնենք մեր գյուղական աշխատովների ուշադրությունը : Յես կարծում եմ, վոր հողժողովածաններին ու գյուղատնտեսական կոռակերացիայի մարմիններին առընթեր գործող վարձակայանները պետք ե խոշորագույն գեր խաղան այս գործում : Ահա այն բանի որինակներից մեկը, թե ինչպես են խորհանտեսությունները յերբեմն գյուղացիներին ողնում անցնելու հողի կոլեկտիվ մշակման՝ ի մեծ ողուտ գյուղացիների : Յես նկատի ունեմ Ուկրաինայի խորհանտեսությունների միավորման այն ողնությունը արակտորներով, վոր ցույց ե տրված Ողեսսայի շրջանի գյուղացիներին և այդ գյուղացիների՝ որորես «Խղիսատիա»-յում տպված շնորհակալական նամակը այդ ողնության համար : Թույլ տվեք կարդալ նամակի տեքստը : (Զայներ—«Խնդրում ենք») :

«Մենք, Շեվչենկոյի, Կրասինի, Կալինինի անվան «Զերվ-

նա Զիրկա» յեվ «Ծագող արեվ» խուտորի վերաբնակներս, մեր խորագույն շնորհակալությունն ենք հայտնում խորհրդային իշխանությանն այն աշադին ողնության համար, վորցուց արվեց մեզ մեր անսեսության վերականգնման գործում: Մեր մեծամասնությունը ձիազուրկ, ինվենտարագուրկ չքալորներ լինելով, չեյինք կարողանում մեղ հատկացված հողը մշակել յեվ այն ստիպված եյինք վարձակալությամբ տալ հնաբնակ-կուլակներին բերքի մի մասի դիմաց: Ստացվեց վատ բերք, վորագհետեւ հայտնի յե, վոր վարձակալը լավ չի մշակել ուրիշի հողը: Այն փոքր վարկերը, վոր ստացվում եյին պետությունից, ծախսվում եյին մեր կողմից, և տարեցտարի մենք ավելի եյինք աղքատանում: Այս տարի մեղ մռու յեկավ Ուկրաինական խորհուտեսությունների միավորման ներկայացուցիչը և մեզ փողային վարկերի փոխարեն առաջարկեց տրակտորներով մշակել մեր հողերը: Բոլոր վերաբնակները, բացի առանձին կուլակներից, ավին իրենց համաձայնությունը, թեև քիչ եյին հավատում, վոր աշխատանքն արդի տիրոջ հողատարությամբ: Ի մեծ ուրախություն մեր և ի հեծուկս կուլակների տրակտորները վարեցին ամբողջ խոպան և հանդստացող հողը ցելի համար, 5—6 անգամ վերահերկեցին ու տափանեցին մոլախոտերից մաքրելու նպատակով և, վերջապես, ամբողջ գաշտում ցանեցին զտատեսակ ցորեն: Այժմ կուլակներն արդեն չեն ծիծալում տրակտորային ջոկատի աշխատանքի վրա: Մեր շրջանում այս տարի գյուղացիները անձրկներ չլինելու հետեւնքով համարյա աշնանացան չեն արել, իսկ այն հողերում, վորտեղ վոր ցանված և, դեռևս ծիլեր չկան: Իսկ մեր վերաբնակային դաշտերի ցել արած հողերում հարյուրավոր դեսատին սբանչելի ցորեն և կանաչում, վորի նմանը չկա գերմանկան ամենահարուստ գաղութներում:

Բացի աշնանացանն անելուց տրակտորներն ամբողջ տարածությունը աշնանավարով պատրաստեցին գարնանացանի համար: Այժմ մեզանում չկա չլարած կամ վարձակալությամբ տրված վոչ մի դեսյատին հող: Մեզանում չկա վոչ մի չքավոր, վորը չունենար միքանի դեսյատին աշնանացան ցորեն՝ ցել արած դաշտում ցանած: Տրակտորների այն աշխատանքից հետո, վոր մենք տեսանք, այլևս չենք կամենում վարել չքալորական մանր տնտեսություն, այլ վճռել ենք

կազմակերպել հանրայնացված տրակտորային տնտեսություն, վորի մեջ չեն լինի գյուղացիական առանձին ցանքայատաները։ Մեղ Համար տրակտորային տնտեսություն կազմակերպելու գործն արգեն իր վրա յե վերցրել Տարաս Շելչենկոյի անվան խորհտնտեսությունը, վորի հետ մենք պայմանագիր ենք կնքել» («Իդլեսոտիա» №267, 22 նոյեմբերի 1927թ.)։

Ավելի շատ լինելին այսպիսի որինակներ, և այն ժամանակ, ընկերներ, կարելի կլիներ այս գործը շատ առաջ չարժել։

Կուսակցության խնդիրն եւ վաճառահաման ու մատակարարման գծով լայնացնել գյուղացիական տնտեսության ընդգրնկումը կոռուպերացիայի և պետական մարմինների կողմից և վորապես գյուղում մեր շինարարության հերթական գործնական լորեդիր՝ դնել գյուղացիական փոշիացած տնտեսությունների աստիճանական փոխադրումը միավորված խոշոր տնտեսությունների ուղղակի վրա, հողի հասարակական կողեկտիվ մշակման վրա՝ հողագործության խնտենախիկացիայի և մեքենացման հիմքի վրա, այն հաշվով, վոր զարգացման այդպիսի ուղին գյուղատրնեսության զարգացման տեմպի արագացման ու գյուղում կապիտալիստուկան տարրերին հաղթահարելու կարենրազույն միջոցն ե։

\* \* \*

Սրանք են սմբողջությամբ վերցրած Հանրապումարներն ու նվաճումները տնտեսական շինարարության բնադրավառում։

Դա չի նշանակում, թէ մեղանում ամեն ինչ բարեհաջող և այդ բնադրավառում։ Վո՞չ, ընկերներ, մեղանում բնավ եւ ամեն ինչ բարեհաջող չե։

Մեղանում կան, որինակ, ալբանքային սովի տարրեր։ Սա մինուս և մեր տնտեսության մեջ։ Բայց մի մինուս, վորը գեռես, ցավոք սրտի, անխուսափելի յե։ Վորովհետեւ այն փասոր, վոր մենք զարդացնում ենք արտադրության գործիքների ու միջոցների արտադրությունն ամելի արագ տեմպով, քան թեթև արդյունաբերությունը, — այդ փասոն ինքնըստինքյան նախորշում և, վոր մեղանում մերձավորագույն մի շարք տարբիներում գեռես լինելու յեն ապրանքային սովի տարրեր։ Բայց մենք չենք կարող այլ կերպ վարվել, յեթե կամենում ենք բոլոր միջոցներով առաջ շարժել յերկրի ինդուստրացումը։ Կան մարդիկ, որինակ, մեր սպողիցիան, վորոնք իրենց գաղափարախոսության համար նյութերը քաղում են սպեկուլան-

տական սրոչերում և ճշում են ապրանքային սովոր մասին, դրա հետ միասին պահանջելով «ղերինդուստրացում»։ Բայց դա անմտություն է, ընկերները՝ Միայն տղետները կարող են այդպես խստէլ։ Մենք չենք կարող և չպետք է կծկնք ծանր արդյունաբերության ամենակերպ գարդացման։ Ասենք՝ թեթև արդյունաբերությունն ել անհնարին և բավականաչափ զարդացնել՝ առանց ծանր ինդուստրիայի արագացված զարդացման։ Կարելի կլիներ մեծացնել պատրաստի ապրանքների ներմուծումն ու այդ կերպ խցանել ապրանքային սովոր, մի բան, վոր մի ժամանակ սննդում եք ոսկողիցիան։ Բայց դա մի այնպիսի հիմարություն է, վորից ոպողիցիան պետք է հրաժարվեր։ Այլ հարց է, թե վորքան հմտություն կերպով է մեղանում վարդում ապրանքային սովոր տարրերը մեղմելու դորձը, մի բան, վոր միանդամայն հնարավոր և մեր պայմաններում և վոր միշտ սննդում եր կուսակցությունը։ Յես կարծում եմ, վոր հենց այս բնագալառում վոչ ամեն ինչ և մեղանում բարեհաջող։

Այնուհետև, մենք ունենք այնպիսի փաստ, ինչպես համեմատարար վոչ փոքր քանակությամբ կապիտալիստներն են ինչպես արդյունաբերության բնագավառում, այնպես ել առևտրի բնագավառում։ Այդ տարրերի տեսակարար կշիռն այնքան ել փոքր չե, ինչպես մեղանում յերբեմն պատկերում են ընկերներից վորմանք։ Սա ևս մինուս և մեր տնտեսության հաշվեկշռի մեջ։ Յես նորերս կարդում եյի ընկ. Լարինի՝ բոլոր կողմերով հետաքրքրական գերքը—«Մասնավոր կապիտալը ԽՍՀՄ-ում»։ Յես ընկերներին կհանձնարարելի կարգալ այդ գրքույիլը։ Այդ գրքույիլը դուք կտեսնեք, թե ինչպես ճարպիկ ու հմուտ կերպով և կապիտալիստը քողարկվում արհեստագործական կոռպերացիայի դրոշակով, դյուղատնտեսական կոռպերացիայի դրոշակով, այս կամ այն առևտրական մարմինների դրոշակով։ Արդյոք ամե՞ն ինչ և արիում նրա համար, վոր սահմանափակվեն, կրծատվեն ու վերջապես ժողովրդական տնտեսության վոլորտից վտարվեն կապիտալիստական տարրերը։ Յես կարծում եմ, վոր վոչ ամեն ինչ։ Ինձ հայտնի յե, որինակ, վոր տնտեսագործական արդյունաբերության բնագալառում առհասարակ, կաշենքործական ու տեքստիլ արդյունաբերության բնագավառում մասնավորապես կան վոչ փոքր քանակությամբ նոր միլիոններներ, վորոնք սուբրկացնում են անայնագործներին ու ընդհանրապես մանր արտադրողներին։ Արդյոք ամե՞ն ինչ և արփում նրա համար, վոր

տնտեսապես շրջապատճենք ու վտարենք այդ շահագործողական տարրերին, կոռպերացիայի կամ պետական մարմինների հետ կապելով տնտեսագործներին։ Հաղիվ թե կարելի լինի տարակուսել, վոր այս բնագավառում բնալ ել չի արվում ամեն ինչ։ Այնինչ այս հարցը մեզ համար լրջագություն նշանակություն ունի։

Այնուհետև, մենք գյուղում ունենք կուլակության վորոշաճություն և ամսում։ Դա մինուս ե մեր տնտեսության հաշվեկշռում։ Արդյոք ամեն ինչ ե արվում նրա համար, վոր տնտեսապես սահմանափակվի ու մեկուսացվի կուլակությունը։ Յես կարծում եմ, վոր վոչ ամեն ինչ։ Անիրավացի յեն այն ընկերները, վորոնք կարծում են, թե կարելի յե և սկսած ե վերջ տալ կուլակին վարչական միջոցների կարգով, ՊԲՎ միջոցով. ասաց, կնիքը գրեց և վերջակետ։ Սա հեշտ միջոց ե, բայց հեռու յե ներգործող լինելուց։ Կուլակին պետք ե հաղթել տնտեսական կարգի միջոցներով, հեղափոխական որինականության հիման վրա։ Իսկ հեղափոխական որինականությունը դատարկ Փրազ չե։ Դա, իհարկե, չի բացառում կուլակի դեմ միքանի անհրաժեշտ վարչական միջոցներ կիրառելը։ Բայց վարչական միջոցները չպետք ե փոխարինեն տնտեսական կարգի միջոցառումներին։ Պետք ե լուրջ ուշադրություն դարձնել կուսակցական դժի խեղաթյուրումների վրա կուլակության դեմ մղվող սպայքարի բնագավառում մեր կոռուպէրատիվ մարմինների պրակտիկայի մեջ, առանձնապես գյուղատնտեսական վարկի գծով։

Այնուհետև, մենք ունենք այնպիսի վաստ, ինչպես արդյունաբերության մեջ լինքնարժեքի, արդյունաբերական առլրանքների բացթողման գների և, առանձնապես, քաղաքային ապրանքների մանրածախի գների իջեցման չափազանց դանուազ անման ե։ Սա նույնպես մինուս ե մեր տնտեսական շինարարության հաշվեկշռում։ Զի կարելի չնշել, վոր այստեղ մենք ունենք և՛ պետական, և՛ կոռպերատիվ, և՛ կուսակցական ապարատի ահագին դիմագրությունը։ Մեր ընկերներն, ըստ յերեսութին, չեն հասկանում, վոր արդյունաբերական ապրանքների գների իջեցման քաղաքականությունը մեր արդյունաբերական ապրանքների գների իջեցման չուկայի ընդլայնման ու այն խի ապրյուրի ուժեղացման հիմնական լծակներից մեկն ե, վորի բազայի վրա միայն կարող ե ծավալվել մեր լնդուստրիան։ Հաղիվ թե կարելի յե տարակուսել, վոր այլ մինուսը կարելի կլինի վերացնել միայն անխնա պայքարի միջոցով ընդդեմ գների իջեցման քաղաքականությունը կիրառելու

պործում ապարատի ցուցաբերած այդ իներտության, ապարատի այդ գիմագրության:

Վերջապես, մենք ունենք այնպիսի մինուսներ, ինչպես ողին և բյուջեյի մեջ, արտաքին առետրի զարդարման ծայրահեղորեն դանդաղ տեմպը և ուղերժների պակասությունը: Յես կարծում եմ, վոր կարելի կլիներ սկսել ողու աստիճանական կրծատումն, ողու փախարեն գործի մեջ մացնելով յեկամտի այնպիսի աղբյուրներ, ինչպես ուղղիոն ու կինոն: Իսկապես, ինչո՞ւ մեր ձեռքը չվերցնենք այդ կարևորագույն միջոցները և այդ գործի մեջ չղնենք իսկական բոլշեիկներից հարվածային մարդիկ, վորոնք կարողանացին հաջողությամբ հրահրել գործը և զերջապես հնարավորություն տալ կրծատելու ողու գործը: Ինչ վերաբերում է արտաքին առետրին, ապա ինձ թվում ե, թե մեղանում անտեսության բնագավառում յեղած մի ամբողջ շարք գժվարություններ գեմ են առնում եքսպորտի անրավականաչափությանը: Կարո՞ղ ենք մենք արդյոք առաջ շարժել եքսպորտի գործը: Յես կարծում եմ, վոր կարող ենք: Արդյոք ամե՞ն ինչ և արվում նրա համար, վոր ամբողջ թափով հրահրենք եքսպորտը: Յես կարծում եմ, վոր վոչ ամեն ինչ: Նույն բանը սկսեք և առել ուղերժների մասին: Անիբափացի յեն այն ընկերները, վորոնք ասում են՝ յերեմն թեթևամտությունից, իսկ յերեմն գործին ծանոթ չինելուց՝ թե մենք ուղերժներ շունենք: Վո՞չ, ընկերնե՞ր, մենք ինչ-ինչ ուղերձիկներ ունենք: Մեր պետության բոլոր մարմինները՝ զավատականներից ու նաշանդականներից մինչև մարզայիններն ու կենուրունականները՝ աշխատում են սկ սրբա համար վարեկ բան ինայի իբրև ուղերժի: Բայց այդ ուղերժները քիչ են: Այդ պետք ե ընդունել: Ուստի խնդիրն այն է, վոր վորքան հնարավոր և մեծացնենք ուղերժները՝ նույնիսկ յերեմն վորոշ ընթացիկ պահանջմունքների կրծատման հաջլին:

Սրանք են, ընկերնե՞ր, մեր անտեսական շինարարության սովորային կողմերը, վորոնց վրա պետք ե ուշադրություն դարձնել և վորոնք պետք ե վերացնել ինչ ել վոր լինի, վորպեսզի հնարավորություն ունենանք առաջ շարժվելու ավելի արագաց- ված տեմպով:

4. ՅԵՐԿՐԻ ԴԱՍՏԱԿԱՐԳԵՐԸ, ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ,  
ԿՈՒՆՑՈՒՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՅԵՐԿՐԻ տնտեսական դրության հարցերից անցնենք քաղաքական դրության հարցերին:

ա) Բանվոր դասակարգը: Թվեր բանվոր դասակարգի և առհասապահ վարձու աշխատանքով ապրող անձերի քանակական աճման մասին: Վարձու աշխատանքով ապրող անձերի թվիը (առանց զործագուրկների) 1924/25 թ. 8215 հազ. եր, 1926/27 թվին՝ 10.346 հազ.: Աճը 25 տոկոս է: Նրանց մեջ Փիզիկական աշխատանքի բանվորներ—դյուլատեսականներն ու սեղոնայինները ներառյալ—յեզել են 1924/25 թ. 5.448 հազար, 1926/27 թվին՝ 7060 հազար: Աճը 29,6 տոկոս է: Նրանց մեջ խոչոր արդյունաբերության բանվորներ յեզել են 1924/25 թ. 1794 հազար, 1926/27 թվին՝ 2388 հազար: Աճը 33 տոկոս է:

Բանվոր դասակարգի նյութական դրությունը: Վարձու աշխատանքով ապրող անձերի բաժինն ազգային յեկամտի մեջ կադմում էր 1924/25 թ. 24,1 տոկ., իսկ 1926/27 թ. այդ բաժինն աճեց մինչև 29,4 տոկոսը, վոր վարձու աշխատանքով ապրող անձերի՝ ազգային յեկամտի մեջ ունեցած բաժնի նախապատերազմյան չափերից գերազանցում է 30 տոկոսով, մինչդեռ այլ սոցիալական խմբերի, այդ թվում բուրժուազիայի բաժինն աղքային յեկամտի մեջ այդ ժամանակաշրջանում նվազել է (որինակ, բուրժուազիայի բաժինը 5,5 տոկոսից ընկել է մինչև 4,8 տոկոսը): Բայս ամրող պետական արդյունաբերության՝ բանվորների ռեալ աշխատավարձը, առանց հավելումների, 1924/25 թվին կազմում էր ամսական 25,18 Մուկվայի պայմանական ոռուք. 1926/27 թ.—32,14 առողիք, վոր յերկու տարվա մեջ տալիս է բարձրացումն 27,6 տոկոսով և նախապատերազմյան մեկարդակից գերազանցում է 5,4 տոկոսով: Հավելումներով (սոցակ, կուլտսպաքեր, կոմունալ ծառայություններ և այլն) աշխատավարձը 1924/25 թ. կազմում էր նախապատերազմյանի 101,5 տոկոսը, իսկ 1926/27 թվին—նախապատերազմյանի 128,4 տոկոսը: Սոցիալական ապահովագրության ֆոնդերը 1924/25 թ. 461 միլ. ռուբլուց աճել են 1926/27 թ. մինչև 852 միլիոն, այսինքն 85 տոկոսով, վոր հարաբերություն է տվել հանգստյան տնելով ու սահատորիաներով անցկացնելու 513 հազ. մարդ, նպաստներով ապահովելու 460 հազ. գործազուրկ և 700 հազ. թոշակառու-

(աշխատանքի և քաղաքացիական պատճեռով՝ ինվալիդներին) ու հիվանդ բանվորներին լրիվ աշխատավարձը վճարելու հիվանդության ժամանակաշրջանի համար։ Բանվորական բնակարանային շինարարության ծախքերը, այսինքն ծախսումները, յերկու տարի առաջ, 1924/25 թ., կազմում ելին 132 միլիոնից մի քիչ ավելի, 1925/26 թվին՝ 230 միլ. տվելի, 1926/27 թվին՝ 282 միլ., 1927/28 թ. կկազմեն ավելի քան 391 միլիոն, ներառյալ ԿԳԿ-ի մանիքեսուով վորոշված 50 միլիոնը։ Անցած յերեք տարվա մեջ ընդամենը բանվորական բնակարանային շինարարության վրա, տունց անհատականի, արդյունաբերության, տրանսպորտի, գործկումների և կոռուբացիայի գծով ծախսված է 644,7 միլ., իսկ 1927/28 թվին նշանակվածի հետ միասին՝ 1,036 միլ. ռուբլի։ Այդ հատկացումները յերեք տարվա մեջ հնարավորություն ավելի կառուցելու 4594 հազ. քառ. մետր բնակելի տարածություն, բավարարելու 257 հազ. բանվորի, իսկ ընտանիքների հետ մեկանու՝ մոտ 900 հազ. մարդու։

Դործաղրկության հարցը։ Յես պետք ե ասեմ, վոր այստեղ տարամիտումներ կան ՀԱՄԿԸ-ի ու Աշխադղկոմատի մէջ։ Յես Աշխադղկոմատի թվերն եմ վերցնում այն սպառնառով, վոր նըրանք ընդդրկում են աշխատանքի բորսաների հետ կապված իրոք գործադրություն։ Բայ Աշխադղկոմատի տվյալների՝ գործադրութեակների թիվը յերկու տարվա մեջ աճել է 950 հազարից մինչև 1048 հազար։ Դրանց մեջ ննդուստրիալ բանվորները կազմում են 16,5 տոկ., իսկ մտավոր աշխատանքով սպարապող անձերն ու զուշ-դորակյալ բանվորները՝ 74 տոկոս։ Այսպիսով, մեր գործադղկության հիմնական աղբյուրը գյուղի գերբնակչությունն է և միայն ոժանդակ աղբյուրը՝ մեր արդյունաբերության մասնակի անհաղեցվածությունը ննդուստրիալ բանվորների վորոշ նվազագույն կազմով։

Հանրապումարը՝ ամբողջությամբ վերցրած բանվոր գասակարդի նյութական մակարդակի անտարակուսելի վերելք։

Կուսակցության խնդիրն ե՝ շարունակել բանվոր դասակարգի նյութական մատարական կրության հետազարելական դասակարգական, բանվոր դասակարգի աշխատավարձի հետազարդարացման գիծը։

բ) Գյուղացիությունը։ Յես կարծում եմ, վոր գյուղացիության շերտավորման հարցի վերաբերյալ չարժե թվեր բերել, գորոշ հետեւ իմ զեկուցումն այնպես ել յերկարաձգվեց, իսկ

թվերը հայտնի յեն ամենքին։ Տարակույսի յէնթակա չե, ուր պղողետարական դիկտատուրայի որով տեղի ունեցող շերտավուրումը չի կարելի նույնացնել կառիխալիստական կարգերի ժամանակվա շերտավորման հետ։ Կառիխալվողմի որով աճում են ծայրահեղությունները՝ չքավորությունն ու կուլակությունը, իսկ միջակը վոզողվում-վոչնչանում ե։ Մեղանում, ընդհանականը, միջակն աճում ե չքավորության վորոշ մասի հաշվին, վորը բարձրանում ե, գառնում միջակ, աճում ե կուլակը, իսկ չքավորությունը պահանում։ Այս փաստն այն մասին ե խոսում, վոր հողագործության կենտրոնական դեմքը ինչպես յեղել ե, այնպես ել մնում ե միջակը։ Նրա հետ յեղած բլոկը՝ չքավորության վրա հենվելու պարագայում՝ վճռողական նշանակություն ունի մեր ամբողջ շինարարության ճակատաղրի համար, պրեկտարիատի դիկտատուրայի համար։

Նյութական դրության ընդհանուր աճումը զյուղում։ Մենք թվեր ունենք զյուղացիական բնակչության յեկամուտների աճման մասին։ Գյուղացիական բնակչության յեկամուտները յերկու տարի առաջ, 1924/25 թ. հալասար եին 3548 միլ. ոռորդու, 1926/27 թ. այդ յեկամուտներն աճեցին մինչև 4792 միլ. ոռոր., այսինքն 35,1 տոկոսով, մինչեւու զյուղացիական բնակչությունն այդ ժամանակամիջոցում աճել ե միայն 2,38 տոկոսով։ Սա անտարակիուսելի ցուցանիշ ե այն բանի, վոր գյուղում տեղի յեւ ունենում նյութական դրության բարելավում։

Դա չի նշանակում, թե զյուղացիությունն իր նյութական դրությունը բարելավել ե յերկը բոլոր շրջաններում։ Հայտնի յե, վոր տեղ-տեղ այս յերկու տարվա միջ յեղել են խայտարգետ բերքեր, իսկ 1924 թ. անբերիության հետևանքները դեռևս վոչ լիովին են վերացված։ Այսուելից՝ պետական ոգնությունը աշխատավոր գյուղացիությանն առհասարակ ու գյուղացիական չքավորությանը մասնավորապես։ Պետության կողմից աշխատավոր գյուղացիությանը ցույց տրված ոգնությունը յեղել ե 1925/26 թ. 373 միլ. ոռորի, 1926/27 թ.-427 միլ. ոռոր։ Հատուկ ոգնություն գյուղացիական չքավորությանը 1925/26 թ. ընթացքում։ Չքավորագույն տնտեսությունների համար արված հատկացումների գծով՝ 38 միլ. ոռորի, հարկային արտօնություններ չքավորական տնտեսություններին՝ 44 միլ. ոռոր., ապահովագրական արտօնություններ չքավորագույն գյուղացիությանը՝ 9 միլ. ոռոր., ընդամենը 91 միլ. ոռորի։ Հատուկ

ողնության գյուղական չքավորությանը 1926/27 թ. ընթացքում  
ըստ նույն հատվածների՝ 39 միլ. ռուբ., 52 միլ. ռուբ., 9 միլ.  
ռուբ., —ընդամենը մոտ 100 միլ. ռուբլի:

Հանրագումարը—գյուղացիության հիմնական մասսաների  
նյութական զրության բարելավում:

Կուսակցության խնդիրն ե՝ շարունակել գյուղացիության հիմնական մասսաների, ու ամենից առաջ գյուղացիական չքավո-  
րության, նյութական ու կուլտուրական դրության հետագա բա-  
րելավման գիծը, ամրապնդել բանվոր դասակարգի դաշինքը  
գյուղացիության հետ, բարձրացնել գյուղում բանվոր դասակար-  
գի ու նրա կուսակցության հեղինակությունը:

Դ) Նոր բուրժուազիա: Ինսելիգենցիա: Նոր բուրժուազիայի  
բնորոշ գիծն այն է, վոր բանվոր դասակարգին ու գյուղացիությանը հակադիր՝ նա հիմք չունի գոհ լինելու խորհրդային իշ-  
խանությունից: Նրա գժգոհությունը վորեւ պատահական բան  
չէ: Նա իր արժանաներն ունի կյանքի մեջ: Յես ձեզ ասացի մեր  
ժողովրդական տնտեսության աճման մասին, յես ասացի մեր ար-  
դյունաբերության աճման մասին, ժողովրդական տնտեսության  
սոցիալիստական տարրերի աճման մասին, մասնավորի տեսակա-  
րար կըսի անկման մասին, մանր առևտրականների արտամղման  
մասին: Բայց ի՞նչ ե նշանակում այդ: Այդ նշանակում ե, վոր  
յեթի մեր արդյունաբերությունն ու մեր առևտրական մարմին-  
ներն աճում են, տասնյակ հազարավոր մանր ու միջակ կապիտա-  
լիստներ ավերվում են: Այս տարիների ընթացքում քանի՞ մանր  
ու միջակ կրտսակ ե փակված: Հազարներ: Իսկ քանի՞ մանր ար-  
դյունաբերող ե պրոլետարացել: Հազարներ: Իսկ վո՞րքան ծա-  
ռայող տարր ե ազատված մեր պետական ապարատի հաստիքնե-  
րը կրծատելու ժամանակ: Հարյուր հազարներ: Մեր արդյունա-  
բերության առաջշարժումը, մեր առևտրական ու կոոպերատիվ  
մարմինների առաջշարժումը, մեր պետապարատի բարելավումը  
առաջշարժում ու բարելավում են, վորոնք պլյուս են տալիս  
բանվոր դասակարգի համար, պլյուս՝ գյուղացիության հիմնա-  
կան մասսաների համար, բայց մինուս՝ նոր բուրժուազիայի հա-  
մար, մինուս՝ առհասարակ միջին խովերի և մանավանդ քաղա-  
քի միջին խովերի համար: Կարե՞լի յե արդյոք զարմանալ, վոր  
այդ խովերի մեջ աճում ե գժգոհությունը խորհրդային իշխա-  
նությունից: Պարզ, ե վոր չի կարելի զարմանալ: Այսուհետեւ՝  
հակահեղափոխական տրամադրություններն այդ միջավայրում:

Աստեղից՝ սմենովեխովլյան գաղափարախոսությունը, վորպես մողայական ազրանք նոր բուրժուազիայի քաղաքական չուկացում :

Բայց սխալ կլիներ կարծել, թե ամբողջ ծառայող տաքրը, ամբողջ ինտելիգենցիան և ապրում գժողոհության վիճակ, ալլուսունջի վիճակ կամ խմորումն ընդդեմ խորհրդային իշխանության : Նոր բուրժուազիայի ընդերքում նկատվող դժողոհության աճման կողքին մենք ունենք ինտելիգենցիայի չերտավորման փաստը, սմենովեխականությունից հարյուրավոր ու հաղարավոր աշխատավոր ինտելիգենտների՝ խորհրդային իշխանության կողմն անցնելու փաստը : Այս փաստը, ընկերներ, մի բարերար փաստ է, վոր պետք են չպի : Նախամարտիկ այստեղ հանդիսանում է տեխնիկական ինտելիգենցիան, վորովհետեւ սերտորեն կապված լինելով արտադրության պրոցեսի հետ, նա չի կարող չտեսնել, վոր բուշելիները մեր յերկրի գործը տանում են առաջ, զեկի լավագույնը : Այսպիսի վիթխարի ձեռնարկություններ, ինչպես վոլխովստրոյն և, Դնեպրոստրոյը, Սվիբուրոյը, Թուրքեստանի ձանալպարչը, Վոլգա—Դոնը, մի ամբողջ շարք հսկա գործարաններ, վորոնց ճակատագրի հետ կապված և տեխնիկական ինտելիգենցիայի ամբողջ խավերի ճակատագիրը, չեն կարող անցնել առանց այդ խավերի վրա վորոշ բարերար ազդեցություն գործելու : Դա նրանց համար միայն մի կտոր հացի հարց չե : Դա դրա հետ միասին պատվի վործ և, սուելծագործության բան, վոր բնականաբար նրանց մասեցնում և բանվոր գասակարգի հետ, խորհրդային իշխանության հետ : Ել յես չեմ խոսում դյուզական աշխատավոր ինտելիգենցիայի մասին, մանավանդ դյուզական ուսուցչության մասին, վորը վաղուց ե շրջվել խորհրդային իշխանության կողմը և վորը չի կարող չփողջունել զպրոցական գործի զարգացումը դյուզում : Ուստի ինտելիգենցիայի վորոշ խավերում նկատվող դժողոհության աճման կողքին մենք ունենք աշխատավոր ինտելիգենցիայի՝ բանվոր գասակարգի հետ զոդվելու փաստը :

Կուսակցության խնդիրն այն է, վոր շարունակի նար բուրժուազիան մեկուսացնելու գիծը և ամրապնդի բանվոր դասակարգի գորումը բաղադրում դյուզում : Ուստի ինտելիգենցիայի վորոշ խավերում նկատվող դժողոհության աճման կողքին մենք ունենք աշխատավոր ինտելիգենցիայի հետ :

Դ) Պետական ապարատն ու պայման ընդդեմ բյուրոկրանիդժի : Բյուրոկրատիզմի մասին այնքան շատ են խոսում, վոր կա-

բիք չկա ընդարձակարանելու այդ մասին։ Վոր բյուրոկրատիզմի տարրեր կան մեզանում և՛ պետական, և՛ կոռավերատիվ, և՛ կուսակցական ապարատում, այդ մասին տարակույս լինել չի կարող։ Վոր պայքարը բյուրոկրատիզմի գեմ անհրաժեշտ է, և նա, այդ խնդիրը, չարունակ ծառացած և լինելու մեր առջև, քանի վոր մեզանում կա պետական իշխանություն, քանի վոր գյություն ունի պետառթյունը, այդ ևս փաստ է։ Բայց, այնուամենայնիվ, պետք ե սահմաններ պիտենալ։ Պետական ապարատի բյուրոկրատիզմի գեմ պայքարելու վործը հասցնել պետական ապարատը վոչնչացնելուն, պետական ապարատը պասակաղերծ անելուն, այն ջարդելու փորձերին, —դա նշանակում է գեմ զնալ լինինիզմին, դա նշանակում է մոռանալ, վոր մեր ապարատը խորհրդային ապարատ ե, վորն իր տիպով պետական բարձրադրույն ապարատ և ներկայացնում աշխարհում դյություն ունեցող բոլոր պետական ապարատների համեմատությամբ։ Ի՞նչն ե մեր պետական ապարատի ուժը։ Այն, վոր նա իշխանությունը խորհրդադների միջոցով կազում ե բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների հետ։ Այն, վոր խորհրդադները կառավարման դպրոց են տասնյակ ու հարյուր հազարավոր բանվորների ու գյուղացիների համար։ Այն, վոր պետական ապարատը չի պատվարիվում միլիոնավոր ժողովրդական մասսաներից, այլ միաձուլում ե նրանց հետ անթիվ քանակությամբ մասսայական կաղմակերպությունների, ամեն տեսակ հանձնաժողովների, սեկցիաների, խորհրդակցությունների, պատվիրակակային ժողովների և այլնի միջոցով, վորոնք պատում են խորհրդադներն ու այդպիսով հենարան ծառայում իշխանության մարմինների համար։ Ի՞նչումն ե մեր պետական ապարատի թուլությունը։ Բյուրոկրատական տարրերի առկայությունը նրա մեջ, վորոնք փչացնում ու ինքաթյուրում են նրա աշխատանքը։ Վորակեսղի նրա միջից արտաքին բյուրոկրատիզմը, —իսկ արտաքին այն չի կարելի մեկ-յերկու տարրում, —հարկավոր և սիստեմատիկորեն բարելավել պետական ապարատը, մասսաներին մոտեցնել այն, բանվոր գասակարպի գործին նվիրված նոր մարդկանց հաշվին նորացնել այն, վերակերտել կոմունիզմի վորով և վոչ թե ջարդել այն, և վոչ թե պսակաղերծ անել այն։ Լենինը հազար անդամ իրավացի յեր, յերբ ասում եր։

«Առանց ապարատի մենք վաղուց կորած կլինեյին։ Առանց ապարատը բարելավելու համար սիստեմատիկ, հա-

մաս պայքար մղելու՝ մենք կկործանվենք մինչև սոցիալիզմի բազան ստեղծելը»:

Յես չեմ ընդուժակարանի մեր պետական ապարատի այն թերությունների մասին, վորոնք այնպես ել աչքի յեն ընկնում: Յես ամենից առաջ նկատի ունեմ «մայր-քաջութելը»: Իմ ձեռքում մի ամբողջ կապոց նյութեր կան քաշքառելի մասին, վորոնք մերկացնում են մի շարք դատական, վարչական, ապահովադրական, կոռապերատիվ և այլ կազմակերպությունների հանցավոր անփութությունը: Ահա ձեզ մի գյուղացի, վորը 21 անդամ գնացել ե մեկ ապահովագրական հիմնարկ, վորպեսզի արգարություն գտնի, և, այնուամենայնիվ, վոչինչ չի գտել: Ահա այլ գյուղացի, 66 տարեկան մի ծերունի, վորը 600 վերստ անցել է վոտքով, վորպեսզի մի հարց պարզի գավառական սոցապում, և, այնուամենայնիվ, վոչինչ չի պարզել: Իսկ ահա ձեզ 56 տարեկան մի պառավ գեղջկուհի, վորը ժողովատարանի հրավերով 500 վերստ վոտքով է անցել և ամելի քան 600 վերստ՝ կառքով և, այնուամենայնիվ, արգարություն չի գտել: Այսպիսի փաստեր՝ վորքան կամենաք: Չարժե թվարկել դրանք: Բայց ոս մեզ համար խայտառակություն ե, ընկերները: Ի՞նչորեն կարելի յե հանդուրժել այսպիսի այլանդակությունները:

Վերջապես, «հետքաշվածներին» վերաբերող փաստերը: Բանից գուրս ե զալիս, վոր բացի բանվորների՝ ըրջանից առաջքաշվածներից, գոյություն ունեն «հետքաշվածներ» ել, վորոնք իրենց իսկ բնկերների կողմից հետին պլանն են քայլած վո՛չ թե անընդունակության կամ աշխատել չկարենալու համար, այլ աշխատանքի մեջ ցուցաբերած քարեխաղմության ու աղնվության համար: Ահա ձեզ մի բանվոր, փականադործ-քործիքարար, վորը զործարանում առաջ է քաշվել վորոշ պաշտոնի համար, իբրև ընդունակ ու անկաշառ մարդ: Նա աշխատում է մեկ տարի, յերկու տարի, աշխատում է աղնվորեն, կարգ ու կանոն է մտցնում, վոհնչացնում է անտնտեսավարությունն ու շուայությունը: Բայց, այդ կերպ աշխատելով, նա դիմում է «կոմունիստներից» բողկացած ինչ-վոր ջերմ կոմպանիայի շահերին, վրդովում և արդ «կոմունիստների» հանգիստը: Յեվ ի՞նչ: «Կոմունիստների» այդ ջերմ կոմպանիան խանգարում է նրան ու այդպիսով հարկադրում «հետքաշվել»: «Ուզեցիր մեղանից ավելի խելոք լինել, չես թողնում ապրենք ու շահվենք հանդիսու, —յեղբայր, հետքաշվել»: Իսկ ահա մի ուրիշ բանվոր, նույնպես փականադործ-

դործիքարմար, դնդերիթահատ հաստոցների դործարկիչ, դործարանում առաջ և քաշված վորոշ պաշտոնի համար: Աշխատում և յեւանդուն կերպով ու աղնվաբար: Բայց աշխատելով այլպես վրդովում և ինչ-վոր մարդկանց հանդիսաւ: Յեզ ի՞նչ: Դեպք գտան ու ոձիք թափեցին «անհանդիսա» ընկերոջից: Իսկ ինչո՞վ, վո՞րպիսի զգացմունքով հեռացալ այդ ընկերատաճքաշվածը: Աչա թե ինչ զգացմունքով: «Ամեն տեղ, ուր վոր նշանակում եւ մին ինձ, յես աշխատում եյի արդարացնել ինձ ցույց տված վրատահությունը: Բայց ահա այդ առաջքաշումը, վոր չար կատակ արեց ինձ հետ, յես յերեք չեմ մոռանա: Ինձ ցեխակոլոլ արին: Ամեն ինչ լույս աշխարհ հանելու իմ ցանկությունն այնպիս ել մնաց ցանկությունն: Վո՞չ դործարկոմը, վո՞չ դործարանային վարչությունը, վո՞չ բջիջը լսել անդամ չուղեցին ինձ: Առաջքաշման համար յես մեռա, և թող վոսկի թափեն վրաս, —յես չեմ գնա վոչ մի տեղ» («Տրուկ», № 128, 9 հունվարի 1927թ.): Բայց սա չե՛ վոր խայտառակություն և մեզ համար, ընկերնե՛ր: Ի՞նչպիս կարելի յե հանդուրժել այսպիսի այլանդակություններ:

Կուռակցության խնդիրն այն է, վոր, պայքարելով բյուրոկրատիզմի դեմ ու պետական ապարատի բարեկավման համար, հրաշելի յերկարով այրի մեր պրակտիկայի մեջ այնպիսի այլանդուրժյունները, վորոնց մասին յես հենց նոր խոսեցի:

Եկուլտուրական հեղափոխությանը վերաբերող լինինյան լոգունգի մասին: Բյուրոկրատիզմի դեմ ամենաճիշտ միջոցը բանգորների ու գյուղացիների կուլտուրական մակարդակի բարձրացումն է: Կարելի յե հայնոյել ու անվանաբերել բյուրոկրատիզմը պետական ապարատում, կարելի յե անարդել ու նշաղակության սյունին դամել բյուրոկրատիզմը մեր պրակտիկայում, բայց յեթե բանվորական լայն մասսաների մեջ չկա կուլտուրականության վորոշ մակարդակ, վորն ստեղծում և հնարավորություն, ցանկություն, կարողություն՝ իրենց, բանվորական մասսաների ուժերով ներքեմից վերահսկելու պետական ապարատին, բյուրոկրատիզմը կապրի, չնայած մեր բոլոր ջանքերին: Ուստի բանվոր դասակարդի և գյուղացիության աշխատավոր մասսաների կուլտուրական զարգացումը, —վո՞չ միայն պրագխոտությունը զարգացնելու իմաստով, թեև գրագիտությունը հիմքն է ամեն մի կուլտուրականության, այլ, ամենից առաջ, յերկրի կառավարման գործի մեջ մանելու ընտելություններ ու հմտություններ մի այլ ապարատի բարեկելու իմաստով, —պետական ու ամեն մի այլ ապարատի բարե-

լավման հիմնական լծակն է : Այս ե կուլտուրական հեղափոխությանը վերաբերող լենինյան լոգունդի իմաստն ու նշանակությունը : Ահա թե ինչ եր ասում էնինն այդ մասին 1922 թվի մարտին—մեր կուսակցության Խ համապումարի բացումից առաջ—հետին՝ ընկ . Մոլոտովի անունով որած իր նամակում :

«Գլխավորը, ինչ պակասում ե մեզ,—կուլտուրականությունն է, կառավարիելու հմտությունը : Նեպը տնտեսապես ու քաղաքականորեն միանգամայն ապահովում ե մեզ համար սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման հնարավորությունը : Բանը պրոլետարիատի ու նրա ավանդարդի կուլտուրական ուժերն են «միայն» (XXVII հ., էջ 207) :

Լենինի այս խոսքերը :ի կարելի ժողովածալ, ընկերներ : (Զայ-նել :—«Ճիշտ ե») :

Այստեղից—կուսակցության խնդիրն ե՝ ուժեղացնել պայքարը քանի դանիքը դասակարգի ու զյուղացիության աշխատավորական խավերի կուլտուրական վերելքի համար :

\* \* \*

Իսկ վո՞րն ե հանրապումարը մեր յերկրի ներքին քաղաքական գրության գծով :

Հանրապումարն այն է, վոր խորհրդային իշխանությունն աշխարհում գոյություն ունեցող բոլոր իշխանություններից ամենահաստատուն իշխանությունն է : (Փոքրկալից ծափակարություններ) :

Բայց յեթե խորհրդային իշխանությունն աշխարհում գոյություննեցող բոլոր իշխանություններից ամենահամուլտուն իշխանությունն է, վորին նախանձել կարող և ամեն մի բուրժուատական կառավարություն, ապա դա դեռևս չի նշանակում, թե այդ բնագավառում մեզ մոտ տմեն ինչ բարեհաջող է : Վո՞չ, ընկերներ՝ մենք այս բնագավառում ել մինոււներ ունենք, վոր չենք կարող և չաղետք և թաղցնենք վորպես բոլշևիկներ : Մեղանում, նախ գործազրկություն կա : Սո մէ մինոււ և, վոր մենք պետք ե հաղթահարենք կամ գոնե մինմումի հասցնենք, ինչպես ել լինի : Յերկրորդ, մեղանում կան թերություններ բանվորներին հառկացվող բնակարանային շինարարության մեջ, կա բնակարանային ճգնաժամ, վոր մենք նույնպես պետք ե հաղթահարենք կամ գոնե մինմումի հասցնենք մերձավորագույն տարիներում : Մեղանում անտիսեմիտիզմի վորոշ բողբոջներ կան

վո՛չ միայն միջին խալերի միքանի շրջաններում, այլև բանվորների վորոշ մասում ու նույնիսկ մեր կուսակցության միքանի ողակներում: Այս չարիքի գեմ, ընկերներ, պետք ե պայքարել ամբողջ անողոքությամբ: Մեղանում կա նաև այնպիսի մինուս, ինչպիս հակակրոնական պայքարի թուլացումն ե: Մեղանում, վերջապես, կա կուլտուրական սոսկալի հետամնացություն, վո՛չ միայն այս բառի լայն իմաստով, այլև նրա նեղ իմաստով, տարրական դրադիտության իմաստով, վորովհետև ԽՍՀՄ-ում անդրադիտության տոկոսը մինչև այժմ փոքր չե:

Այս բոլոր ու սրանց նման մինուսները պետք ե վերացվեն, ընկերներ, յեթէ մենք կամ ենում ենք առաջ շարժվել այլելի կամ ողական արագացված տեմպով:

Վորապեսզի վերջացրած լինեմ իմ հաշվետվության այս բաժինը, թույլ տվեք միքանի խոսք առեմ հաշվետու ժամանակաշրջանի ամենից ավելի բնորոշ նշանակությունից մասին: Յես չեմ չոշափի ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի նախագահ ընկ. Ռիկովի տեղակալների նշանակումը: Նմանապես չեմ շոշափի ժողկումների նշանակումը ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ում, Առևտրաժողկոմատում և ՄՊԲՎ-յան մեջ: Յես կիսամենայի շոշափել յերեք նշանակում, վորոնք ունեն ցուցադրական նշանակություն: Դուք գիտեք, վոր ՌՍՖԽ Հ-ԺՏԳԽ-ի նախագահ հաստատված ե ընկ. Լորովը: Դա մետաղադործ բանվոր ե: Դուք գիտեք, վոր Կամենելի փոխարեն Մոսկվայի Խորհրդի նախագահ ե ընտրված ընկ. Ռիվանովը, մետաղադործ բանվոր: Դուք գիտեք նմանապես, վոր Զինովյեվի փոխարեն Լենինգրադի խորհրդի նախագահ ե ընտրված ընկ. Կոմարովը, նույնական մետաղադործ բանվոր: Հետեւարար, մեղանում յերկու մայրաքաղաքի «լորդ-մերերն» ել մետաղադործ բանվորներ են: (Ծափահարություններ): Ճիշտ ե, նրանք աղնվականներից չեն, բայց մայրաքաղաքների անտեսությունը կառավարում են տվելի լավ, քան վորեւ աղնվական: (Ծափահարություններ): Դուք կասեք, վոր մետաղացման տենդե՞նց կա: Յես կարծում եմ, վոր սրանուժ վոչ մի վատ բան չկա (Զայներ—«Ընդհակառակը, շատ լավ ե»): Յանկանանք կապիտալիստական յերկիրներին, ցանկանանք լուսոնին, ցանկանանք Փարիզին, վոր նրանք, վերջապես, հասնեն մեղ ու վորպես «լորդ-մերեր» առաջադրեն իրենց սեփական մետաղադործներին: (Փոքորկալից, յերկարածի ծափահարություններ): բոլորը վոտի կանգնած, վողջունում են ընկ. Ստալինին):

## III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՈՊՈԶԻՑԻԱՆ

### 1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԻՃԱԿԸ

Յես, ընկերնե՛ր, չեմ ընդարձակաբանի մեր կուսակցության թվական ու գաղափարային աճման մասին, թվեր չեմ բերի, վորովհետև այդ մասին մանրամասն ձեզ կցեկուցի ընկ. Կոսիորը՝ նմանապես չեմ խոսի մեր կուսակցության սոցիալական կազմի ու այդ կապակցությամբ թվերի մասին, վորովհետև այդ մասին ձեզ իր հաշվետվության մեջ սպառիչ տվյալներ կհաղորդի ընկեր Կոսիորը։ Յես կկամենայի միքանի խոսք ասել մեր կուսակցության ղեկավար աշխատանքի բարձրացման մասին, վորակային բարելավման մասին՝ տնտեսության բնագավառում, ինչպես և քաղաքականության բնագավառում։ Կար ժամանակ, ընկերնե՛ր, մի յերկու-յերեք տարի առաջ, յերբ ընկերների մի մասը, թվում ե թե, Տրոյկու դիմավորությամբ (ծիծաղ։ Զայներ»—«Թվո՞ւմ ե թե») կը տամբում եր մեր նահանգկոմներին, մեր մարդկոմներին, մեր կերպին, պնդելով, թե կուսակցական կազմակերպությունները ձեռնհաս չեն և զուր են խառնվում յերկրի տնտեսական գործերին։ Այս՝ կար այդպիսի ժամանակ։ Այժմ հազիվ թե վորեա մեկի լեզուն պատվի կուսակցմակերպություններին նմանորինակ մեղադրանք նետելու համար։ Վոր նահանգկոմներն ու մարդկոմները տիրացել են տնտեսական ղեկավարման գործին, վոր կուսակցմակերպությունները տնտեսական շինարարության դրույթ են կանգնած և վոչ թե գտնվում են նրա պոչում, — դա այնպիսի աչքի զարնող փաստ է, վորը բացասելու վճռականություն կունենան թերեւս միայն կույրերը կամ խելազուրկները։ Աբեն այն փաստը, վոր մենք վճռականություն ունեցանք այս համակումարում դնելու տնտեսական շինարարության

Հնդամյա պլանի հարցը, արդեն այս վաստը խոսում է այն  
ժամին, վոր ինչպես տեղերում, այնպես ել կենտրոնում մեր  
տնտեսական շինարարության պլանային զեկավարման գործում  
կուսակցությունը շատ է առաջ շարժվել: Վամանք կարծում են,  
թե այսուղ վորեկ առանձին բան չկա: Վո՛չ, ընկերնե՛ր: Սո  
ինչվոր առանձին ու կարեռ մի բան է, վոր պետք է նշի: Յերեմին վկայակոչում են ամերիկյան, գերմանական տնտեսական  
մարմինները, վորոնք իրեն թե նույնպես պլանային կարգով են  
զեկավարում ժողովրդական տնտեսությունը: Վո՛չ, ընկերնե՛ր,  
այդ բանին նրանք դեռ չեն հասել ու չեն հասնի այնտեղ, քանի  
վոր այնտեղ գոյություն ունեն կապիտալիստական կարգերը: Պա-  
նային կարգով զեկավարելու համար պետք է ունենալ արդյու-  
նաբերության այլ, սոցիալիստական և վոչ թե կապիտալիստա-  
կան սիստեմ, պետք է ունենալ դոնե արդյունացված արդյունա-  
բերություն, աղդայնացված վարկային սիստեմ, աղդայնացված  
հող, սոցիալիստական զողումն զյուղի հետ, յերկրում բանվոր  
զաստակարգի իշխանություն և այլն: Ճիշտ է, նրանք ես ունեն  
պլանների նման ինչ-վոր բան: Բայց դրանք պլան-պրոյնողներ  
են, պլան-կուահումներ, վորոնք վոչ վոքի համար պարտադիր  
չեն և վորոնց հիման վրա անհնարին և զեկավարել յերկրի  
տնտեսությունը: Այլ ե մեզանում: Մեր պլանները վո՞չ թե  
պլան-պրոյնողներ, վո՞չ թե պլան-կուահումներ են, այլ պլան-  
դիրկուլիներ, վորոնք պարտադիր են զեկավար մարմինների  
համար և վորոնք վորոշում են ամբողջ յերկրի մասնաբոլ մեր  
տնտեսական զարգացման ուղղությունն ապագայում: Դուք  
տեսնում եք, վոր այստեղ մենք ունենք սկզբունքային տարե-  
րություն: Ահա թե ինչու յեմ յես ասում, վոր տնտեսական  
զարգացման հնդամյա պլանի հարցը համադումարում գնելու  
սոսկ փաստն անդամ հանդիսանում է մեր պլանային զեկավար  
աշխատանքի բարձրացման նշան:

Ես նմանապես չեմ բնդքարձակարանի ներկուսակցական գեմո-  
կարատիայի աճման մասին՝ մեր կուսակցության մեջ: Միայն կույ-  
րերը չեն տեսնում, վոր ներկուսակցական գեմոկրատիան, ներկու-  
սակցական իրական զեմոկրատիան, կուսակցական մասսաների  
ակտիվության իրական վերելքը—մեզանում աճում է ու զարգա-  
նում: Շաղակրատում են զեմոկրատիայի մասին: Բայց ի՞նչ ե զե-  
մոկրատիան կուսակցության մեջ: Ում համար է զեմոկրատիան: Յեթե զեմոկրատիա ասելով հասկանում են հեղափոխությունից

կորպած մեկ-յերկու զույգ ինտելիգենտների համար աղասություն՝ անվերջ շաղակրատելու, ունենալու իրենց տպագիր որդքանը և այլն, ապա այդպիսի «դեմոկրատիա» մեղ հարկավոր չե, վորովհետեւ նա դեմոկրատիա յե չնչին փոքրամասնության համար, վորը կոսրում և ահազին մեծամասնության կամքը: Իսկ յեթե գեմոկրատիա տսելով հասկացլում ե կուսակցական մասների համար աղասություն՝ վճռելու մեր շինարարության հարցերը, հասկացվում ե կուսակցական մասսաների ակտիվության բարձրացումը, նրանց ներքաշումը, ապա այդպիսի դեմոկրատիա կամքանում, նա հարկավոր ե մեղ, և մենք անշեղորեն զարդացնելու յենք այն, չնայած վոչ մի բանի: (Ծափակարություններ):

Յես, ընկերներ, չեմ ընդարձակարանի նույնպես այն մասին, վոր ներկուսակցական դեմոկրատիայի հետ մեկտեղ մեղանում քայլ առ քայլ աճում և դեկավարության կոլեգիալությունը: Վերցրեք մեր կուսակցության հարցերը: Դա մեր կուսակցության յերբեն ունեցած կենտրոններից ամենալեմոկրատական ու կոլեգիալ գործող կենտրոններն են: Յեզ ի՞նչ: Մի՞թե դա փաստ չե, վոր մեր աշխատանքի կարևորագույն հարցերի լուծումն ավելի ու ավելի յե նեղ վերնախափի ձեռքից անցնում այդ լայն կենտրոնի ձեռքը, իսկ այդ կենտրոնն ամենասերտ կերպով կապված է շինարարության բոլոր ճյուղերի և մեր անծայրածիր յերկրի բոլոր ընդաների հետ:

Յես նմանապես չեմ ընդարձակարանի մեր կուսակցական կադրերի ամման մասին: Անվիճելի յե, վոր այս վերջին տարիներում մեր կուսակցության հին կազմերը թափանցվեցին դեպի վեր ընթացող նոր կազմերով, վորոնք գլխաւորապես բանվուներից եյին բազկացած: Յեթե առաջներում մենք մեր կազմերը հաշվում եյինք հարյուրներով ու հազարներով, ապա այժմ մենք նրանց պետք է տասնյակ հազարներով հաշվենք: Յես կարծում եմ, վոր յեթե սկսենք ամենասոսրին կազմակերպություններից ցեխայիններից, ողակայիններից, ու ամբողջ Միությունովը մեկ զնանք մինչեւ վերը, մեր կուսակցական կազմերը, վոր յերենց ահազին մեծամասնությամբ բանվորներից են բաղկացած,

այժմ կկազմեն վոչ պակաս քան 100000 մարդ։ Սա մեր կուսակցության մեծագույն աճումն է։ Սա մեր կադրային կազմի մեծագույն աճումն է, նրա գաղափարային - կազմակերպական փորձի աճումը, նրա կոմունիստական կուլտուրայի աճումը։

Վերջապես, մի հարց ես, վորի մասին կարիք չկա լնդարձակարանելու, բայց վորը հարկավոր են նշել։ Դա մեր յերկրում անկուսակցական բանվորների և առհասարակ աշխատավոր մասաների մեջ, ամբողջ աշխարհում բանվորների ու առհասարակ ձնշված գասակարգերի մեջ կուսակցության հեղինակության աճման հարցն է։ Այժմ հաղիվ թե կարելի լինի տարակրուել, վոր մեր կուսակցությունն ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների համար դառնում ե աղատագրման գրոշ, իսկ բոլցեկիկ կոչումը՝ պատվավոր կոչում բանվոր դասակարգի լավագույն մարդկանց համար։

Այս ե, ընկերներ, ընդհանուր առմամբ մեր նվաճումների պատկերը կուսակցական շնարարության բնագավառում։

Սա, ընկերներ, չի նշանակում, թե մեզանում, կուսակցության մեջ չկան թերություններ։ Վո՞չ, թերություններ կան, և լուրջ թերություններ։ Թույլ տվելք միքանի խոսք ասել այդ թերությունների մասին։

Վերցնենք, որինակ, տնտեսական ու այլ կազմակերպությունները կուսակցական կազմակերպությունների կողմից վեկալարելու դորձը։ Արդյոք ամեն բան և մեզանում այսուեղ բարեհաջող։ Վո՞չ, վո՞չ ամեն բան։ Մեզանում հաճախ հարցերը վո՞չ միայն տեղերում, այլև կենտրոնում լուծվում են, այսպես ասած, ընտանեկան կարգով, տնավարի։ Այսինչ կազմակերպության ղեկավար վերնախավի անդամ իվան իվանովիչը, ասենք, թույլ ե տվել ամենակոպիտ սխալ ու փչացրել ե դորձը։ Բայց իվան Ֆեոդորովիչը չի կամենում նրան քննակատել, հայուարերել նրա սխալները, ուղղել նրա սխալները։ Զի կամենում, վորովհետեւ ցանկություն չունի «իր համար թշնամիներ վաստակելու»։ Թույլ են տվել սխալ, փշացրել են դորձը, —ի՞նչ մի կարևոր բան է։ Իսկ մեզանից ո՞վ չի սխալիում։ Այսոր յես նրան, իվան Ֆեոդորովիչն, կինայիմ։ Վաղը նա ինձ, իվան իվանովիչիս, կինայի։ Վորովհետեւ ի՞նչ յերաշխիք կա, վոր յես նույնպես չեմ սխալի։ Բարեվայլուչ ե և լավ։ Խաղաղություն ու հաճություն։ Անուշաղբության մատնված սխալը մեր մեջ դորձի փչացո՞ւմն է։ Վոչի՞նչ չ

Դուցե մի կերպ զուրս պրծնենք կորագծի ողնությամբ։ Ահա, ընկերնե՛ր, մեր միքանի պատասխանառու աշխատողների սովորական դատողությունը։ Բայց սա լո՞նչ ե նշանակում։ Յեթե մենք, բոլչեկիներս, վոր քննադատում ենք ամբողջ աշխարհը, վոր Մարքսի խոսքերով ասած՝ գրոհում ենք յերկնքի դեմ, յեթե մենք այս կամ այն ընկերների հանդսության համար հրաժարվենք ինքնաքննադատությունից, — ապա մի՞թե պարզ չե, վոր դրանից վոչինչ չի կարող ստացվել, բացի մեր մեծ գործի կործանումից։ (Զայներ—«Ճի՛շտ ե»։ Ծափահարություններ)։ Մարքսն ասում եր, վոր պրոլետարական հեղափոխությունն, եմիջի այլոց, հենց նրանով ե տարբերվում ամեն մի այլ հեղափոխությունից, վոր ինքն իրեն ե քննադատում նա, և, իրեն քննադատելով, ամրապնդվում ե։ Սա Մարքսի շատ կարևոր ցուցումն ե։ Յեթե մենք, պրոլետարական հեղափոխության ներկայացուցիչներս, աչք փակենք մեր բացերի վրա, հարցերը լուծենք ընտանեկան կարգով, փոխադարձաբար լուսության տալով մեր սիսալներն ու մեր կուսակցական որդանիզմի ներսը քենք խոցերը, ապա ել ո՞վ ե ուղղելու այդ սխալները, այդ բացերը։ Մի՞թե պարզ չե, վոր մենք կդադարենք պրոլետարական հեղափոխությունը, այդ ընտանեկանությունը մեր շինարարության կարելվորագույն հարցերի լուծման մեջ։ Մի՞թե պարզ չե, վոր, հրաժարվելով աղնիվ ու շիտակ ինքնաքննադատությունից, հրաժարվելով մեր սիսալների աղնիվ և բացահայտ ուղղումից, մենք մեզ համար փակում ենք առաջարժման, մեր գործի բարեկավման, մեր գործի նոր հաջողությունների ճանապարհը։ Զե՞ վոր մեր զարդացումն ընթանում է վոչ սահուն անվերապահվերելը կարգով։ Վո՞չ, ընկերնե՛ր, մեղանում կան դասակարգեր, մեղ մոտ յերկրի ներսում կան հակասություններ, մենք ունենք անցյալ, մենք ունենք ներկա ու ապագա, մենք նրանց միջև ունենք հակասություններ և մենք չենք կարող առաջարժման վերել կյանքի ալիքների վրա սահուն կերպով ճոճվելու կարգով։ Մեր առաջարժումն ընթանում ե պայքարի կարգով, հակասությունների զարգացման կարգով, այդ հակափոխությունների հայտաբերման ու վերացման կարգով։ Քանի վոր դասակարգեր կան, մենք յերբեք ի վիճակի չենք լինի ունենալու այնպիսի վիճակ, յերբ

կարելի կլինի ասել. դեհ, վասոք աստծու, այժմ ամեն ինչ լովել : Մեղանում, ընկերներ, յերեք այդ բանը չի լինի : Մեղանում միշտ վորեկ բան մահանում է կյանքում : Բայց այն, ինչ վոր մահանում է, չի կամենում մեռնել պարզապես, այլ պայտքարում է իր գոյության համար, պաշտպանում է իր վաղեմացած գործը : Մեզ մաս միշտ վորեկ նոր բան ծնվում է կյանքում : Բայց այն, ինչ վոր ծնվում է, ծնվում է վո'չ թե պարզապես, այլ ծվում է, ճշում, գոյության իր իրավունքը պաշտպանելով : (Զայներ. «Ճիշտ ե» : Ծափակարություններ) : Պայտքար հնի ու նորի միջև, մահացաղի ու ծնվողի միջև, —ահա մեր զարգացման հիմքը : Բացահայտորեն ու աղնիվ կերպով չնշելով ու չհայտաբերելով բացերն ու սխալները մեր աշխատանքի մեջ, ինչպես դա վայել ե բոլցելիկներին, մենք մեղ համար վակում ենք ճանապարհը դեպի առաջ : Իսկ մենք կամենում ենք առաջ շարժմել : Յեվ հենց այն պատճառով, վոր մենք կամենում ենք առաջ շարժմել, մենք պետք ե իրեն մեր կարեւորագույն խնդիրներից մեկը դնենք աղնիվ ու հեղափոխական ինքնաշխանագատությունը : Առանց գրան չկա առաջարիժում : Առանց դրան չկա զարգացում : Բայց հենց այս զծով մեղանում գեուես կազում է դործը : Ե՛լ ավելին . բալական է միքանի հաջողություն, վորպեսովի մոռանան թերությունների մասին, հանդստանան ու դուռզանան : Յերկու-յերեք մեծ հաջողություն ու արգեն ծավր ծնկներից ե թվում : Ելի յերկու-յերեք մեծ հաջողություն-է արդեն գոռողացան, զվարկներով կհազթենք : Բայց սխալները մնում են, բացերն ապրում, խոցերը քշվում մեր կուսակցական որդանիզմի ներսը :

Յերկորդ թերությունը : Դա վարչարարության մեթոդը կուսակցության մեջ փոխադրելն է, կուսակցության մեջ վճռողական նշանակություն ունեցող՝ համոզելու մեթոդը վարչարարության մեթոդով փոխարինելը : Այս թերությունը պակաս նշանավոր վտանգ չի ներկայացնում, քանի թե առաջին թերությունը : Ինչո՞ւ : Այն պատճառով, վոր նա ստեղծում է ինքնաղործ կաղմակերպություններ հանդիսացող մեր կուսակցական կազմակերպությունները զբանենյակային զատարկ հաստատությունների փոխարիելու վտանգ : Յեթե հաշվենք, վոր մենք ունենք վոչ պակաս քան 60 հազարմետից ավելի ակտիվ աշխատողներ, վորոնք ցրված են ամեն տեսակի տնտեսական, կառպերատիվ ու պետական հիմնարկներում ու այնտեղ պայքարում

Յն բյուրոկրատիզմի դեմ, ապա պհաք ե ընդունել, վոր նրանց մի մասը՝ այդ հիմնարկներում պայքարելով բյուրոկրատիզմի դեմ, յերբեմն ինքն և վարակվում բյուրոկրատիզմով և այն առաջուծում ե կուսակցական կազմակերպության մեջ; Յեվ դա վո՞չ թե մեր մեղքն ե, ընկերնե՞ր, այլ մեր դժբախտությունը, վորովհետեւ քանի կա պետությունը, այդ պրոցեսն ավելի կամ պակաս չափով շարունակվելու յեւ: Յեվ հենց այն պատճառով, վոր այդ պրոցեսը վորոշ արմատներ ունի կյանքում, հենց այդ պատճառով մեղ անհրաժեշտ ե զինվել այս թերության դեմ պայքարելու համար, բարձրացնելով կուսակցական մասսաների ակտիվությունը, ներդրավելով նրանց մեր կուսակցական դեմքավարության հարցերի լուծման մեջ ու սիստեմատիկորեն արագատվորելով ներկուսակցական դեմոկրատիան:

Յերրորդ թերությունը: Նա, այդ թերությունը, մեր մի շարք ընկերների ցանկությունն է՝ հոսանքով լողալու, սահուն ու հանգիստ, առանց հեռանկարների, առանց ապաղայի մեջ հայացք նետելու, — այնպես, վոր չորս կողմն զդացվի տոնական ու հանգիստով արամազդրություն, վոր յուրաքանչյուր որ մեզանում լինեն հանգիստով նիստեր, և վոր ամենուրեք լինեն ծափահարություններ, և վոր մեղանց յուրաքանչյուրը հերթով ընկնի ամեն տեսակ նախադահությունների մեջ վորպես պատվավոր անդամ (ծիծաղ, ծափահարություններ): Ամենուրեք տոնական տրամադրություն տեսնելու ահա այս անդամով ցանկությունը, այս ձգտումը զեսի զեկորացիաները, դեսի ամեն տեսակի հարկավոր ու անհարկավոր հորելյանները, այս ցանկությունը՝ լողալու, քանի լողալ կարելի յեւ, չչըջահայելով, թե այս ուր և քշում-տանում մեզ (ծիծաղ, ծափահարություններ) — այս ամենն ել կազմում ե մեր կուսակցական պրակտիկայի յերրորդ թերության եյությունը, մեր թերությունների հիմքը մեր կուսակցական կենցաղի մեջ: Դուք արդյոք տեսնել եք թիավարներ, վորոնք թիավարում են աղնոյորեն, քրտինքը յերեսներին, բայց չեն տեսնում, թե ուր ե նրանց տանում հոսանքը: Յես տեսնել եմ այդպիսի թիավարներ Յենիսեյի վրա: Դրանք աղնիվ ու անխօնջ թիավարներ են: Բայց նրանց դժբախտությունն այն ե, վոր նրանք չեն տեսնում և չեն կամենում տեսնել այն, վոր ալիքը նրանց կարող ե ժայռին խփել, վորոնեղ կործանում ե սպառնում նրանց: Նույն բանը պատճառում ե մեր միքանի ընկերներին: Թիավարում են աղնվորեն, առանց ձեռքներին զաղար տալու, լողում են սահուն

կերպով, հոսանքին հանձնվելով, իսկ թե ուր ե տանում իրենց, վո՞չ միայն չփխտեն, այլ նույնիսկ չեն կամենում դիտենալ: Աշխատանք առանց հեռանկարների, աշխատանք առանց զեկի ու առանց առաղաստի, — ահա թե ինչ բանի յե հասցնում անպատճառ հոսանքով լողալու ցանկությունը: Իսկ արդյունքնե՞րը: Արդյունքները պարզ են. նախ բորբոս և պատում նրանց, հետո նրանք դառնում են գորշավուն, հետո նրանց ներս և քաշում քաղքենության տիզմը, իսկ հետո նրանք դառնում են սովորական քաղքենիներ: Հենց սա յե իրական վերասերման ուղին:

Ահա, ընկերնե՞ր, մեր կուսակցական պրակտիկայում ու մեր կուսակցական կենցաղում ինչ-ինչ թերություններ, վորոնց մասին յես կամենում եյի միքանի դառը խոսք տոել ձեզ:

Իսկ այժմ թույլ տվեք անցնել դիսկուսիայի ու մեր այսպես կոչված ուղղղիցիայի հարցերին:

## 2. ԴԻՍԿՈՒՍԻԱՅԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Դիսկուսիան ունի<sup>o</sup> արդյոք վորեե իմաստ, վորեե արժեք: Յերբեմն ասում են. ինչի<sup>o</sup> համար զուք հրահրեցիք դիսկուսիան, ո՞ւմ և պետք այն, արդյոք ավելի լավ չե՞ր լինի միայն հարցերը լուծել ներքին կարգով, ազրը խրճիթց գուրս չտանկելով: Դա ճիշտ չե, ընկերնե՞ր: Դիսկուսիան յերբեմն բացարձակապես անհրաժեշտ ե ու անպայման ողակար: Ամբողջ հարցն այն և, թե ինչպիսի դիսկուսիան: Յեթե դիսկուսիան ընթանում է ընկերական շրջանակներում, կուսակցական շրջանակներում, յեթե նա իրեն նպատակ է դնում աղնիվ ինքնաքննադատությունը, կուսակցական թերությունների քննադատությունը, յեթե նա, հետեւաբար, բարելավում է մեր գործը և զինում բանվոր դասակարդին, ապա այդպիսի դիսկուսիան հարկավոր է ու ոգտակար: Բայց լինում է այլ տեսակի դիսկուսիա, վոր իրեն նպատակ է դնում վո՞չ թե մեր ընդհանուր գործի բարելավումը, այլ նրա վատթարացումը, վո՞չ թե կուսակցության ամրացումը, այլ նրա պսակաղերծումը: Այսպիսի դիսկուսիան սովորաբար տանում է վո՞չ թե դեպի պրոլետարիստի զինումը, այլ դեպի նրա զինաթափումը: Մեզ հարկավոր չե այդպիսի դիսկուսիան: (Զայներ—«Ճիշտ» հ): Ծափակարություններ):

Յերբ վոր ուղղղիցիան պահանջում եր համամիութենական դիսկուսիայի բացումն մի յերեք ամիս համակումարից տուած,

մինչև կե-ի թեղիսների մշակումը, մինչև այդ թեղիսների հրապարակումը, նա փորձում էր մեր շնորհն վախթել այն տեսակի մի դիսկուսիա, վորն անխուսափելիորեն կհեջտացներ մեր թշնամիների գործը, բանվոր դասակարգի թշնամիների գործը, մեր կուսակցության թշնամիների գործը: Հենց այդ պատճառով ել եղան հակառակեց ուղղվեցիայի պլաններին: Յեվ հենց այն պատճառով, վոր նա հակառակեց ուղղվեցիայի պլաններին, մեզ հաջողվեց ձիւտ ուելսերի վրա դնել դիսկուսիան, նրան բազա տալով համալրումարի համար. կե-ի նախապատրաստած թեղիսների ձեռվով: Այժմ մենք կարող ենք առանց տառանումների տաել, վոր ամբողջությամբ վերցրած դիսկուսիան պլյուս տվեց: Ինչ վերաբերում ե ազգը խրճիթից դուրս տանելուն, ապա դա անմտություն ե, ընկերներ: Մենք յերբեք չենք վախեցել և չենք վախենա ամբողջ կուսակցության առաջ բացահայտորեն քննադատելու մեջ ու մեր սխաները: Բոլցեկոմի ուժն իսկապես այն և հենց, չոր նա չի վախենում քննադատությունից և իր թերությունների քննադատության մեջ յեռանդ ե քաղում հետապա առաջարժան համար: Այսպիսով, այժմ յան դիսկուսիան մեր կուսակցության ուժի հատկանիշը, մեր կուսակցության հղորության հարկանիշն ե հանդիսանում:

Զպետք ե մոռանալ, վոր ամեն մի մեծ կուսակցության մեջ, մանավանդ այնպիսի կուսակցության մեջ, ինչպիսին մերն ե, վոր իշխանության զլուխ ե կանդնած և վորտեղ զյուղացիների ու ծառայող տարրի վորոշ մաս կա, վորոշ ժամանակի ընթացքում կուսակլում են կուսակցական պրակտիկայի հարցերի նկատմամբ վորոշ ինդիֆերենտ, անտարբեր տարրեր, վորոնք քվեարկում են աչքիրը փակելով ու լողում հոսանքով: Այսպիսի տարրերի մեծ քանակության առկայությունը մի չարեք ե, վորի դեմ պետք ե պայքարել: Այդ տարրերը մեր կուսակցության ճահճին են կազմում: Դիսկուսիան դիմումն ե այդ ճահճին: Ուղղվեցիոններները նրա համար են դիմում նրան, վորպեսդի վորոշ մաս պոկեն նրանից: Յեվ նրանք իրոք պոկում են նրա վատթարագույն մասը: Կուսակցությունը նրան դիմում ե այն նստառակով, վոր նրա լավագույն մասը պոկեն նրանից, հաղորդակից դարձնի կուսակցական ակտիվի կյանքին: Դրա հետեանքով ճահճին ստիպված ե ինքնորոշվել, չնայած իր ամբողջ անշարժության: Յեվ նա իրոք ինքնորոշվում ե այդ դիմումների հետեանքով, մեջասը տալով ուղղվեցիային, մյուսը՝ կուսակցությանը, ու, այդ-

պիտով, գաղարելով վորպես ճահիճ դոյություն ունենալուց : Մեր կուսակցական զարգացման ընդհանուր հաշվեկշռի մեջ գա պլատակ : Այժմ յան դիմուսիայի հետևանքով մեզանում ճահիճը փոքրացավ կամ նա բոլորովին գաղարեց կամ գաղարում է դոյություն ունենալուց : Սա դիմուսիայի ոլլյուսն է :

Դիմուսիայի հանրապումարնե՞րը : Հանրապումարները հայտնի յեն : Առ յերեկվա որը կուսակցության ողափին, դուքս և գալիս, վոր քվեարկել են 724 հազ. ընկերներ, ոսկողիցիայի ողափին՝ և հաղարից մի քիչ ավելի : Ահա ձեզ հանրապումարը : Մեզանում ոսկողիցիուներները դղրդոց ելին հանում, թե ԿԿ-ն կարվել և կուսակցությունից, կուսակցությունը կարվել և դասակարգից, վոր յեթե և իցե թե բերանում սունկեր բուսնեյին, ապա նրանք, ոսկողիցիուներները, հաստատապես 99 տոկ. կունենային իրենց կողմը : Բայց վորովհետեւ սունկերը բերանում չեն բուսնում, ապա դուքս յեկամ, վոր ոսկողիցիան 1 տոկոս իսկ չունի : Այս և հանրապումարը :

Ի՞նչպես կարող եր պատահել, վոր ամբողջությամբ վերցրած բովանդակ կուսակցությունը, իսկ նրա հետեից և բանվոր գասակարգը այսպես խիստ կերպով մեկուսացրին ոսկողիցիան : Զհ՝ վոր այստեղ, ոսկողիցիայի զլուխ են կանգնած անուն ունեցող հայտնի մարդիկ, մարդիկ, վորոնք դիտեն ունկած անել իրենց համար (Ճայներ—«Ճիշտ ե»), մարդիկ, վորոնք չեն տառապում համեստությամբ (Ճափահարություններ), վորոնք դիտեն զովարանել իրենց ու լավ կողմից ցույց տալ ապրանքը : Իսկ զա անդի ունեցավ այն պատճառով, վոր ոսկողիցիայի զեկավար խուժաւոր գուրս յեկամ մանր-բուրժուական ինսելիքնենների մի խուժ, վորոնք կտրված են կյանքից, կտրված են հեղափոխությունից, կտրված են կուսակցությունից, բանվոր գասակարգից : (Ճայներ—«Ճի՛շտ ե») : Ծափահարություններ) : Յես նոր խոսեցի մեր աշխատանքի հաջողությունների մասին, մեր նվաճումների մասին՝ արդյունաբերության բնագավառում, առեւտրի բնագավառում, ամբողջությամբ վերցրած անտեսության բնագավառում, արտաքին քաղաքականության բնագավառում : Բայց ոսկողիցիան դորժ չունի այդ նվաճումների հետ : Նա չի տեսնում դրանք,

1 Բուսերեն ժողովրդական արտահայտություն ե, դործ և ածվում ծայրահեղորեն տարակուսելի, խիստ թեյական յենթագրությունները ծայրելու համար : Ծան. հայ. քարզմ. խմբ. :

կամ տեսնել չի կամ ենում : Զի կամ ենում տեսնել մասամբ իր տպիտության պատճառով , մասամբ կյանքից կրրված ինտելիգենտների հայտնի համառության պատճառով :

### 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ,

Դուք հարց կտաք , առաջ ինչո՞ւն են վերջիվիրջո տարածայնությունները կուսակցության ու ոպողիցիայի միջև , ի՞նչ հարցերում են արտահայտվում այդ տարածայնությունները : Բոլոր հարցերում , ընկերներ : (Զայներ—«Ճի՞շտ ե») : Նորեքս յես կարդացի հայտարարությունը Մոսկվայի մեկ անկուսակցական բանվորի , վորը մտնում է կամ արդեն մտել և կուսակցության մեջ : Ահա թե ինչպես ենա ձեւակերպում կուսակցության ու ոպողիցիայի տարածայնությունների հարցը .

«Առաջ մենք վորոնում եյինք , թե ինչումն են կուսակցության ու ոպողիցիայի տարածայնությունները : Իսկ այժմ արդեն չես գտնի , թե ինչումն են նրանք համաձայն կուսակցության հետ : (Ծիծաղ , ծափահարություններ) : Առողջիցան կուսակցության դեմ և բոլոր հարցերում , ուստի , յեթե յես կողմանակից լինելի ոպողիցիային , չես չեյի մտնի կուսակցության մեջ» (Ծիծաղ : Ծափահարություններ) : (Տես «Բղվեստիա» № 264) :

Ահա թե յերբեմն բանվորները վոր աստիճանի դիպուկ ու գրահամարդ հակիրճ արտահայտվել կարողանում են : Յես կարծում եմ , վոր սա ամենաղիպուել ու ամենաճիշտ բնութագիրն ե այն վերաբերմունքի , վոր ոպողիցիան ունի դեպի կուսակցությունը , գեպի նրա գաղափարախոսությունը , նրա ծրագիրը , նրա տակտիկան : Հենց այն պատճառով , վոր ոպողիցիան կուսակցության հետ տարածաքարծիք և բոլոր հարցերում , հենց այդ պատճառով ոպողիցիան մի խումբ ե՝ իր զաղափարախոսությամբ , իր ծրագրով , իր տակտիկայով , իր կազմակերպական սկզբունքներով : Այն ամենը , ինչ վոր անհրաժեշտ ե նոր կուսակցության համար , այդ ամենն ունի ոպողիցիան : Դրա համար պակասում ե միայն մի «մանրունք» , ուժն ե պակասում : (Ծիծաղ : Ծափահարություններ) :

Յես կարող եմ անվանել յոթ հիմնական հարցեր , վորոնցում

տորածայնություններ տեղի ունեն կուսակցության ու ոպողիցի-  
այի միջև :

Առաջինը : Մեր յերկրում սոցիալիստական հաղթական շինա-  
րարության հետավորության հարցը : Յես չեմ վկայակոչչ ոպո-  
ղիցիայի՝ այս հարցին վերաբերող վավերագրելո՞ն ու հայտարա-  
րությունները : Նրանք ամենքին հայտնի լին և հարկ չկա նրանք  
կը կնելու : Ամենքի համար պարզ ե, վոր ոպողիցիան ժխտում ե  
սոցիալիզմի հաղթական կառուցման հնարավորությունը մեր  
յերկրում : Իսկ ժիստելով այդպիսի հնարավորությունը, նա ուղ-  
ղակի և բացահայտ կերպով դրորվում ե մենչեմիների գիրքը :  
Ոպողիցիայի այսպիսի դիրքավորումը տվյալ հարցում նոր չե  
նրա այժմյան դեկավաների համար : Այս դիրքավորումից եյին  
յելնում կամենելին ու Զինովյելը, յերբ նրանք հրաժարվեցին  
Հոկտեմբերյան ապստամբությանը մասնակցելուց : Նրանք այն  
ժամանակ ուղղակի ասում եյին, թե ապստամբություն բարձ-  
րացնելով՝ մենք դեպի կործանում ենք դնում, վոր պետք ե  
սպասել Սահմանադիր ժողովին, վոր սոցիալիզմի համար պայ-  
մանները չեն հասունացել ու շուտ չեն հասունանա : Նույն այլ  
դիրքավորումից եր յելնում Տրոցկին, յերբ նա համաձայնում  
եր ապստամբությանը մասնակցելու : Վորովչետի նա ուղղակի  
ասում եր, վոր յեթե ամելի կամ պակաս մոտավոր ապագայում  
ողնության չհամար արևմուտքի պրոլետարական հաղթական հե-  
ղափոխությունը, ապա հիմարություն կլիներ կարծել, թե հե-  
ղափոխական Ռուսաստանը կարող ե գիմակայել պահպանողա-  
կան Յելլոպային :

Իսկապես, այն ժամանակ ի՞նչպես եյին ապստամբելու դնում  
մի կողմից՝ կամենելին ու Զինովյելը, մյուս կողմից՝ Տրոցկին,  
յերբոք կողմից՝ Լենինն ու կուսակցությունը : Սա շատ հետա-  
քըրքրական հարց ե, վորի մասին արժեքը, ընկերները, միքանի  
խոսք ասել : Դուք գիտեք, վոր կամենելին ու Զինովյելը ապրու-  
տամբելու դնում եյին հարկադրանքի տակ : Լենինը նրանց քշում  
եր փայտով, սպառնալով կուսակցությունից վտարել (ծիծառ,  
ծափահարություններ), և նրանք ստիպված եյին քաշ դալով  
դնալ դեպի ապստամբություն (ծիծառ, ծափահարություններ) :  
Տրոցկին հոժարակամ եր դնում ապստամբելու : Բայց նա դնում  
եր վո՞չ թե պարզապես, այլ մի վերապահությամբ, վորն ար-  
դեն այն ժամանակ նրան մոտեցնում եր կամենելին ու Զինով-  
յելին : Հետաքրքրական ե, վոր հենց Հոկտեմբերից առաջ, 1917

թվի հունիսին, Տրոցկին տեղին համարեց վերահրատարակել Լենինիդրագում իր «Հաշտության ծրագիրը» հին բրոցյուրը, դրանով մի տեսակ առել ցանկանալով, թե ինքը սեփական գրոշակի տակ և գնում գեղի ապատամբություն։ Իսկ ինչի՞ մասին և նախոսում այդ բրոցյուրում։ Նա այնտեղ բանավիճում և Լենինի հետ մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության հարցի առթիվ, Լենինի այդ միտքը համարում և սխալ և պղնուած է, թե իշխանությունը հարկ կլինի վերցնելու, բայց յեթե չհասնի հաղթանակած արեւմտա-յերազական բանվորների ոգնությունը, ապա անհուսալի յե կարծել, թե հեղափոխական Ռուսաստանը կարող և գիմակայել պահպանողական Յեվրոպային, իսկ ով չի հավատում Տրոցկու քննադատությանը, նա տառապում և ազգային սահմանափակությամբ։ Ահա մի քաղվածք Տրոցկու այն ժամանակիա բրոցյուրից։

«Զսպասելով մյուսներին՝ մենք սկսում ու շարունակում ենք պայքարն ազգային հողի վրա, լիակատար կերպով վրատահ, վոր մեր նախաձեռնությունը զարկ կտա պայքարին մյուս յերկիրներում։ Իսկ յեթե այդ տեղի չունենար, ապա անհուսալի յե կարծել—այսպես են վկայում և՛ պատմության փորձը, և՛ թերորիական նկատառումները — թե, որինակ, հեղափոխական Ռուսաստանը կարող կլինել դիմակայել պահպանողական Յեվրոպային»... «Սոցիալական հեղափոխության հեռանկարները դիտել ազգային շրջանակներում՝ կնշանակեր զոհ դառնալ հենց այն ազգային սահմանափակության, վորը կազմում է սոցիալ-պատրիոտիզմի եյությունը» (Տրոցկի, «1917», հատ. III, մ. 1, էջ 90)։

Ահա, ընկերներ, արոցկիստական վերապահությունը, վոր շատ բանում բացատրում է մեզ Կամենեվի ու Զինովյեվի հետ Տրոցկու կնքած այժմյան բլոկի արմատներն ու յենթահոգը։

Իսկ Լենինն ինչոքս և գնացել, կուսակցությունն ինչպես և զնացել գեղի ապատամբություն։ Նո՞ւյնպես վերապահությամբ։ Վո՞չ, Լենինն ու իր կուսակցությունն առանց վերապահությունների յեն զնացել գեղի ապատամբություն։ Ահա քաղվածք լենինի մի յերեւլի հոգվածից—«Պրոլետարական հեղափոխության սաղմական ծրագիրը»—վոր հրապարակվել և արտասահմանում 1917 թ. սեպտեմբերին։

«Մեկ յերկրում հաղթանակած սոցիալիզմը բնալ մեկն չի բացառում սահմանարակ բոլոր պատերազմները։ Բնդհա-

կառակը, նա յենթաղրում և վրանք: Կապիտալիզմի զարգացումը զանազան յերկիրներում տեղի յեւ ունենում վերին աստիճանի անհավասարացափ: Այլ կերպ չի ել կարող լինել առլրանքային արտադրության ժամանակ: Այստեղից՝ անտարակուսելի յեղբակացություն: առցիալիզմը չի կարող հաղթել միաժամանակ բոլոր յերկիրներում: Նա սկզբնապես կհաղթի մեկ կամ միքանի յերկիրներում, իսկ մնացածները վլորոշ ժամանակի ընթացքում կմնան բուրժուական ու մինչը բուրժուական: Դա ոլեաք և առաջացնի վո՛չ միայն ընդհացումներ, այլև ուրիշ յերկիրների բուրժուաղիայի ուղղակի ձգումը՝ ջախճախելու առցիալիստական սկսության հաղթական պրոլետարիատին: Այդ դեպքերում պատերազմը մեր կողմից կլիներ որինական ու արդար: Դա կլիներ պատերազմ առցիալիզմի համար, մյուս ժողովուրդներին բուրժուաղիայից աղատագրելու համար» (Անին, «Պրոլետարական հեղափոխության ուղղական ծրագիրը», Յերկերի (ռուս.) XIX հատոր, Էջ 324—325):

Դուք տեսնում եք, վոր մենք այստեղ բոլորովին այլ դիրքավորում ունենք: Յեթի Տրոցկին ազգամբելու գնում եր մի վերապահությամբ, վոր նրան մոռեցնում և կամենելվին ու Զինովյանիվին, պնդելով, թե պրոլետարական իշխանությունն ինքնըստինքյան չի կարող ներկայացնել վորեւ առանձին բան, յեթի ժամանակին ողնության չգա դրախ, առաջ և նինինը, ընդհակառակը, ազգամբելու յեր զնում առանց վերապահությունների, պնդելով, վոր պրոլետարական իշխանությունը մեր յերկրում պետք ե բաղա ծառայի, վոր ողնունք մյուս յերկիրների պրոլետարներին՝ աղատագրվելու բուրժուաղիայի էջից:

Ահա թե ինչպես եյին բոլշևիկները զնում դեպի Հոկտեմբերյան ապստամբությունը, և ահա թե ինչու Տրոցկին և կամենելվին ու Զինովյանիվ ընդհանուր լիզու դասան Հոկտեմբերյան հեղափոխության ապսերորդ տարում:

Կարելի կլիներ արամախսության ձևով պատկերացնել, մի կողմից, Տրոցկու, մյուս կողմից, կամենելվի ու Զինովյանիվը դրույցը ուղղեցին բլոկը կաղմելու ժամանակի:

Կամենելվն ու Զինովյանիվը Տրոցկուն. «Եյ, տեսնում եք, թանգարին ընկեր, մենք վերջիվերջո իրավացի դուրս յեկանք, ասելով, թե չպետք եր համաձայնել Հոկտեմբերյան ապստամբության, վոր պետք եր սպասել Սահմանադիր ժողովին և այլն:

Այժմ բոլորը տեսնում են, վոր յերկիրը վերասերվում է, իշխանությունը վերասերվում, մենք դեպի կործանում ենք գնում, և մեզանում վոչ մի սոցիալիզմ չի լինի: Չպետք եր համաձայնել ապատամբության: Իսկ դուք հոժարատկամ զնացիք ապատամբելու: Դուք մեծ սիալ թույլ տվեք»:

Տրոցկին՝ ի պատասխան նրանց. «Էս'չ, թանգարին կունեցանե՞ր, դուք անարդարացի յեք իմ նկատմամբ: Ապատամբելու յես զնացել եմ, բայց ինչպես եմ զնացել, դուք մոռացաք առել այդ մասին: Զե՞ վոր յես ապատամբելու զնացի վո՞չ թե ուղղակի, այլ վերապահությամբ: (Ընդհանուր ծիծաղ): Յեկ վորքան վոր այժմ պարզվել է, վոր ողոնություն սպասել դրսից չենք կարող վորեն տեղից, պարզ է, վոր բանը դեպի կործանում և դնում, ինչպես և յես դուշտեկել եմ ժամանակին «Հաշուության ծրագրի» մեջ»:

Զինովիեվին ու Կամենեվին. «Դա թերեւս այլքահո է: Մենք մոռացանք վերապահության մասին: Այժմ պարզ է, վոր մեր բլոկն իդեալես հիմնավորված է»: (Ընդհանուր ծիծաղ: Ծափակարություններ):

Ահա թե ինչպես կազմավորվեց ոպողիցիայի դիրքավորումը մեր յերկրում սոցիալիստական հաղթական շինարարության հարաբերությունը ժիտելու ուղղությամբ:

Իսկ ի՞նչ և նշանակում այդ դիրքավորումը: Նա նշանակում է կապիտուլանտություն: Ո՞ւմ հանդես: Ակներեւորեն մեր յերկրի կապիտուլանտական տարրերի հանդես: Ելի՞ ում հանդես: Համաշխարհային բուրքուսազիայի հանդես: Իսկ ձախ ֆրազները, հեղափոխական շարժուձեերը, —ո՞ւր մնացին նրանք: Նրանք հոգոցնեցին: Մի լավ թափ ավելք մեր ոպողիցիան, մի կողմ նետեցեք հեղափոխական ֆրազարանությունը, —և դուք կտեսնեք, վոր այնտեղ նրանց մոտ նստած է կապիտուլանտությունը: (Ծափակարություններ):

Եերկրորդը: Պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Մեզանում պրոլետարիատի դիկտատուրա կա՞ արդյոք, թե չկա: Մի փոքր տարրորինակ հարց: (Ծիծաղ): Այնուամենայնիվ ոպողիցիաները յուրաքանչյուր հայտարարության մեջ գնում ե այն: Ողողիցիան ասում է, թե մեզանում տերմիդորական վերասերում է: Իսկ այդ ի՞նչ և նշանակում: Այդ նշանակում է, թե մեզանում պրոլետարիատի դիկտատուրա չկա, թե մեզանում ապալվում ու հետ են գնում և՛ եկոնոմիկան, և՛ քաղաքականությունը, թե

մենք դնում ենք վո՞չ թե զեսի սոցիալիզմ՝, այլ զեսի կապիտալիզմ։ Այս ամենը տարորինակ ե և մի փոքր հիմար բան ե։ Բայց սպողիցիան պնդում ե իր տասծի վրա։ Ահա ձեզ, ընկերներ, մեկ տարակարծություն ես։ Դրա վրա ել հենց խարսխում ե Տրոցկու հայտնի թեզիով կեմանույի մասին։ Յեթե իշխանությունը վերասերվել ե կամ վերասերվում ե, ապա արժե՞ արդյոք խնայել, պաշտպանել այն, զորավիր լինել նրան։ Պարզ ե, վոր չարժե։ Յեթե բարենպատ հանգամանքներ վրա համեմ այլպիսի իշխանությունը «հանելու» համար, առենք, յեթե թշնամին մոտենա Մուկային 80 կելումեարի վրա, —ապա մի՞թե պարզ չէ, վոր պետք ե հանգամանքներն ալտավործել նրա համար, վոր գուրս արվի այդ իշխանությունն ու դրվի նորը, կլեմանսիստականը, այսինքն արոցկիստականը։ Պարզ ե, վոր այսեղ չկա վորեն լենինյան բան։ Սա մաքրաջուր մենչեկղմ ե։ Ապողիցիան հանդեց մենչեկղմի։

Յերրորդ։ Միջակի հետ բանվոր դասակարգի ուսենցած բլոկի հարցը։ Ապողիցիան շարունակ թաղցնում եր իր բացասական վեշտարերմունքը գեսի այլպիսի բլոկի զաղակարը։ Նրա պլատֆորման, նրա հակաթեղիսները նշանակելի յեն վոչ այնքան նրանով, ինչ վոր ասված ե այնտեղ, վորքան նրանով, ինչ վոր սպողիցիան աշխատել ե թաղցնել բանվոր դասակարդից։ Բայց ահա դանինց մի մարդ, ի. ն. Մժիրնովը, նույնպես սպողիցիայի պարագլութենից մեկը, վորը քաջություն ունեցավ ճշմարտությունն ասելու սպողիցիայի մասին, նրան լույս աշխարհ դուրս քաշելու։ Յեկի՞նչ զուրս յեկամ։ Դուռ յեկամ, վոր մենք դնում ենք զեսի կուծանում, և յեթե փրկվել ենք կամենում, ողետք ե դժուվենք միջակի հետ։ Շատ ել խելոք բան չէ։ Բայց հո պարզ ե։ Այսուղ ես վերջապես յերեացին մենչեկիլյան ականջները՝ ի տեղեկություն ընդհանրության։

Չորրորդ։ Մեր հեղափոխության բնույթի հարցը։ Յեթե ժխտվում ե մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը, յեթե ժխտվում ե պրոլետարիատի դիկտատուրայի առկայությունը, բանվոր դասակարգի՝ գյուղացիության հետ կրնքած բլոկի անհրաժեշտությունը, —հապա ել ի՞նչ ե մնում այդ զեսլքում մեր հեղափոխությունից, նրա սոցիալիստական բնույթից։ Պարզ ե, վոր վոչինչ, բացարձակապես վոչինչ։ Գրուեստիքատին իշխանության զլուխ անցյամ, մինչեւ վերջը հասցըրեց բուրժուական հեղափոխությունը, այժմ զյուղացիությունը հեղափո-

իսության հետ բան չունի, վորովհետեւ նա արդեն ստացել է հոգը, — նշանակում ե, պրոլետարիատը կարող է հեռանալ, տեղ մաքրելով այլ դասակարգերի համար: Ահա ձեզ ոսկղիցիայի գիրքափորումը, յեթե խորանանք մինչև ոսկղիցիոն հայացքների արմատները: Ահա ձեզ մեր ոսկղիցիայի կապիտուլանառություն բոլոր արմատները: Արբաժովիչն իզուր չի գովարանում մեր ոսկղիցիային:

Հինգերորդը: Գաղութային հեղափոխությունները դեկավարելու լենինյան դիրքավորման հարցը: Լենինը յելնում եր այն տարերությունից, վոր գոյություն ունի խմակերիալիստական յերկիրների և ճնշված յերկիրների միջև, կոմունիզմի՝ խմակերիալիզմի յերկիրներում կիրառելիք քաղաքականության և կոմունիզմի՝ գաղութային յերկիրներում կիրառելիք՝ քաղաքականության միջև: Այս տարերությունից յենելով՝ նա զեսեռ պատերազմի ժամանակ եր ասում, վոր հայրենիքի ողաշտպանության զաղափարը, կոմունիզմի համար անընդունելի և հականեղափոխական լինելով խմակերիալիզմի յերկիրներում, միանդամայն բնողունելի և արգարացի յե խմակերիալիզմի զեմ պատերազմ մղող ճնշված յերկիրներում: Հենց այս պատճառով եր նա վորոշ ստագիայում և վորոշ ժամկետով թույլ տալիս զաղութային յերկիրների ազգային բուրժուազիայի հետ բլոկ և նույնիսկ զաշինք կնքելու հնարավորությունը, յեթե այդ բուրժուազիան ուստեղազմ և մղում խմակերիալիզմի զեմ և յեթե նա կոմունիստներին չի խանդաբում կոմունիզմի վողով զաստիարակելու բանվորներին ու դյուզացիական չքաղաքությանը: Ոսկղիցիայի մեջսակործությունն այստեղ այն ե, վոր նա իր կապերը վերջնականապես խղում և լենինի այս դիրքավորման հետ, զլորժելով զեսեպ գերքափորումը և ինտերնացիոնալի, վորը բացասում ե խմակերիալիզմի զեմ զաղութային յերկիրների կողմից մզգող հեղափոխական պատերազմին սատարելու նպատակահարմարությունը: Հենց սրանով ել բացասարկում են այն բոլոր աղետները, վոր ոսկղիցիան կրեց չինական հեղափոխության հարցում: Ահա ձեզ մեկ տարակարծություն ես:

Վեցերորդը: Համաշխարհային բանվորական շարժման մեջ միասնական նակատի տակտիկայի հարցը: Ոսկղիցիայի մեջսակործությունն այստեղ այն ե, վոր նա բանվոր դասակարգի միենավոր մասսաներն աստիճանաբար կոմունիզմի կողմը նվաճելու հարցում իր կապերը՝ խղում և լենինյան տակտիկայից: Միայն

այն պարագայում չե , վոր բանվոր դասակարգի միլիոնավոր մաս-  
աները նվաճվում են կոմունիզմի կողմէ , յերբ ճիշտ և կուսակ-  
ցության քաղաքականությունը : Կուսակցության ճիշտ քաղաքա-  
կանությունը մեծ բան է , բայց դա բոլորովին ել ամեն ինչ չե :  
Վորագեղի բանվոր դասակարգի միլիոնավոր մասաները կոմու-  
նիզմի կողմն անցնեն , դրա համար անհրաժեշտ է , վոր մասա-  
ներն իրենք իրենց սեփական փորձով համոզվեն կոմունիզմի քա-  
ղաքականության ճշտությանը : Իսկ վորագեղի մասաները հա-  
մոզվեն , դրա համար անհրաժեշտ է ժամանակ , դրա համար ան-  
հրաժեշտ է կուսակցության՝ մասաներն իր գիրքերին մոռեցնե-  
լու հարտար ու հմուտ աշխատանքը , կուսակցության՝ միլիոնա-  
վոր մասաներն իր քաղաքականության ճշտությանը համոզելու  
հարտար ու հմուտ աշխատանքը : Մենք իրավացի ելինք դեռևս  
1917 թ . ապրիլին , վորովհետեւ մենք դիմելինք , վոր բանն ըն-  
թանում է գեղի բուրժուազիայի տալարումն ու խորհրդային  
իշխանության հաստատումը : Բայց մենք այն ժամանակ բանվոր  
դասակարգի լայն մասաներին ապստամբության չեմինք կոչում :  
Ինչո՞ւ : Վորովհետեւ մասաները զեռևս հնարավորություն չունե-  
յին համոզվելու մեր իրոք ճիշտ քաղաքականության ճշտությա-  
նը : Միայն այն ժամանակ , յերբ եսերների ու մենչեմիների  
մանր-բուրժուական կուսակցությունները վերջնականացնեն խայ-  
տառակ յեղան հեղափոխության հիմնական հարցերում , միայն  
այն ժամանակ , յերբ մասաներն սկսեցին համոզվել մեր քողա-  
քականության ճշտությանը , միայն այդ ժամանակ մենք մասա-  
ներին առաջնորդեցինք դեպի ապստամբություն : Յեկ հենց այն  
պատճառով , վոր մենք ժամանակին առաջնորդեցինք մասաներին  
գեղի ապստամբություն , հենց այդ պատճառով մենք այն ժամա-  
նակ հաղթանակ տարանք : Ահա թե ինչումն են միամնական ճա-  
կատի գողափարի արմատները : Միամնական ճակատի տակտիկան  
իսկապես հենց նրա համար և աղբարարված լենինի կողմից , վոր  
կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգի՝ սոցիալ-  
դեմոկրատական համաձայնողականության նախարարություննե-  
րով վարակված միլիոնավոր մասաների համար հեշտացնի կո-  
մունիզմի կողմն անցնելը : Ապսդիցիայի մեղադուրծությունն այն  
է , վոր նա բոլորովին ժխտում է այդ տակտիկան : Մի ժամանակ  
տարբած լինելով , հիմար ու անքանական կերպով տարբած լինե-  
լով այդ տակտիկայով՝ նա ամեն կերպ վողջունում էր Անդրեայի  
Գլխախորհրդի հետ համաձայնություն կնքելու դորձը , կարծելով ,

թե այդ համաձայնությունը «խաղաղության ԱՌագույն յերաշ-իսկներից մեկն ե», «լրջաղույն յերաշխիքներից մեկն ընդուժ-ինաւելինցիալի», «Յևլուպայում ուժորմիզմն անվնաս զարձնե-լու» լրջաղույն միջաներից մեկը (տե՛ս Զինովյեվի զեկուցումը Համեկ(բ)կ ԽIV համազումարում): Բայց ռեֆորմիզմը Պերսենե-րի ու Նիքոլայի աղնությամբ անվնաս զարձնելու հայսերի մեջ զամանորեն հիասթափովելում՝ նա հետո ընկավ մյուս ծայրահե-ղության մեջ, բոլորովին ժխտելով միասնական ճակատի տակ-տիկայի դադափարը: Ահա ձեղ, ընկերներ, մի տարակարծու-թյուն ես, վորը ցուցադրում ե ռազողիցիայի լիակատար հեռա-նալը միասնական ճակատի լինինյան տակտիկայից:

Յոքերորդը: Լենինյան կուսակցականության, Համեկի և Կո-մինտերնի մեջ լենինյան միասնականության հարցը: Առողիցիան այստեղ իր կապերը բոլորովին խզում ե լենինյան կազմակերպա-կան դիրքավորումից, վոտք զնելով յերկրորդ կուսակցություն կազմակերպելու ուղին, նոր ինտերնացիոնալ կազմակերպելու ուղին:

Ահա ձեղ յոթ հիմնական հարցեր, վորոնք խոսում են այն մասին, վոր այդ բոլոր հարցերում ռազողիցիան զլորվել ե գեպի ցենչելիզմը:

Կարելի՞ յե արդյոք ռազողիցիայի այդ մենշևիկյան հայացք-ները համատեղելի համարել մեր կուսակցության զաղափարա-խոսության հետ, մեր կուսակցության ծրագրի հետ, նրա տակ-տիկայի հետ, Կոմինտերնի տակտիկայի հետ, լենինիզմի կազմա-կերպական դիրքավորման հետ: Վո՞չ մի դեպքում, վո՞չ մի բո-պերիսիվ:

Դուք կասեք. ի՞նչպես կարող եք մեզանում ծնունդ առնել այդպիսի ռազողիցիա, վո՞րանք են նրա սոցիալական արմատնե-րը: Յես կարծում եմ, վոր ռազողիցիայի սոցիալական արմատ-ները թագնված են քաղաքի մանր-բուրժուական խավերի քայ-քայման փաստի մեջ, մեր զարգացման պայմանների մեջ, պրո-լետարիատի զեկուատուրայի ռեժիմից այդ խավերի դժողով լի-նելու փաստի մեջ, այդ ռեժիմը փոփոխելու, բուրժուական գե-մոկրատիա սահմանելու վազով այն «քարելավելու»՝ այդ խա-վերի ձգուման մեջ: Յես արդեն վերն ասացի, վոր մեր առաջ-շարժման հետեւանքով, մեր արդյունաբերության աճման հետե-վանքով, տնտեսության սոցիալիստական ձեերի տեսակարար կը ու անման հետեւանքով մանր բուրժուազիայի, առանձնապիս

քաղաքային բուրժուազիայի մի մասն ավելիլում և ու դեպի հատակը դնում: Ապօղիցիան արտացոլում և այդ խավերի տրտունքն ու դժողովությունը պրոլետարական հեղափոխության ռեժիմից:

Ահա թե վորտեղ են սպողիցիայի սոցիալական արժանիքը:

#### 4. ԱՍԿ ԱՅՍՈՒՀԵՑԵՑԵՎ. ԽԵԶ

Այսուհետեւ ի՞նչպես վարվենք սպողիցիայի հետ: Նախքան այս հարցին անցնելը՝ յես կկամենայի հաղորդել ձեզ Տրոցկու հետ ունեցած միատեղ այն աշխատանքի մեկ փորձի պատմությունը, վոր ընկ. Կամենեվին և կատարել 1911 թ.: Սա չատ հետաքրքրական հարց է: Մանավանդ վոր նա կարող է մեղ վորոշ բանալի տալ ճիշտ մոռենալու համար դրված հարցին: 1910 թ. արտասահմանում մեր կե-ի պլենումն եր: Նա քննում եր բոլշևիկների ու մենչեկիների, մասնավորապես Տրոցկու, փոխհարաբերությունների հարցը (այն ժամանակ մենք մենչեկիների հետ ունեցած մեկ ընդհանուր կուսակցության մասն եյինք կազմում և մեղ անվանում եյինք Փրակցիա): Պլենումը՝ հակառակ լենինի, ընդդեմ լենինի՝ արտահայտվեց մենչեկիների, առանշակում և և Տրոցկու, հետ հաշտվելու ոգտին: Լենինը փոքրամասնության մեջ մնաց: Իսկ կամենեվը վն ինչպես: Կամենեվը հանձն առավ իրականացնել համագործակցությունը Տրոցկու հետ: Յեկ նա այդ համագործակցությունն իրականացնում եր վոչ առանց լենինի գիտության ու համաձայնության, վորովհետեւ լենինը կամենում եր կամենեվին փորձով ապացուցել Տրոցկու հետ գործակցելու վնասակարությունն ու անթույլատրելիությունն ընդդեմ բոլշևիների:

Լսեցե՞ք, թե ինչպես և այդ մասին պատմում ընկ. կամենեվը.

«1910 թվականին մեր Փրակցիայի մեծամասնությունը փորձ արեց ընկ. Տրոցկու հետ հաշտվելու և համաձայնության դալու: Վլադիմիր Իլլիչը խիստ բացասարար եր վերաբերվում այդ փորձին և, կարծես, «ի պատիմ» ընկ. Տրոցկու հետ համաձայնության հասնելու փորձի մեջ ցուցաբերած իմ համառության, պնդեց, վոր կենարոնական կոմիտեյի կողմից, վորպես նրա ներկայացուցիչը, հենց յես ուղարկվեմ ընկ. Տրոցկու լրադրի խմբագրությունը: 1910 թ. աշնանը—այդ խմբագրության մեջ կատարած միքանի ամսովա պատմանքից հետո — յես համոզվեցի, վոր Վլադիմիր

Իլլիչն իրավացի յե իր բացասական վերաբերմունքով դեպի իմ «հաշարաբար» դիմում, և նրա համաձայնությամբ յես դուրս յեկա ընկ. Տրոցկու խմբագրությունից էնկ. Տրոցկու հետմեր այն ժամանակվա խորումը կուսակցության կենտրոնական որդանում նշվեց մի շաբաթ իսկամ հողվածներով: Հենց այն ժամանակ եւ Վլադիմիր Իլլիչն ինձ առաջարկեց գրել մի բրոցյուր, վարը տար և՛ լիկվիդատոր-մենչեւիների, և՛ ընկեր Տրոցկու հետ ունեցած մեր տարածայնությունների հանրագումարը: «Դուք կատարեցիք հակաբոլչելիյան խմբավորումների ամենաձախ (տրոցկիստական) թեկ հետ համաձայնության զալու փորձ, դուք համոզվեցիք համաձայնության անհնարինությանը, դուք եւ պետք եւ զբեք հանրադումարային բրոցյուր»—ասում եր ինձ Վլադիմիր Իլլիչը: Բնական և, վոր Վլադիմիր Իլլիչն առանձնապես պնդում եր, վոր բոլչելիումի և այն բանի հարաբերության բնագավառում հենց, ինչ վոր մենք այդ ժամանակ անվանում եյնք տրոցկիզմ, ամեն ինչ ասվի... մինչև վերջը» (Լ. Կամենեվի՝ նրա «Յերկու կուսակցություն» բրոցյուրի առաջարանը, մայիս, 1924թվական):

Իսկ ի՞նչ հետեւանքներ սոսացվեցին դրանից: Լսեցեք շաբունակությունը.

«Տրոցկու հետ միատեղ կատարած աշխատանքի փորձը, — համարձակվում եմ տաել, իմ կողմից անկեղծորեն կատարված փորձը, վորի ժամանեն են հենց վկայում այժմ Տրոցկու կողմից շահագործված իմ նամակներն ու մասնավոր խոսակցությունները,—ցույց տվեց, վոր հաշտվողականությունն անզսպելի կերպով վլորվում ե դեպի լիկվիդատորականության պաշտպանություն, վճռականորեն վերջինիս կողմն և անցնում» (Լ. Կամենեվ, «Յերկու կուսակցություն», 1911թ. եջ 136):

Յեկ այնուհետև.

«Ո, յեթե «տրոցկիզմը» հաղթեր կուսակցության մեջ վորսես տրամադրություն, —վորպիսի լայն ազատություն կլիներ լիկվիդատորության համար, ոստդավիդմի համար, կուսակցության նկատմամբ հակամարտ բոլոր հոսանքների համար» (Տույն տեղում, եջ 143):

Ահա ձեզ, ընկերներ, Տրոցկու հետ կատարած միատեղ աշխատանքի փորձը: (Զայն. «Ռւսանելի փորձ»): Այդ փորձի ար-

դյունքներն այն ժամանակ ընկ. Կամենեվը կերպարանեց հատուկ բրոշյուրում, վոր լույս տեսավ 1911 թ. «Յերկու կուսակցություն» անունով։ Յես չեմ տարակուսում, վոր այդ բրոշյուրն սպուտ բերեց այն բոլոր ընկերներին, վորոնք գեռես պատրամքներ ունեյին Տրոցկու հետ համագործելու վերաբերմամբ։ Յեղ աշա յես այսպիսի հարց ունեմ. արդյոք ընկ. Կամենեվը փորձ չե՞ր անի դրելու մի բրոշյուր ևս, նույնպես «Յերկու կուսակցություն» անունով՝ Տրոցկու հետ նրա համագործելու այժմյան փորձի նկատմամբ։ (Ընդհանուր ծիծաղ։ Ծափահարություններ)։ Գուցե զա անողուակար չլիներ։ Իհարկե, յես ընկ. Կամենեվին յերաշխիք տալ չեմ կարող, թե այժմ նույնպես, ինչպես և այն ժամանակ, Տրոցկին նրա դեմ չի ողտագործի նրա նամակներն ու մտերմական խոսակցությունները։ (Ընդհանուր ծիծաղ)։ Բայց հազիվ թե արժե դրանից վախենալ։ Համենայն դեպս տյուտեղ պետք ե ընտրություն անել. կա՛մ այն բանի յերկյուղը, վոր Տրոցկին կողտագործի Կամենեվի նամակներն ու հրապարակ կը հանի նրա գաղտնի խոսակցությունները Տրոցկու հետ, և այն ժամանակ՝ կուսակցությունից դուրս մնալու վտանդ, կա՛մ մի կողմ նետել ամեն մի յերկյուղ ու մնալ կուսակցության մեջ։ Հարցն այժմ, ընկերներ, այսպես ե ծառացած։ Կա՛մ մեկը, կա՛մ յուրա։

Ասում են, թե ոպղիցիան մտադիր ե համագումարին ուղարկել ինչ-վոր հայտարարություն այն մասին, վոր նա, ոպղիցիան, յենթարկելում և և յենթարկելու յե կուսակցության բալոր վճիռներին (ձայն—«Նույնպես, ինչպես 1926 թվականի հոկտեմբերի<sup>թ</sup>ն»), ցրելու յե իր Փրակցիան (ձայն—«Մենք այդ յերկու անդամ լսել ենք») և պաշտպանելու յե իր հայտքները, վորոնցից նա չի հրաժարվում (ձայներ—«Ոչո՛»։ «Չե՛, այլելի լավ ե մենք ինքներս ցրենք նրանց») կուսակցական կանոնադրության շրջանակներում։ (Ձայներ — «Վերապահություններով»)։ «Մեր շրջանակները ուետինե չեն»։ Յես, ընկերներ, կարծում եմ, վոր այս բանից վոչինչ դուրս չի դա։ (Ձայներ—«Ճի՛շտ ե»։ Յերկարան ծափահարություններ)։ Մենք ել ունենք, ընկերներ, հայտարարությունների վորոշ փորձ (ծափահարություններ), յերկու հայտարարության վորոշ փորձ (ձայներ—«Ճի՛շտ ե»)։ 1926 թվականի հոկտեմբերի 16-ի և 1927 թ. ոգոստոսի 8-ի։ ի՞նչ հետևանքի բերեց այդ փորձը։ Թեպետե յես մտադրություն չունեմ դրելու «Յերկու կուսակցություն» բրոշյուրը, սակայն

Համարձակվում եմ հայտարարելու, վոր այդ փորձը բերեց ամենաբացասական հետևանքների (Ձայներ—«Ճիշտ ե»), յերկու անգամ կուսակցությանը խարեւուն, կուսակցական կարգապահությունը թուլացնելուն։ Ապազիցիան այժմ ի՞նչ հիմքեր ունի պահանջելու մեղանից, վոր մենք, մեծ կուսակցության համագումարը, և ենինի կուսակցության համագումարը, այդպիսի փորձից հետո կարողանանք հավատալ նրանց խոսքին։ (Ձայներ—«Դա հիմարություն կլիներ»։ «Ով հավատա, նա կտուժի»)։

Առում են, թե նրանք նույնպես հարց են գնում վտարվածներին կուսակցության մեջ վերադարձնելու մասին։ (Ձայներ—«Չի անցնի»։ «Թող գնան մենչեթիցան ճահիճը»)։ Յես կարծում եմ, ըսկերներ, վոր դա ես ուղուխ չի դա։ (Յերկարատև ծափահարություններ)։

Կուսակցությունն ինչո՞ւ վտարեց Տրոցկուն ու Զինովյեվին։ Այն պատճառով, վոր նրանք են ուղղվեցիալի ամբողջ գործի կառակերպիչները (Ձայներ—«Ճիշտ ե»), այն պատճառով, վոր նրանք իրենց նպատակ են դրել կոստրելու կուսակցության որենքները, այն պատճառով, վոր նրանք յերեակայեցին, թե նրանց ձեռք տալ չեն համարձակվի, այն պատճառով, վոր նրանք կամեցան կուսակցության մեջ աղնվականների գրություն ստեղծել իրենց համար։ Բայց մի՞թե մենք կամ ենում ենք կուսակցության մեջ ունենալ աղնվականներ, վորոնք վայելում են արտօնություններ, և գյուղացիներ, վորոնք զրկված են այդ արտօնություններից։ Մի՞թե մենք, բոլշևիկներս, վոր արմատախիլ ենք արել աղնվականների դասը, այժմ կուսակց այն վերականգնել մեր կուսակցության մեջ (ծափահարություններ)։ Դուք հարցնում եք, թե ինչո՞ւ յենք մենք կուսակցությունից վտարել Տրոցկուն ու Զինովյեվին։ Այն պատճառով, վոր մենք չենք կամ ենում կուսակցության մեջ աղնվականներ ունենալ։ Այն պատճառով, վոր մեղանում կուսակցության մեջ որենքը մեկ է, և կուսակցության բոլոր անդամները հավատար են իրենց իրավունքներով։ (Բացականչություններ—«Ճիշտ ե»։ Յերկարատև ծափահարություններ)։

Յեթե ուղղվեցիան կամ ենում և ապրել կուսակցության մեջ, թող նա յենթարկի կուսակցության կամքին, նրա որենքներին, նրա ցուցումներին՝ առանց վերասահությունների, առանց եկիվոկների։ Չի կամ ենում նա այդ—թող հեռանա, վորտեղ վոր ամփելի պատ կլինի նրա համար։ (Ձայներ. «Ճիշտ ե»։ Ծափահարություններ)։ Մենք չենք կամ ենում ստեղծել և չենք ստեղծի նոր

որենքներ, ողողիցիային արտոնող որենքներ։ (Ծափահարություններ)։

Պայմանների մասին են հարցնում։ Մեր պայմանը մեկ և սպողիցիան պետք է զինաթափ լինի ամբողջովին ու լիակատար կերպով և՛ գաղափարային, և՛ կազմակերպական տեսակետից։ (Բացականչություններ—«Ճի՞շտ ե»։ Յերկարանի ծափահարություններ)։ Եա պետք է բացահայտորեն ու աղնիվ կերպով, ամբողջ աշխարհի առաջ, համժարդի իր հակաբուշելիյան հայցքներից։ (Բացականչություններ—«Ճի՞շտ ե»։ Յերկարանի ծափահարություններ)։ Եա պետք է բացահայտորեն ու աղնիվ կերպով, ամբողջ աշխարհի առաջ նշանակի իր զործած սխարները, սխարներ, վորոնք վոճիբ գարձան ընդդեմ կուսակցության։ Եա պետք է մեզ հանձնի իր բջիջները, վորոնքովի կուսակցությունը հնարագորություն ունենաց ցրելու ըրանք առանց մնացորդի։ (Բացականչություններ—«Ճի՞շտ ե»։ Յերկարանի ծափահարություններ)։ Կամ այդպես, կամ թող հեռանան կուսակցությունից։ Իսկ չեն հեռանացուրս կշորտենք։ (Բացականչություններ—«Ճի՞շտ ե»։ Յերկարանի ծափահարություններ)։

Եյսպես և, ընկերներ, ողողիցիայի բանը։

## IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ

**Յես վերջացնում եմ, ընկերնե՛ր։ Վո՞քն ե ընդհանուր հանրակումարը հաշվետու ժամանակաշրջանի համար։ Հանրակումարը հետևյալն է։**

1) մենք պաշտպանեցինք խաղաղությունը շրջապատող պետությունների հետ, չնայած մեծագույն դժվարություններին, չնայած «մեծ պետությունների» բուրժուազիայի պրովոկացիոն վատնագություններին։

2) մենք ամրապնդեցինք ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի գոգումը իմպերիալիստական յերկիրների ու գաղութների բանվորների հետ, չնայած անբարեկ խոչընդուներին, չնայած բուրժուական կաշառվող հարյուրաբերան մամուլի ծով գրաբարության։

3) մենք պրոլետարական դիկտատուրալի հեղինակությունը բարձրացրինք աշխարհի բոլոր մասերի աշխատավորական միլիոնավոր մասսաների շրջանում։

4) մենք փրապես կուսակցություն ոգնեցինք կոմիտաներներնին ու նրա սելցիաներին ամրապնդելու իրենց ազգեցությունն աշխարհի բոլոր մասսաներ։

5) մենք արինք այն ամենը, ինչ վոր ամել կարող է մեկ յերկիր՝ համաշխարհային հեղափոխական շարժումը գարգացնելու և պրագացնելու համար։

6) մենք բարձրացրինք մեր սոցիալիստական ինդուստրիան, նրա գարգացման համար ուկորդային տեմպ սահմանելով ու նրա հեղիմնիան հաստատելով ամրող ժողովրդական տնտեսության մեջ։

7) մենք հաստատեցինք սոցիալիստական ինդուստրիայի գոգումը զյուղացիական տնտեսության հետ։

8) մենք ամրապնդեցինք բանվոր դասակարգի դաշինքը միջակի հետ, հենարան ունենալով չբավորությունը։

9) մենք մեր յերկրում ամբապնդեցինք պրոլետարիատի դիկտատորութան, չնայած միջազգային քշնամական շրջապատճեն, ցույց տալով բարոր յերկիրմերի բանվորներին, վոր պրոլետարիատը գիտե վո՞չ միայն կործանել կապիտալիզմը, այլև կառուցել սոցիալիզմը։

10) մենք ամբապնդեցինք կուսակցությունը, պաշտպանեցինք լենինիզմը և զլլուսլին ջախջախնեցինք ոպղիցիան։

**Այս և ընդհանուր հանրապումարը։**

Վո՞րն ե յեղակացությունը։ Յեղակացությունը մեկ և մենք ճիշտ ուղղու վրա յենք կանգնած, մեր կուսակցության քաղաքականությունը ճիշտ ե։ (Զայներ—«Ճի՞շտ ե»։ Ծափակարություններ)։

Իսկ սրանից հետեւմ ե, վոր այս ուղիով չարժվելով, մենք հաստատապես կհասնենք սոցիալիզմի հաղթանակին մեր յերկրում, սոցիալիզմի հաղթանակին՝ բոլոր յերկիրներում։ (Յեղակարտն ծափակարություններ)։

Սա գեուս չի նշանակում, թե մեր ուղու վրա մենք չենք ունենա գժվարություններ։ Դժվարություններ կլինեն։ Բայց մենք չենք վախենա գրանցից, վորովհետեւ մենք բոլշևիկներ ենք՝ հեղափոխության կրակի մեջ կուլված։ Դժվարություններ կլինեն։ Բայց մենք կհաղթահարենք դրանք, ինչպես մինչև այժմ հաղթահարել ենք, վորովհետեւ մենք բոլշևիկներ ենք, ինչինի յերկաթե կուսակցության կողմից նրա համար գալրոված, վոր սրայքարենք դժվարությունների դեմ ու հաղթահարենք դրանք, և վոչ թե նվազանք ու լաց լինենք։

Յել՛ հենց այն պատճառով, վոր մենք բոլշևիկներ ենք, մենք հաստատապես կհալլենք։

Բնկերնե՛ր։ Դեպի կոմունիզմի հաղթանակը մեր յերկրում, գեպի կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում—հառա՞ջ։ (Փոքորկալից ու յերկարտն ծափակարություններ)։ Բոլորը վոտքի յեն կանգնում ու ովացիա սարքում լին։ Ստալինին։ Յերգում են «ինտերնացիոնալ»։

## ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Բնկերնե՛ր : Մի ամբողջ շարք պատվամավորների ճառիւրից հետո ինձ քիչ բան և մնաւմ ասելու : Ընկ . ընկ . Յեզրոկիթովի ու Մուլալովի ճառերի մասին յես ըստ հյության վորեկ բան չունեմ ասելու , վորովհետեւ նրանք դրա համար նյութ չեն տալիս : Նրանց մասին կարելի կը ներ առել մի բան միայն . թող ալլահը ների նրանց մեղքերը , վորովհետեւ նրանք իրենք ել չդիտն , թե ինչի մասին են շաղակրատում : (Ծիծաղ , ծափահարություններ) : Յես կկամնայի կանգ առնել ընկ . Ռակովսկու ճառի և , առանձնապես , ընկ . Կամենեվի ճառի վրա , վորը ոպողիցիոներների ճառերից ամենափարիսեցիականն եւ ու ամենատահողը : (Զայներ—«Ճիշտ Հ») :

### 1. Ընկ . ՌԱԿՈՎՍԿՈՒ ՃԱՌԻ ՄԱՍԻՆ

ա) Արտաքին քաղաքականության մասին : Յես կարծում եմ , վոր ընկ . Ռակովսկին այստեղ զուր շոշափեց պատերազմի ու արտաքին քաղաքականության հարցը : Ամենքին հայտնի յէ , վոր ընկ . Ռակովսկին Մոսկվայի կոնֆերենցիայում պատերազմի հարցի շուրջը հիմարաբանեց : Նա այստեղ յեկալ ու խոսք վերցրեց , ըստ յերեսությն , նրա համար , վոր ուղղի հիմարությունը : Իսկ դուրս յեկալ ավելի հիմար բան : (Ծիծաղ) : Յես կարծում եմ , վոր ընկ . Ռակովսկու համար ավելի շահավետ կլիներ լուել արտաքին քաղաքականության մասին ,

բ) Զալիի ու աջի մասին : Ընկ . Ռակովսկին պնդում ե , թե ոպողիցիան մեր կուսակցության ճախ սեկտորն ե : Սա յեփած հալի ծիծաղը կարող ե հարուցել , ընկերնե՛ր : Այսպիսի հայտարարություններն արվում են , յերեկ , քաղաքական սնանկների ինքնամխիթարության համար : Ապացուցված ե , վոր ոպողիցիան մեր կուսակցության մենշեկիյան թեկն ե , վոր ոպողիցիան գլորվել ե դեպի մենշևիդը , վոր ոպողիցիան որյեկտիվորեն գործիք

Ե դարձել բուրժուական տարրերի համար։ Այս ամենն ազացուցված ու վերապացուցված է։ Ել ի՞նչ խոսք կարող է լինել այստեղ ուղղիցիայի ձախության մասին։ Այդ վո՞ւտեղ և լսված, վոր յերբորդ ուժի համար, բուրժուական տարրերի համար որյեկտիվորեն դործիք դարձած մենչելիյան մի խռամբ ավելի ձախ լինի, քան թե բոլչելիները։ Մի՞թե պարզ չե, վոր ոսկղիցիան Համեկ մեջ աջ մենշելիյան թեն է։ Բնկ։ Աակովսկին, ըստ յերևութին, վերջնականապես խճճվել և ու չփոթել աջն ու ձախը։ Հիշում եք գողովյան Սելիֆանին։ «Ա՛յ, դու... Զդիան, թե վորտեղ և աջը, վորտեղ՝ ձախ»։

գ) Ոպազիցիայի ոգնության մասին։ Բնկ։ Աակովսկին հայտաբարում է, թե ոպազիցիան պատրաստ և սատարելու կուսակցությանը, յեթե իմպերիալիստները հարձակվեն մեղ վրա։ Վորովսիկ՝ վողորմածություն։ Երանք, մի փոքրիկ խմբակ, վոր մեր կուսակցության մեջ ներկայացնում է հազիվ կես տոկոս, նրանք վողորմածաբար ողնություն են խստանում մեղ, յեթե խմբերիալիստները հարձակվեն մեր յերկրի վրա։ Չենք հայտառում մենք ձեր ողնությանը, և այն մեղ հարկավոր չե, ոպազիցիային պատկանող ընկերները։ Մենք ձեզանից միայն մեկ բան ենք խընդորում։ մի՞ խանդարեք մեղ, դադարեցնեք մեղ խանդարելուց։ Մնացած բոլոր բաները ինքներս կանենք, կարող եք հավատացած լինել զրանում։ (Զայներ—«Ճ'չտ ե»։ Ծափահարություններ)։

դ) «Ազգանշանաբարների» մասին։ Այնուհետև, բնկ։ Աակովսկին հայտաբարում է, թե ոպազիցիան ազգանշան և տալիս մեղ վտանգների մասին, դժվարությունների մասին, մեր յերկրի կործանման մասին։ Ա՛յ, իրոք ազգանշանաբարներ, վորոնք կործանումից փրկում են կուսակցությունը, յերբ իրենք են կործանում և իրոք կարուտ են փրկության։ Իրենք հազիվ-հազ կանգնած են վոտքերի վրա, բայց մեջ են ընկնում ուրիշներին փրկելու։ Արդյոք սա ծիծառելի չե՞, ընկերներ։ (Ծիծալ)։ Պատկերացրեք մի փոքրիկ մակուցի, վորը հազիվ և կարողանում մեալ ծովի մակերեսույթի վրա ու շատ մոտ և կործանման, և պատկերացրեք մի հոյակապ շողենավ, վորը հորապես կտրում և ալիքներն ու վատահ շարժվում առաջ։ Ի՞նչ կասեցիք դուք, յեթե այդ փոքրիկ մակուցիը վրա ընկներ փրկելու վիթխարի շողենավը։ (Ծիծալ)։ Դա ավելի քան ծիծառելի կլիներ, չե՞։ Հենց այդպիսի դրության մեջ են գտնվում այժմ ոպազիցիային պատկանող մեր ազգանշանաբարներ։ Նրանք մեղ ազգանշան են տալիս վտանգների մասին,

գլուխարությունների մասին, կործանման ու ամեն բանի մասին, ինչ վոր ուղղում եք, իսկ իրենք դեպի հատակն են գնում, չնկատելով, վոր իրենք արդեն հատակն են իջել: «Իրենց մասին խոսելով, վորակես աղջանշանարարների մասին, ոպողիցինները դրանով իսկ հավակնություն ունեն զեկավարելու կուսակցությունը, բանվոր դասակարգը, յերկրը: Հարց և ծաղում—ի՞նչ հիման վրա: Մի՞թե նրանք, ոպողիցիններները, գործով ապացուցել են, վոր առհասարակ ընդունակ են վորեւ բան զեկավարելու, ել չխոսելով կուսակցության, դասակարգի, յերկրի զեկավարման մասին: Մի՞թե զա փաստ չե, վոր ոպողիցիան այնպիսի մարդկանց գլխավորությամբ, ինչպես Տրոցկին ե, Զինովյեվը, Կամենեվը, ահա արգեն յերկու տարի յե, ինչ զեկավարում և ամրոց խումբը: Մի՞թե զա փաստ չե, վոր զեկավարելով այդ խումբը, ոպողիցիայի պարագլուխները վերջնական կրախի հասցրին այն: Մի՞թե զա փաստ չե, վոր ոպողիցիան այս յերկու տարվա մեջ իր խումբը տարել ե պարտությունից գեղի պարտություն: Ենչի՞ մասին ե խոսում այս, յեթե վոչ այն մասին, վոր ոպողիցիայի պարագլուխներն անճարակ գուրս յեկան, վոր նրանց զեկավարությունը գուրս յեկավ պարտության և վոչ թե հաղթության տանող զեկավարություն: Բայց յեթե ոպողիցիայի պարագլուխներն անճարակ գուրս յեկան փոքրի մեջ, ապա ի՞նչ հիմք կա կարծելու, թե նրանք կարող գուրս կդան մեծի մեջ: Մի՞թե պարզ չե, վոր փոքրիկ իրմրի զեկավարման մեջ սնանկացած մարդկանց վոչ վոք չի վստահանա հանձնել այնպիսի մեծ գործի զեկավարումը, ինչպես կուսակցությունն ե, բանվոր դասակարգը, յերկրը: Ահա թե ինչը չեն ուղղում հասկանալ մեր աղջանշանարարները:

## 2. ԸՆԿ. ԿԱՄԵՆԵՎԻ ՃԱՌԻ ՄԱՍԻՆ

Յես անցնում եմ ընկ. Կամենեվի ճառին: Այդ ճառն ամենաստահողը, ամենափարիսեցիականը, ամենախարեբայականն ու խարդախականն ե ոպողիցին այն բոլոր ճառերից, վորոնք արտասանված են այսակը, այս ամբիոնից: (Զայներ—«Ճի՛շտ ե»: Ծափահարություններ):

ա) Յերկու ամեն մեկ բնության մեջ: Առաջին բանը, վորով իր ճառում զրազվեց ընկ. Կամենեվը, զա հետքերը կորցնելն եր: Կուսակցության ներկայացուցիչներն այսուեղ խոսում ելին մեր կուսակցության նվաճումների մասին, մեր շինարարության հաջողությունների մասին, մեր աշխատանքի բարելավման մասին և

այլն։ Նրանք այնուհետև խոսում ենին սպողիցիային պատկանող ընկերների մենչեւիլյան մեղսագործության մասին, այն մասին, վոր նրանք զլորվել են դեպի մենչեւիլմ, ժխտելով սոցիալիզմի հաջող կառուցման հնարավորությունը մեր յերկրում, ժխտելով ողբուժարական դիկտատուրայի գոյությունը ԽՍՀՄ-ում, ժխտելով միջակի հետ կնքած՝ բանվոր դասակարգի դաշինքի քաղաքականության նովատակահարմարությունը, զրավարտություն տարածելով տերմիգորի մասին և այլն։ Նրանք, վերջապես, խոսում ենին այն մասին, վոր սպողիցիայի այդպիսի հայցքներն անհամատեղելի յեն մեր կուսակցությանը պատկանելու հետ, վոր սպողիցիան պետք ե հրաժարվի այդ մենշեւիլյան հայցքներից, յեթե նա կամենում ե մնալ կուսակցության մեջ։ Յել ի՞նչ։ Բնկեամենելին ավելի լավ բան չկտավ, քան զանց անել այդ հարցերը, կորցնել հետքերն ու այդ հարցերի կողքովն անցնել։ Նրան հարցնում են մեր ծրագրի, մեր քաղաքականության, մեր շինուարության կարևորագույն հարցերի մասին։ Իսկ նա զանց և անում դրանք, կարծես թե այդ նրան չի վերաբերում։ Կարելի՞ յեարդյոք ընկեամենելի այդպիսի վարքն անվանել լուրջ վերաբերմունք գեալի դործը։ Պարզ ե, վոր չի կարելի։ Ինչո՞վ բացատրել սպողիցիայի այդպիսի վարքը։ Այն բացատրել կարելի յէ միայն մեկ բանով՝ կուսակցությանը խարեւու, նրա աչալըությունը քնացնելու, կուսակցությանը մեկ անդամ ևս խարս տալու ցանկությամբ։ Ուղղվիցիան յերկու դեմք ունի. մեկը—փարիսեցիական-փաղաքչական, մյուսը — մենշեւիլյան-անտիհեղափոխական։ Նա կուսակցությանն իր փարիսեցիական-փաղաքչական դեմքն ե ցույց տալիս, յերբ կուսակցությունը սեղմում ե նրան ու նրանից պահանջում հրաժարումն փրակցիոնությունից, պատակաման քաղաքականությունից։ Նա իր մենշեւիլյան-անտիհեղափոխական դեմքն ե ցույց տալիս, յերբ նա սկսում ե դիմել վոչպոլեկտարական ուժերին, յերբ նա սկսում ե դիմել վոչպողին՝ կուսակցության դեմ, խորհրդային իշխանության դեմ։ Այժմ նոր մեղ դիմում ե, ինչպես տեսնում եք, իր փարիսեցիական-փաղաքչական դեմքով, ցանկանալով մեկ անդամ ել խարել կուսակցությանը։ Ահա թե ինչու ընկեամենելին աշխատեց կորցնել հետքերը, զանց անելով մեր տարածայնություների կարեւորագույնն հարցերը։ Կարելի՞ յէ արդյոք այսուհետեւ հանդուրժել այս յերկությունը, այս յերկերեսանությունը։ Պարզ ե, վոր այլնոչ մոչ մի բոլե չի կարելի հանդուրժել։ Յերկուսից մեկը. կամ

ոսպողիցիան կամենում ե լուրջ խոսել կուսակցության հետ, —ե այն ժամանակ նա պետք ե վար նետի դիմակը. կամ նա մտադիր է այսուհետեւ ել պահպանել յերկու դեմք, բայց այն ժամանակ նա ստիպված պետք է լինի մնալ կուսակցությունից դուրս: (Զայնիք—«Ճիշտ ե»):

թ) Բոլշևիզմի տրադիցիաների մասին: Ընկ. Կամենեվը հավատացնում է, թե մեր կուսակցության տրադիցիաների մեջ, բոլշևիզմի տրադիցիաների մեջ չկա այնպիսի բան, վոր կարնլի լինի կուսակցության անդամից պահանջել հրաժարումն վորոշ հայացքներից, վորոնք անհամատեղելի յեն մեր կուսակցական դադարիաբախոսության հետ, մեր ծրագրի հետ: Արդյոք ճի՞շտ ե սա: Իհարկե, ճիշտ չե: Ե՛լ ավելին. սա ստություն ե, ընկերներ: Մի՞թե դա փաստ չե, վոր մենք բոլորս, Կամենեվի հետ միասին, վտարել ենք կուսակցությունից Մյասնիկովին ու մյասնիկովականներին: Ինչի՞ համար ենք մենք վտարել նրանց: Հենց նրա համար, վոր նրանց մենչեւիկան հայացքներն անհամատեղելի դուրս յեկան կուսակցության հայացքների հետ: Մի՞թե դա փաստ չե, վոր մենք բոլորս, Կամենեվի հետ միասին, վտարել ենք կուսակցությունից «բանվորական ոպողիցիայի» մի մասին: Իսկ ինչի՞ համար ենք մենք վտարել նրանց: Հենց նրա համար, վոր նրանց մենչեւիկան հայացքներն անհամատեղելի դուրս յեկան մեր կուսակցության հայացքների հետ: Իսկ ինչի՞ համար կուսակցությունից վտարեցինք Ասովակուն, Թաշկովսկուն: Ինչի՞ համար կոմինտերնից վտարեցինք Մասլովին, Ռուտ Ֆիշերին, Կացին ու Ժյուլևներին: Նրա համար, վոր նրանց հայացքներն անհամատեղելի դուրս յեկան կոմինտերնի դադարիաբախոսության հետ, չամկել դադարիաբախոսության հետ: Մեր կուսակցությունը լենինյան կուսակցություն չեր լինի, յեթե նա թույլատրելի համարեր հակալենիյան տարրերի գոյությունը մեր կազմակերպությունների կազմի մեջ: Այլպիսի դեպքում ել ինչո՞ւ մեր կուսակցության մեջ չմտցնենք մենչեւիկներին: Ի՞նչպես վարելոք այնպիսի մարդկանց հետ, վորոնք, լինելով մեր կուսակցության մեջ, գլորվել են գեղի մենչեւիզմ և պրոպագանդա յեն մղում իրենց հակալենիյան հայացքների համար: Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել լինիյան կուսակցության ու այդպիսի մարդկանց միջև: Ընկ. Կամենեվը զրպարտում է մեր կուսակցությանը, նա իր կապերը խղում է մեր կուսակցության տրադիցիաներից, նա կապերը խղում է բոլշևիզմի տրադիցիաներից, պնդելով, թե կարե-

լի յե մեր կուսակցության կազմի մեջ հանդուրժել մարդկանց, վորոնք դավանում ու քարոզում են մենչեւկյան հայացքներ: Յեվ հենց այն պատճառով, վոր ընկ. Կամենեմբը, իսկ նրա հետ միասին նաև ամբողջ ոպողիցիան, վունահարում են մեր կուսակցության հեղափոխական տրագիցիաները, — հենց այդ պատճառով և կուսակցությունը զնում ոպողիցիայի՝ իր հակալենինյան հայացքներից հրաժարվելու հարցը:

գ) Ռապորտիչայի կարծեցյալ սկզբունքայնությունը: Ընկ. Կոմիտենելը հավատացնում է, թե իր և մյուս ոպողիցիոներների համար դժվար է իրենց հայացքներից հրաժարվելը, վորովհետեւ նրանք սովոր են բոլշևիկորեն պաշտպանելու իրենց հայացքները: Նա ասում է, թե ոպողիցիայի կողմից անսկզբունքայնություն լիներ, յեթե նա հրաժարվեր իր հայացքներից: Այսպիսով, գուրս են գալիս, վոր ոպողիցիայի պարագլուխները բարձր-սկզբունքային մարդիկ են: Արդյոք զա իսկապես ճի՞շտ է, ընկերնե՛ր: Արդյոք իսկապէ՞ս նրանք, ոպողիցիայի պարագլուխները, բարձր են դնահատում իրենց սկզբունքները, իրենց հայացքները, իրենց համոզմունքները: Ինչվոր նման չի գրան, ընկերնե՛ր: Նման չի, յեթե նկատի ունենանք ոպողիցիոն բլոկի գոյացման պատմությունը: (Ծիծաղ): Բանը բոլորովին հակառակն է: Պատմությունն ասում է, փաստերն ասում են, վոր գեռես վոչ վոք այնպես հեշտ կերպով չի ցատկել մի կարգի սկզբունքներից գեպի այլ կարգի սկզբունքներ, գեռես վոչ վոք այնպես հեշտ ու աղատ կերպով չի փոխել իր հայացքները, ինչպես մեր ոպողիցիայի պարագլուխները: Ինչո՞ւ այժմ ել նրանք չհրաժարվեն իրենց հայացքներից, յեթե այդ պահանջում են կուսակցության շահերը:

Ահա ձեզ միքանի որինակ տրոցկիզմի պատմությունից:

Հայտնի յե, վոր Լենինը կուսակցությունը հավաքելով 1912 թ. Պրագայում գումարեց բոլշևիկների կոնֆերենցիան: Հայտնի յե, վոր այդ կոնֆերենցիան մեծագույն նշանակություն ունեցավ մեր կուսակցության պատմության մեջ, վորովհետև նաև սահման գրեց բոլշևիկների ու մենշևիկների միջև և բոլշևիկների կազմակերպություններն ամբողջ յերկրությունում մեկ միավորեց միասնական բոլշևիկյան կուսակցության մեջ: Հայտնի յե, վոր նույն 1912 թ. տեղի ունեցավ ոգոստոսյան բլոկի մենշևիկյան խորհրդակցությունը Տրոցկու գլխավորությամբ: Այնուհետև, հայտնի յե, վոր այդ խորհրդակցությունը պատերազմ հայտարարեց բոլշևիկյան կոնֆերենցիային և կոչ արեց բանվորական կաղ-

մակերպություններին՝ վերացնելու լենինյան կուսակցությունը՝ իսկ այն ժամանակ Տրոցկու ողոստոսյան բլոկի խորհրդակցությունն ինչք համար եր մեղադրում Պրադայի բոլշևիկյան կոնֆերենցիային։ Բոլոր մահացու մեղքերի համար։ Նա մեղադրում եր նրան բռնատիրության համար, հերձվածողության համար, պետական հեղաշրջում կազմակերպելու և, սատանան գիտե, թե եւ ինչի համար։ Ահա թե ինչպիսի կարծիք եր հայտնում այն ժամանակ ողոստոսյան բլոկի խորհրդակցությունը։ Ինտերնացիոնալին տված իր հայտարարության մեջ Պրադայի բոլշևիկյան կոնֆերենցիայի մասին։

«Խորհրդակցությունը հայտարարում եւ, վոր այդ կոնֆերենցիան (1912 թ. Պրադայի բոլշևիկյան կոնֆերենցիան— ի. Ստ.) կուսակցության դրաշին բռնատիրելու բացահայտ փորձ եւ մի խումբ անձերի, վորոնք բոլորովին դիտակցարար դեպի պառակտում ելին տանում կուսակցությունը— և իր խոր ցալին եւ արտահայտում այն առթիվ, վոր միքանի կուսակցական կազմակերպություններ ու ընկերներ զոհ են դարձել այդ խարեյության ու դրանով աջակցել լենինյան հերձված պառակտողական ու բռնատիրական քաղաքականությանը։ Խորհրդակցությունն իր համոզմունքն է արտահայտում, վոր Ռուսաստանում ու արտասահմանում բոլոր կուսակցական կազմակերպությունները կրողոքեն կատարված պետական հեղաշրջման դեմ, չեն նաևաչի կոնֆերենցիայի կողմից ընտրով ված կենտրոնական ինստանցիաները և բոլոր միջոցներով կաջակցեն կուսակցության միասնականության վերականգնմանը իրոք ընդհանուր կուսակցական կոնֆերենցիայի դումարման ոգնությամբ» (Ողոստոսյան բլոկի՝ Անտերնացիոնալին տված հայտարարությունից, վոր հրապարակված է 1912 թ. մարտի 26-ի «Ֆորվերտաում»)։

Դուք տեսնում եք, վոր ամեն ինչ կա այստեղ. և՛ լենինյան հերձված, և՛ բռնատիրություն, և՛ պետական հեղաշրջում (տերմիդո՞ր)։

Յեվ ի՞նչ։ Անցալ միքանի տարի, — և Տրոցկին հրաժարվեց բոլշևիկյան կուսակցության վերաբերմանը ունեցած իր այս հացքներից։ Յեվ վո՛չ միայն հրաժարվեց, այլև փորսող տալով յեկավ դեպի բոլշևիկյան կուսակցությունը, մտնելով նրա մեջ, վորպես նրա ակտիվ անդամներից մեկը։ (Ծիծաղ)։

Այս ամենից հետո ի՞նչ հիմք կա յենթագրելու, թե Տրոցկին

ու տրոցկիստները չեն կարողանա մեկ ել հրաժարվել իրենց հայցքներից՝ մեր կուսակցության մեջ նկատվող տերմիգորական տենդենցիների նկատմամբ («պետական հեղաշրջում»), բռնաւորության նկատմամբ և այլն:

Այլ որինակ նույն բնագավառից: Հայտնի յե, վոր Տրոցկին 1924 թ. վերջում բրոցյուր հրատարակեց «Հոկտեմբերի դասերը» անունով: Հայտնի յե, վոր Տրոցկին այդ բրոցյուրում կամենելի ու Զինովյեվին վորակել է վորտես մեր կուսակցության աջ, կիսամենշեկիյան թերը: Հայտնի յե, վոր Տրոցկու բրոցյուրը մեր կուսակցության մեջ ամբողջ դիսկուսիայի պատճառ ծառայեց: Յեկ ի՞նչ: Անցավ ընդամենը մաս մի տարի, —և Տրոցկին հրաժարվեց իր հայացքներից, ազգաբարեկով, վոր Զինովյեվին ու կամենելը ներկայացնում են մեր կուսակցության վո՛չ թե աջ թեր, առ նրա ձախ, հեղափոխական թեր:

Մի որինակ և՝ արդեն զինովյեվական խմբի պատճության բնադավառից: Հայտնի յե, վոր Զինովյեվն ու կամենելը արոցկիպմի դեմ զրել են մի ամբողջ կույտ բրոցյուրներ: Հայտնի յե, վոր զեռևս 1925 թ. Զինովյեվն ու կամենելը հայտարարեցին՝ ամբողջ կուսակցության հետ մեկտեղ՝ արոցկիպմի ու լենինիքմի անհամատեղիկության մասին: Հայտնի յե, վոր Զինովյեվն ու կամենելը՝ ամբողջ կուսակցության հետ մեկտեղ՝ բանաձեկը ելին անցկացնում ինչպես մեր կուսակցության համապնդումարիներում, այնպես և կոմինտերնի Վ կոնգրեսում արոցկիպմի մանրութուական թերման մասին: Յեկ ի՞նչ: Դրանից հետո մի տարի ել չանցավ, և նրանք հրաժարվեցին իրենց հայացքներից, հետ կացան նրանցից ու ազգաբարեցին, թե Տրոցկու խումբը մեր կուսակցության կազմի մեջ հանդիսանում է իսկական լենինյան ու Հեղափոխական խումբ: (Պայներ—«Փոխազարձ ամենի՛ստիա»):

Սրանք են, ընկերներ, փաստերը, վորոնց քանակը ցանկության պարագայում կարելի կլիներ մեծացնել:

Սրանից արդյոք պարզ չե՞ն, վոր ոպոզիցիայի պարագլուխների բարձր սկզբունքայնությունը, վորի մասին այստեղ պատճում ե մեզ ընկ. կամենելը, մի հերթափթ և, վոր ընդհանուր վոչինչ չունի իրականության հետ: Արդյոք պարզ չե՞ն, վոր մեր կուսակցության մեջ գեսես վոչ վոքի չի հաջողվել այնպես հեշտ ու ազտ կերպով հրաժարվել: իր պլառունքներից, ինչպես Տրոցկուն, Զինովյեվին ու կամենելին: (Ծիծաղ): Հարց ե ծագում. ի՞նչ հիմք կա յենթաղբելու, թե ոպոզիցիայի պարագլուխները, վորոնք մի-

Համար անդամ հրաժարվել են իրենց սկզբունքներից, իրենց հայցքներից, չեն կարողանա մեկ անգամ ևս հրաժարվել դրանցից: Արդյոք պարզ չե՞ն, վոր ոպողիցիայի իր մենշեփկյան հայացքներից հրաժարվելու մեր պահանջներն այնպես ել ծանր չեն ոպողիցիայի պարագլութեների համար, ինչպես դա կերպարանել ե ջանում ընկ. Կամենելու: (Ծիծաղ): Առաջին անգամը չե, վոր նրանք ստիպված են հրաժարվել իրենց հայացքներից, —ինչո՞ւ նրանք մեկ անգամ ել չհրաժարվեն դրանցից: (Ծիծաղ):

Դ) Կա՛մ կուսակցությունը, կա՛մ ոպողիցիան: Կամենելը հավատացնում է, թե ոպողիցիաներներից չե կարելի պահանջել, վոր հրաժարվեն իրենց վորոշ հայացքներից, վորոնք անհամատեղիլի յեն դարձել կուսակցության դաշտաբարախոսության ու ծրագրի հետ: Յես արդեն ասացի, թե վորքան անլուրջ ե կամենելը այդ հավատացնումը, յեթե նկատի ունենանք ոպողիցիոն բլոկի անցյալն ու ներկան: Բայց մի բոսկե յենթադրենք, թե կամենելը իրավացի յե: Իսկ այդ ժամանակ ի՞նչ ե ստացվում: Կարո՞ղ ե արդյոք կուսակցությունը, մեր կուսակցությունը հրաժարվել իր հայացքներից, համոզմունքներից, սկզբունքներից: Կարելի՞ յե արդյոք մեր կուսակցությունից պահանջել, վոր նա հրաժարվելը, իր սկզբունքներից: Կուսակցության մեջ կազմվել ե վորոշակի համոզմունք այն մասին, վոր ոպողիցիան պետք ե հրաժարվի իր հակալենինյան հայացքներից, վոր առանց զբան նա հարկադրված կլինի դուրս թռչել կուսակցությունից: Յեթե չի կարելի սպողիցիայից պահանջել հրաժարումն իր համոզմունքներից, հասկ ինչո՞ւ կարելի յե կուսակցությունից պահանջել հրաժարումն ոպողիցիայի վերաբերմամբ ունեցած իր հայացքներից ու համոզմունքներից: Չե՞ վոր ըստ կամենելը՝ այնպես և դուրս դալիս, թե սպողիցիան չի կարող հրաժարվել իր հակալենինյան հայացքներից, իսկ կուսակցությունը պետք ե հրաժարվի իր հայացքներից: Ել ո՞ւր ե այսոեղ արամարանությունը: (Ծիծաղ: Ծափակարություններ): Ընկ. կամենելը հավատացնում է, թե սպողիցիան մինչեւ վերջը պաշտպանում են իրենց հայացքները: Յես քիչ եմ հավատում սպողիցիայի պարագլությունների արիությանն ու սկզբունքային կոփվածությանը: Յես առանձնապես քիչ եմ հավատում, որինակ, Զինովյելի ու կամենելի ա-

բիությանը (ծիծաղ), վորոնք յերեկ ջարդումիշուր ելին անում Տրոցկուն, իսկ այսոր վողջապուրվում են նրա հետ։ (Մի այլն՝ «Սովոր են աթուրմա խաղալու»)։ Բայց յենթադրենք մի բոսկ, թե մեր ուղղողիցիայի պարագուխների մոտ զեռիս մնացել և արկության ու սկզբունքային կոփածության մի վորոշ բաժին։ Ի՞նչ հիմք կա յենթադրելու, թե կուսակցությունն ավելի պակաս արիություն ու սկզբունքային կոփածության ունի, քան թե, ասենք, Զինովյելը, Կամենելը կամ Տրոցկին։ Ի՞նչ հիմք կա յենթադրելու, թե կուսակցության համար ավելի հեշտ կլինի հրաժարվել իր համոզմունքներից ոսպողիցիայի վերաբերմամբ, նրամենշէիկական հայացքների և կուսակցության զաղափարախոսության ու ծրագրի անհամատեղելիության վերաբերմամբ, քան թե ոսպողիցիայի պարագությունների համար, վորոնք շարունակ ձեռնոցների նման փոխաւմ են իրենց հայացքները։ (Ծիծաղ)։ Արանով պարզ չե՞ արդյոք, վոր Կամենելը կուսակցությունից պահանջում ե հրաժարարումն նրա (կուսակցության) հայացքներից՝ ոսպողիցիայի ու իր մենշէիկյան սխալների վերաբերմամբ։ Արդյոք չափազանց հեռու չի՞ գնում ընկ. Կամենելը։ Նա արդյոք չի՞ համաձայնի ընդունելու, վոր վտանգավոր և այդքան հեռու դնալը։ Հարցն այսպես ե ծառացած։ կա՛մ կուսակցությունը, կա՛մ ոսպողիցիան։ Կա՛մ ոսպողիցիան հրաժարվում և իր հակալենինյան հայացքներից, կա՛մ նա չի անի այդ, —և այն ժամանակ կուսակցության մեջ նրա հիշատակն անդամ չի մնա։ (Զայներ—«Ճի՛շտե»։ Ծափահարություններ)։

Ե) Ոսպողիցիան իր կապերը խզել ե բոլշևիզմի տրադիցիաներից։ Կամենելը պնդում ե, թե բոլշևիկյան տրադիցիաների մեջ չկա այնպիսի բան, վորի հիման վրա կարելի լինի կուսակցության անդամներից հրաժարումն պահանջել իրենց հայացքներից։ Ընկ. Ռիկովը միանդամայն ասպազուցեց, վոր դա սխալ ե։ Փատերն ասում են, վոր Կամենելն ուղղակի սուտ և ասում։ Բայց ահա մի հարց։ Կա՞ արդյոք բոլշևիկյան տրադիցիաների մեջ այն, ինչ վոր թույլ ե տվել իրեն ու շարունակում ե թույլ տաշուղիցիան։ Ոսպողիցիան կազմակերպել ե Փրակցիա և այն կուսակցության ե փոխարկել մեր բոլշևիկյան կուսակցության ներսում։ Բայց այդ վո՞րտեղ ե լսված, թե բոլշևիկյան տրադիցիաները թողնում են, վոր մեկնումեկը թույլ տա իրեն այլպիսի այլանդակություն։ Ի՞նչպես կարելի յե բոլշևիկյան տրադիցիաների մասին խոսել, զրա հետ միասին թույլ տալով, վոր պա-

ուակտում լինի կուսակցության մեջ և նոր հակաբոլշևիկյան կուսակցություն գոյանա նրանում : Այնուհետեւ : Ոպողիցիան անլեզալ տպարան և կաղմակերպել, բլոկ կնքելով բուրժուական ինտելիգենտների հետ, վորոնք, իրենց հերթին, դուրս յեկավ, վոր ըլոկ են կազմել ակնհայտ սպիտակ-դվարդիականների հետ : Հարց ե ծագում . ի՞նչպես կարելի յե բոլշևիզմի տրադիցիաների մասին խոսել, թույլ տալով այդ այլանդակությունը, վոր սահմանակցում ե կուսակցությանն ու խորհրդային իշխանությանն ուղղակի դավաճաններուն : Վերջապես, ոպողիցիան կաղմակերպել ե հակակուսակցական, հակախորհրդային ցույց, դիմելով փողոցին, դիմելով վոչ-սպրոլետարական տարրերին : Բայց ի՞նչպես կարելի յե բոլշևիկյան տրադիցիաների մասին խոսել, դիմելով փողոցին ընդդեմ իր կուսակցության, ընդդեմ իր խորհրդային իշխանության : Այդ վո՞րոտեղ ե լսված, վոր բոլշևիկյան տրադիցիաները թույլ տային այդպիսի այլանդակություն, վոր սահմանակցում ե ուղղակի հակահեղափոխականությանը : Արդյոք պարզ չե՞ , վոր ընկ . Կամենեվը նրա համար ե խոսում բոլշևիկմի տրադիցիաների մասին, վորպեսզի այդ տրադիցիաներից իր կապերի խղումը քողարկի հանուն իր հակաբոլշևիկյան խմբի շահերի : Փողոցին դիմելուց ոպողիցիայի համար վոչինչ չստացվեց, վորովհետեւ նա չնչին խումբ դուրս յեկավ : Բայց դա վո՞չ թե նրա մեղքն ե , այլ դժբախտությունը : Իսկ ի՞նչ կլիներ, յեթե մի քիչ ամելի ուժ ունենար ոպողիցիան : Պարզ չե՞ արդյոք, վոր փողոցին դիմելն ուղղակի պոտոչի կիոխարկելեր խորհրդային իշխանության դեմ : Մի՞թե դժվար ե հասկանալ, վոր ոպողիցիայի այդ փորձը, ըստ բանի եյության, վոչնչով չի տարբերվում ձախ ես-երների՝ 1918 թվականի հայտնի փորձից : (Զայներ—«Ճի՞շտ ե») : Ըստ կանոնի՝ ոպողիցիայի այդպիսի փորձերի համար մենք պետք ե վոր նրանց բոլորին ձերբակալեցինք նոյեմբերի 7-ին : (Զայներ—«Ճի՞շտ ե») : Յերկարատև ծափահարություններ) : Մենք այդ բանը չարինք միայն այն պատճառով, վոր իրդացինք ոպողիցիային, մեծահոգություն ցուցաբերեցինք և կամենում եյինք նրան հնարավորություն տալ խելքի դալու : Իսկ նրանք մեր մեծահոգությունը համարեցին թուլություն : Պարզ չե՞ , ընկերներ, արդյոք, վոր Կամենեվի խոսակցությունները բոլշևիկյան տրադիցիաների մասին մի դատարկ ու կեղծ շաղակրատանք են, վոր պետք ե քողարկի ոպողիցիայի կապերի խղումը բոլշևիզմի տրադիցիաներից :

զ) Կարծեցյալ միասնականության ու խւկական միասնականության մասին եր յերգում : Նա ուղղակի գեղգեղում եր, կուսակցության խնդրելով ողնության դաշտ ու միասնականություն իրագործել «ինչպես ել լինի» : Նրանք, տեսնո՞ւմ եք, գեմ են յերկու կուսակցության քաղաքականության : Նրանք, տեսնո՞ւմ եք, կողմանակից են կուսակցության միասնականության «ինչպես ել լինի» : Այնինչ մեղ հաստատապես հայտնի յե, վոր հենց այն մամենափն, յերբ կամենելին այստեղ յերգում եր կուսակցության միասնականության մասին, նրա համախոհներն իրենց անլեզալժողովներում բանաձեւեր ելին ընդունում այն մասին, վոր ոպողիցիալի հայտարարությունը միասնականության նկատմամբ մի մանյովը ե, վորի նպատակն ե պահպանել իրենց ուժերը և չարունակել իրենց պառակտողական քաղաքականությունը : Մի կողմից, լենինյան կուսակցության համագումարում յերգեր միասնականության մասին : Մյուս կողմից, ոպողիցիոնների ընդհատակյա աշխատանքը կուսակցությունը պառակտելու, յերկրորդ կուսակցություն կազմակերպելու, կուսակցության միասնականությունը խարիսխելու ուղղությամբ : Սա նրանց մոտ կոչվում է միասնականություն «ինչպես ել լինի» : Ժամանակը չե՞ արգյուք այս հանցավոր խաղը թողնելու :

Կամենելիվը խոսում եր միասնականության մասին : Միասնականություն ո՞ւմ հետ : Միասնականություն կուսակցությա՞ն, թե Շչերբակովի հետ : Արդյոք ժամանակը չե՞ ըմբռնելու, վոր մեկ միասնականության մեջ չի կարելի միացնել և' կուսակցությունը, և' Շչերբակովին : Կամենելիվ խոսում եր միասնականության մասին : Միասնականություն ո՞ւմ հետ : Մասլովի ու Սովարինի՞, թե Կոմինտերնի ու Համկե-ի հետ : Արդյոք ժամանակը չե՞ ըմբռնելու, վոր չի կարելի խոսել Համկե ու Կոմինտերնի միասնականության մասին, միասնականության մեջ մնալով Մասլովի ու Սովարինի հետ : Արդյոք ժամանակը չե՞ ըմբռնելու, վոր լենինյան հայացքները չի կարելի միացնել ոպողիցիալի մենշևիկյան հայացքների հետ : Լենինին Արբամովիչի հետ միացնել : Վո՛չ, ընկերնե՛ր : Ժամանակն ե խաղը թողնելու :

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր կամենելիվի խոսակցությունները «ինչպես ել լինի» միասնականության մասին՝ մի փարսեցիական խաղ ե, վոր նպատակ ունի խարելու կուսակցությանը :

Մեզ իսկական միասնականություն և հարկավոր և վոչ թե միասնականություն խաղալը։ Մենք մեր կուսակցության մեջ ունե՞նք արդյոք իսկական, լենինյան միասնականություն։ Այո՛, ունենք։ Յեթե մեր կուսակցության 99 տոկ. քվեարկում ե հոգուտ կուսակցության ու ընդդեմ ոպողիցիայի, ապա դա իսկական ուստույք պրոլետարական միասնականություն ե, վորպիսին գեռես չի յեղել մեր կուսակցության մեջ։ Ահա ձեզ կուսակցության մի համարումար, վորի կազմի մեջ չկա վոչ մի ոպողիցիոն պատգամակոր։ (Ծափահարություններ)։ Ի՞նչ ե սա, յեթե վոչ մեր լենինյան կուսակցության միասնականությունը։ Հենց այս մեղնում կոչվում բոլշևիկյան կուսակցության լենինյան միասնականություն։

Է) «Ոպողիցիայի բանը բո՞ւրդ ե»։ Կուսակցությունն ամեն բան արել ե, ինչ վոր անել կարելի յեր, վորտեսի լենինյան ուղղու վրա դնի ոպողիցիային։ Կուսակցությունն առաջելադրույն չափով մեղմություն ու մեծահոգություն և յերեան բերել, վորպեսովի հնարավորություն աված լինի ոպողիցիային իւելքի գալու և իր սխալներն ուղղելու։ Կուսակցությունն ոպողիցիային առաջարկեց ամրապնդ կուսակցության առաջ, բացահայտորեն ու աղոնիվ կերպով հրաժարվել իր հակալենինյան հայացքներից։ Կուսակցությունն ոպողիցիային առաջարկեց ընդունել իր սխալները և նշափակել զրանք, վորպեսզի ընդմիշտ աղասավի դրանցից։ Կուսակցությունն ոպողիցիային առաջարկեց լիովին զինաթափ լինել և՝ զաղավարային, և՝ կազմակերպական տեսակետից։

Կուսակցությունն ի՞նչ բանի յե ձգտում սրանով։ Նա ձգտում է այն բանին, վոր վերջ տա ոպողիցիային ու սննդի զրական աշխատանքի։ Նա ձգտում է այն բանին, վոր վերջագես վերացնի ոպողիցիան ու հնարավորություն ստանա ընդհաւուզ ձեռնարկելու շինարարության մեր մեծ դործին։ Լենինն ասում եր ՀՀամագումարում։ «Այժմ ոպողիցիա պետք չե, այժմ վերջ ոպողիցիային, նրա բանը բուրդ ե, այժմ բավական ե, վորքան ոպողիցիա ունեցանք»։ Կուսակցությունը կամենում ե, վոր Լենինի այս լողունզը վերջագես իրավործված լինի մեր կուսակցության շարքերում։ (Յերկարանկ ծափահարություններ)։ Զինաթափ կլինի ոպողիցիան—լավ։ Զի կամենում նա զինաթափ լինել—ինքներս զինաթափ կանենք։ (Զայներ. «Ճի՛շտ ե»։ Ծափահարություններ)։

Կամենևի ճառից յերեսում ե, վոր ոպողիցիան մտադիր չելլովին զինաթափակիվել: Ապողիցիայի գեկտեմբերի Յ-ի հայտարարությունը նույնն է ասում: Բայտ յերեսութիւն, ոպողիցիան գերադասում ե մնալ կուսակցությունից դուրս, — վորեւ վո՛չ սոսկալի, վո՛չ առանձին, վո՛չ զարմանալի բան չկա այն բանում, վոր նրանք դերադասում են մնալ կուսակցությունից դուրս, վոր նրանք իրենց կտրում-զցում են կուսակցությունից: Յեթե աչքի անցնենք մեր կուսակցության պատմությունը, ապա պարզ կդառնա, վոր միշտ, մեր կուսակցության վորոշ լուրջ ըրջադարձերի ժամանակ հին պարագլուխների վորոշ մասը դուրս եր ընկնում բոլցեկիյան կուսակցության սայլակից, տեղ մաքրելով նոր մարդկանց համար: Շրջադարձ՝ դա լուրջ գործ ե, ընկերնե՛ր: Շրջադարձը վտանգավոր ե նրանց համար, ովքեր ամուր չեն նստած կուսակցական սայլակում: Շրջադարձի ժամանակ վոչ ամեն վոք կարող ե հավասարակշռություն պահպանել: Շուր ամիսը սայլակի ճամփան, —ու մեկ ել տեսար՝ վոմանք ընկան նրանից: (Ծափահարություններ):

Վերցնենք 1903 թվականը, մեր կուսակցության յերկրորդ համագումարի ժամանակաշրջանը: Դա այն ժամանակն էր, յերբ կուսակցությունը լիբերալների հետ համաձայնություն կնքելուց շրջադարձ եր կատարում դեսպի մահացու պայքար ընդդեմ բուրժուազիայի, ցարիզմի գեմ պայքար նախապատրաստելուց՝ դեսպի բացահայտ կոիվ նրա դեմ—ցարիզմն ու ֆեոդալիզմը լիովին ջախարակության համար: Այն ժամանակ կուսակցության դլուխ ելին կանգնած վեց հոգի՝ Պլեխանով, Զասուլիչ, Մարտով, Լենին, Ակսելլով, Պոտրեսով: Շրջադարձն որհասական դուրս յեկալ այդ վեցյակի հինգ անդամի համար: Նրանք դուրս ընկան սայլակից: Լենինը մնաց յեկալի թվով: (Ծափահարություններ): Այնպես ստացվեց, վոր կուսակցության հին պարագլուխները, կուսակցության հիմնադիրները (Պլեխանով, Զասուլիչ, Ակսելլով) պլյուս յերկու յերիտասարդ (Մարտով, Պոտրեսով) դեմ դուրս յեկան մեկին, նույնպես յերիտասարդ՝ ընկ. Լենինին: Յեթե դուք իմանայք, թե այն ժամանակ վորքան վայնասուններ, վողք ու վոռնոցներ կային այն մասին, թե կուսակցությունը կկործանվի, կուսակցությունը չի դիմանա, վոր առանց հին պարագլուխների վոչինչ չի դուրս գա: Սակայն վայնասուններն ու

գանդատները վերացան, իսկ փաստերը մնացին։ Իսկ փաստերն այնպէս ելին, վոր հենց չնորհիվ հնդյակի հետանալուն՝ կուսակցությանը հաջողվեց ճանապարհ գուրս դալ։ Այժմ պարզ ե յուրաքանչյուր բոլշևիկի համար, վոր առանց հնդյակի դեմ լենինի մզած վճռական սպայքարի, առանց հնդյակին հետ վանելու, մեր կուսակցությունը չեր կարողանա համախմբվել վորպես բոլշևիկների կուսակցություն, վորն ընդունակ ե պրոլետարներին առաջնորդելու հեղափոխության՝ ընդդեմ բուրժուազիայի։ (Զայներ—«Ճիշտ» ե»)։

Վերցնենք հետեւյալ ժամանակաշրջանը, 1907-08 թ.թ. ժամանակաշրջանը։ Դա այն ժամանակաշրջանն էր, յերբ մեր կուսակցությունը ցարիզմի դեմ մզվող բացահայտ հեղափոխական պայքարից շրջադարձ եր կատարում դեպի սպայքարի շրջանցիկ ուղիները, դեպի բոլոր ու ամեն տեսակի լեզալ հնարավորությունների ուստադուրծում՝ ապահովաբարական դանձարկղներից սկսած մինչև Դումայի ամբիոնը։ Դա նահանջի ժամանակաշրջանն էր այն բանից հետո, յերբ մենք պարտվեցինք 1905 թվի հեղափոխության մեջ։ Այդ շրջադարձը մեղանից պահանջում էր պայքարի նոր մեթոդների յուրացում, վորպեսդի հավաքելով մեր ուժերը, նորից բացահայտ հեղափոխական պայքարի գուրս դանք ցարիզմի դեմ։ Բայց այդ շրջադարձն որհասական դուրս յեկավ մի ամբողջ շարք հին բոլշևիկների համար։ Սայլակից գուրս ընկալ Ալեքսինսկին։ Նա մի ժամանակ ամենելին ել վատ բոլմեկ չեր։ Դուրս ընկալ Բոլդանովը։ Նա մեր կուսակցության լրջագույն պարագլուխներից մեկն էր։ Դուրս ընկալ Ռոժեկովը՝ միը կուսակցության կե-ի նախկին անդամը։ Յեվ այսպես շարունակ։ Վայնասունները ու վոռնոցներ կուսակցության կործանման մասին այն ժամանակ թերեւս պակաս չեյին, քան 1903 թվականին։ Սակայն վայնասունները վերացան, փաստերը մնացին։ Իսկ փաստերը խոսում ելին այն մասին, վոր մեր կուսակցությունը չեր կարողանա ճանապարհ գուրս դալ պայքարի նոր պայմաններում, յեթե չմաքրվեր տատանվող ու հեղափոխության գործն արգելակող մարդկանցից։ Ի՞նչ բանի յեր ճպառում այն ժամանակ լենինը։ Միայն մեկ բանի։ ըստ հնարավորության շուտ աղատել կուսակցությունն անկայուն ու նիշվացող տարրերից, վորպեսդի նրանք չխանգարեն, վոտքի տակ ընկնելով։ (Ծափակարություններ)։

Ահա թե, ընկերներ, ինչպես ե աճել մեր կուսակցությունը։

Մեր կուսակցությունը կենդանի որդանիզմ է: Ինչպես և ամեն մի որդանիզմում, նրա մեջ տեղի յեւ ունենում նյութերի փախանակություն: Հինը, վաղեմացողն ընկնում է (ծափահարություններ), նորը, աճողը՝ ապրում ու զարգանում: (Ծափահարություններ): Վոմանք մի կողմ են քաշվում՝ և' վերևում, և' ներքեւում: Աճում են նորերը՝ և' վերևում, և' ներքեւում, առաջ տանելով գործը: Այսպես ե աճել մեր կուսակցությունը: Այսուհետեւ ել նա աճելու յեւ այդպես:

Նույն բանը պետք է ասել մեր հեղափոխության ներկայ ժամանակաշրջանի մասին: Մենք այժմ ապրում ենք մի ժամանակաշրջան, յերբ շրջադարձ է կատարվում արդյունաբերության ու գյուղատնտեսության վերականգնումից դեպի ամբողջ ժողովրդական տեխնիկային անտեսության ռեկոնստրուկցիան, դեպի նրա վերակառուցումը տեխնիկական նոր բազայի վրա, յերբ սոցիալիզմի կտուցումն արդեն հանդիսանում է վո՛չ թե հեռանկար միայն, այլ կենդանի պրակտիկ մի դործ, վոր պահանջում է ներքին ու արտաքին կարգի լրջադույն դժվարությունների հաղթահարումն: Դուք դիմեք, վոր այդ շրջադարձն որհասական դուրս յեկալ մեր սպողիցիայի պարագլուխների համար, վորոնք վախեցան նոր դժվարություններից ու մատադրվեցին կապիտուլացիայի կողմը: Կարձնել կուսակցությունը: Յեվ յեթե այժմ սայլակից դուրս ընկնեն մի քանի պարագլուխներ, վորոնք չեն ուղում պինդ նստել սայլակում, դրանում վոչ մի դարմանալի բան չկա: Դա միայն կուսակցությանը կազմատի այնպիսի մարդկանցից, վորոնք վոտքի տակ են ընկնում և կուսակցությանը խանդարում են առաջ շարժիել: Բայց յերևութին, նրանք լուրջ են կամենում ազատիել մեր կուսակցական սայլակից: Խօնչ արած, յեթե հնոտի դարձող վաղեմի պարագլուխներից վոմանք մտադիր են դուրս ընկնել սայլակից, հենց այդ ել նրանց ճամփան ե: (Փոքորկալից յերկարաժամկետ ծափահարություններ): Ամբողջ համագումարը վոտքի յի կանգնում ու ովացիս սարքում ընկ. Ստալինին):

«Համարիւթենական կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) կուսակցության XV համազումարը», սպագական հաշվեալություն, և՛ 37—80, 358—367, կուսհրատ,

• 1935 թ.:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄ-  
Կ(Պ)Կ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

5-

I. Համաշխարհային կապիտալիզմի անող նզմաժամը և ԽՍՀՄ-ի արտա-  
քին դրույքունը . . . . .

5

1. Համաշխարհային կապիտալիզմի եկոնոմիկան ու արտաքին չուկաների  
համար մզգող կռվի սրումը . . . . .

5-

2. Կապիտալիզմի միջազգային քաղաքականությունը և իմպերիալիստա-  
կան նոր պատերազմների նախապատրաստումը . . . . .

10

3. Համաշխարհային հեղափոխական շարժման վիճակն ու հեղափոխական  
նոր վերելքի նախազուշակները . . . . .

15

4. Կապիտալիստական աշխարհը և ԽՍՀՄ . . . . .

17

5. Յեղրակացություններ . . . . .

21

II. Սոցիալիստական շինարարության հաջողություններն ու ԽՍՀՄ-ի  
ներքին դրույքունը . . . . .

24

1. Ժողովրդական տնտեսությունն ամրողությամբ վերցրած . . . . .

25

2. Մեր սոցիալիստական խոշոր արդյունարերության զարգացման  
ահմարը . . . . .

30

3. Մեր զյուզանտեսության զարգացման տեմպը . . . . .

34

4. Յերկրի գտակարգերը, պետական առարատը, կուլտուրական  
զարգացումը . . . . .

43

III. Կառավակցությունը և ոպողիցիան . . . . .

53

1. Կուսակցության վիճակը . . . . .

53

2. Գիտական հանրագումարները . . . . .

60

3. Հիմնական տարակարծությունները կուսակցության ու ոպողիցիայի  
միջն . . . . .

63

4. Իսկ այսուհետև լոնչ . . . . .

72

IV. Բնդիանուր հանրագումար . . . . .

77

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽԲՍՔ . . . . .

79

1. Ընկ. Ռակովսկու ճառի մասին . . . . .


81

2. Ընկ. Կամենեվի ճառի մասին . . . . .

92

Հանրագումարը . . . . .

6806



Պրօ. 1940

Հայերեն թարգմանությունը Խմբագրեց Ս. Կիրակոսյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Պատ. սըբագրիչ Լ. Արալյան

Գլուխակ լիազոր հ-9712, հրատ. № 474

Պատվեր № 135, ամրաժ 10.000

Հանձնված և արտադրություն 16/VII 1937 թ.

Սառըագրված և սպագրելու 14/VIII 1937 թ.

Դինը 80 կոռ.

Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալավերդյան 71



ԳԻԱՀ 804.

450

-084нр.

ЗК 3.  
U - 90

И. СТАЛИН  
ПОЛИТИЧЕСКИЙ ОТЧЕТ  
ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА  
ХV СЪЕЗДУ ВКП(б)  
Армпартиздат, Ереван, 1937г.

11008.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021280

A II  
—  
6952